

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 1-12

ՅՈՒՆՈՒԱՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՃԼԸ. ՏԱՐԻ 2025

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՍԱՆԻՔԸ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՀԱՅՈՑ ՔՈՎ Դ. ԵՒ Ի ՎԵՐՋԻՆ ՄԱՍ

Հ. Եփրեմ Պողոսեան

ՏԻՎՐԻԿԻ ԳԻՒՂԵՐՈՒԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

ԿԱՍՄԱ ԳԻՒՂ. - Նամակով մը խնդրեցի Կասմագիւղացի Պր. Գրիգոր Հատրմեանէ (Վենսէն, Ֆրանսա) իր գիւղի հարսանիքի մասին գրութիւն մը: Հաճեցաւ յղել հետեւեալը:

Նշանախօսութիւն. - «Առանց մօր եւ աղջկան հաւանութիւնը առնելու հայրերը կը վճռեն այդ կամ ոչ: Ներկաներն ալ կը բարեխօսեն «խերով ըլլայ» մաղթանքներով: Երկուստեք խնամիններու համաձայնութենէն շաբաթ մը վերջ, եկեղեցին, երեկոյեան ժամերգութենէ յետոյ, պատշաճ շարականներու երգեցողութեամբ եւ ծնծղաներով նշանօրհնութիւնը տեղի կ'ունենայ, որմէ վերջ եկեղեցոյ գաւիթին մէջ տղուն ծնողքին կողմէ կը հրամցուի օղի եւ անուշեղէն ստասնալով ներկաներէն «Աստուած Ս. պսակին արժանացնէ» մաղթանքը: Ոչ տղան եւ ոչ ալ աղջիկը ներկայ կ'ըլլան նշանօրհնէքին: Նշանուածները մինչեւ ամուսնութիւն իրար չեն տեսներ:

Հարսանիք. - Պսակէն մէկ շաբաթ առաջ նշանուած տղան եւ աղջիկը իրենց

տուները կը լուսցուին մեծ պղնձէ տաշտներու մէջ: Բաղնիքէն վերջ առանձին եկեղեցի հաղորդուելու կ'երթան: Շաբաթ օր կէսօրին հարսնիքը կը սկսի. Տղուն ընտանիքի կողմէ հարսնեւորներ կ'երթան աղջկան ծամերը հիւսելու. այդ առթիւ կ'երգեն յատուկ մասնաւոր մելամաղձոտ երգեր «Հարսը լացնելու համար»: Կիրակի կէսօրէ վերջն ալ սափրիչը փեսան կը սափրէ նուագով, երգով եւ կը ստանայ նոր թաշկինակ մը: Կնքահայրն է, որ կը հագցնէ փեսային նոր հագուստները ամէն մէկ կտորը փեսայի գլխին շուրջ 3 անգամ դարձնելով եւ կրկնելով «Աստուած շնորհաւոր ընէ» մաղթանքը: Ասկէ սկսած փեսան ձեռքին մէջ կ'ունենայ մետաքսէ թաշկինակին մէջ պահուած խնձոր մը մինչեւ պսակի իրիկուներ: Իսկ կնքահօր սուրն ալ նոր թաշկինակով կ'ապուած կ'ըլլայ:

Խուճբով գիւղին մէկ ուխտատեղին կ'երթան, ուր փեսան մոմ մը կը վառէ եւ կ'աղօթէ: Հոն աքաղաղ մը մատաղ կ'ընեն եւ ոչխարի ականջին արիւնով փեսային ճակատը խաչ մը կը գծէ կնքահայրը: Ընթրիքէն վերջ կնքամայրն ու հարսնեւորները երգելով փեսային ձեռքերը կը հինայեն.

նոյնը կ'ընեն աղջկան իր կնքամայրը եւ հարսնեւորները: Ուրախութիւնները կը շարունակուին մինչեւ կէս գիշեր: Աւանդութիւն է, որ կնքահայրը այդ գիշեր փեսային տունը կը գիշերէ:

Հարսնատ. - Երկուշաբթի, ցերեկէն առաջ, երգերով, նուագով կու գան հարսն առնելու: Աղջկան տան դուռը գոց կը գտնեն. կը սկսին երգել.

Լացիք, մայրեր, լացիք,
Մեր հախումն ալ տըլիք,
Ուզածնուդ շափ լացիք:
Մի լաւ, աղուտ աղջիկ,
Հաւս եղար մեզի,
Քեզի կարգողին ալ
Տընակն արի:

Դուռը կը բացուի՝ գոցողին դրամական նուէր մը տրուելէն վերջ: Խնամիները օղիով եւ օշարակներով պատուասիրուելէ յետոյ, դարձեալ երգելով, նուագելով եկեղեցի կ'առաջնորդեն հարսը: Եկեղեցւոյ դուռը հասնելուն, քահանայ եւ դպիր զգեստաւորուած, ծնծղաներով եւ «Թագաւոր գոլով աշխարհ» երգելով, փեսան եւ հարսը կ'առաջնորդեն Սեղանին առջեւ: Արարողութիւնը լրանալէ վերջ, կրկին երգերով, նուագով փեսային տունը կ'ուղղուին: Ծամբու ընթացքին փեսային ու հարսին գլխուն ցորեն ու չամիչ-կաղին կը թափեն տուներէն:

Դրան առջեւ, փեսան հարսին քողին տակէն անոր բերանը կու տայ դգալ մը մեղր. նոյնը կը փոխադարձէ հարսը փեսային բերանը դնելով դգալ մը մեղր – որպէս զի իրենց ամբողջ կեանքին մէջ իրարու հետ անոյշ մնան... Հող տեղի կ'ունենայ աքաղաղի կամ ոչխարի մատաղ մը, որոնց արիւնով խաչ կը քաշուի նորեկ ամուսին ճակատը: Իսկոյն կը սկսի շուրջալարը երգով եւ նուագով, որուն կը մասնակցին նաեւ հարսն ու փեսան: Կը տեւէ մինչեւ կէսգիշեր: Սովորաբար աղջկան կողմէ կին մը կը մնայ հարսին մօտ մինչեւ երեքշաբթի իրիկուն: Ութ օր

վերջ աղջկան օժիտը կը բերուի սնտուկով, որուն բացումին միայն ընտանիքի անդամներն ու ազգականները ներկայ կ'ըլլան, ուր իւրաքանչիւրը իր նուէրը (ոսկի) տալէ վերջ՝ սնտուկը կը բացուի եւ հարսը կը բաժնէ իր բերած նուէրները: Վերջին անգամ մըն ալ օղի եւ օշարակ պատուասիրելով կը վերջանայ հարսնիքը»:

ՕԱՊԻՆ ԳԱՐԱՀԻՍԱՐԻ ԵՒ ԱՆՈՐ
ԳԻՒՂԵՐՈՒՆ ՀԱՐՍԱՆԻՔԸ

ՕԱՊԻՆ ԳԱՐԱՀԻՍԱՐԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Նկարագրողն է Ս. Մ. Գասապեան, որ «Ամուսնական սովորոյթք ի Շապին-Գարահիսար» վերնագրի տակ կը գրէ 1891-ին.

Այս քաղաքի մէջ սովորութիւն եղած է երիտասարդները ամուսնացնել իրենց 20-23 տարեկանին, իսկ երիտասարդուհիները՝ 14-15: Այսպէս չէ սակայն աղքատ դասուն համար, որոնց մէջ ամուսնութիւնները հազուադէպ են հարկաւոր ծախքերու չգոյութեան պատճառով:

Երիտասարդուհիները ստիպուած կ'ըլլան երկար սպասել... «Քասթ»ի դրութիւնը կը տիրէ հոս. հարուստը խնամութիւն չ'ընէր աղքատ դասակարգի հետ... Շապին-Գարահիսարի սովորոյթները կը թելադրեն աղջկան մը գեղեցկութիւնն ամէն բարեմասնութենէ գերադաս համարիլ... Այստեղ նշանածները մինչեւ երեք տարի կրնան այնպէս մնալ, բայց սովորութիւն չկայ նշանածին տեսութեան երթալ:

Աղջկան ծնողքը, իրենց կարողութեան համապատասխան, օժիտ պիտի տան 4-5 ձեռք հագուստ... ամէնն էնթարի եւ սալթաններն (ըստ տեղացիներուն՝ կըլտըրներ) արծաթեայ թելով չորս մատի լայնք բանուած կ'ըլլան: Էնթարիներու քղանցքը շատ նեղ կը շինեն: Իբր գլխանոց կը գործածեն շատ փոքր Ֆէսեր, որոնց գագաթին վրայ արծաթէ կամ ոսկիէ բանուածներ կը յարմարցնեն. ճակատի կողմը հին ոսկիներ

կը շարեն իրարու կից եւ կը կոչեն թապալա: Հարս ու աղջիկ իրենց մագերը ճակատի վրայ եկուքի կը ճղեն եւ ականջներուն վրայէն անցնելով ծոծրակի վրայ իրարու կը միացնեն եւ այդպէս կախ կը ձգեն կամ կը հիւսեն: Գլխանոցի վրայ կը ձգեն տպածոյ ծաղկանկար քողեր, որոնց եզերքը սովորաբար ծոպաւոր կ'ըլլայ եւ նոր հարսեր պարտաւոր են, երբ օտար մը իրենց տունը մտնէ, անհետանալ, իսկ եթէ մօտակայ ազգական մը՝ քողը երեսին վրայ քաշել եւ ապա երեւան դալ:

Պսակի արարողութենէն առաջ, երբ հարսնառի կ'երթան, փեսային տունէն թանձր քող մը կը տանին եւ անով կը քողարկեն հարսը եւ այն աստիճան թանձր կ'ըլլայ, որ ոչ մէկը կրնայ նշմարել անոր դէմքը: Պսակէ առաջ սովորութիւն է հարսին երկպատիկ շոր հագցնել: Պսակի ժամանակ հարսնցուն ձիով, իսկ փեսան հետիոտն կ'երթան եկեղեցի, որ սովորաբար տեղի կ'ունենայ կիրակի օր երեկոյեան դէմ: Պսակէն վերջ կ'երթան տուն եւ հարսն իր կեսրոջ եւ այլ բազմաթիւ անձերու ձեռքերը համբուրելէ վերջ՝ կ'առանձնանայ յատկապէս պատրաստուած անկիւն մը, որ վարագոյրով միայն անջատուած է տան միւս մասերէն: Ժամանակին տարի մը ամբողջ խեղճ հարսերը ստիպուած էին այդ արգելարանի մէջ մնալ...» (Բիւրակն, Կ. Պ. 1891, էջ 314-5):

Շապին-Գարահիսարի հարսանիքի մասին գրած է նաեւ Սարգիս Խ. Տէօվեթեան: Կ'ամփոփենք.

Շապին Գարահիսարցիներուն աղջկատեսը կ'ըլլայ սովորաբար բաղնիքի մէջ... Շապին-Գարահիսարի սինեման ու թատրոնը բաղնիքն է իրօք... Նշանտուքի ձեւակերպութիւնները այսպէս տեղի կ'ունենային. նախ քահանայ մը կամ մօտիկ ազգական մը կը ղրկեն աղջկան տունը, որպէս միջնորդ եւ խօսք տուածին պէս նշանտուքի օրը կ'որոշեն. նոյն իրիկունը աղջկան տունը

կ'երթան եւ նշանախօսութիւնը կը կատարուի եւ ուրախութիւնը ծայր կու տայ. յետոյ աղջկան կողմի երիտասարդները կ'երթան մանչուն տունը եւ այնտեղ ալ կը սկսին զուարճանալ: Նշանտուքէն ամիս մը վերջ, աղջկան տունէն 12 հատ լաւաշ հաց կը ղրկեն փեսային: Այս սովորութիւնը երկու կողմէն է եւ մինչեւ հարսանիք կը շարունակուի: Պսակադրութենէն մէկ ամիս առաջ հարսնցուն կարգաւ իր ազգականներուն մօտ կ'անցնէ: Մեր մօտ ալ հարսը «թագուհի», իսկ փեսան «թագաւոր» կը կոչուի:

Հարսանիքէն տասը օր առաջ հրաւիրեալներու ցանկ մը կը պատրաստեն եւ կը յանձնեն խըլտրկաններուն (խնդրական): Ասոնք քանի մը կիներ են, որոնք տղայ մը կ'առնեն իրենց հետ, տուները կը շրջին եւ հարսանիքի կը հրաւիրեն: Հարսանիքի գացող կին մը անպայման արքայ մը անուշեղէն տանելու պարտաւոր է: Կը տանին փախլաւա, տոլանկեռ (փախլաւայի մէկ տեսակը), պէօրէկ (պանիրով կամ առանց պանիրի). իսկ միջին դասակարգն ալ՝ նոխուլ (գուրապիէ): Մասնաւոր կերակուր եփող կիներ կան, որոնք ուրբաթ օրուրն է կը սկսին: Յաջորդ առտուն անուշեղէնները կը հասնին. ընդհանրապէս 25-30 արքայ, թուրթի մը վրայ գրուած ղրկողին անունը: Իսկ կէսօրէն վերջը կը սկսի հարսանիքը:

Սովորութիւն է որ հարսին կօշիկը տղուն կողմէ ղրկուի: Կօշկակար մը 15 օր առաջ կու գայ աղջկան ոտքին չափը կ'առնէ: Կօշիկը ջնարակուած փոթին-կալոչ է, վիզը մաքուր թաւիչ, վարդագոյն կամ մանիշակագոյն, իսկ անոր վրայ ալ արծաթաթել ջուրքեր (երիզ) բանուած: Ընդհանրապէս հարսանիքը Վարագայ ինչէն վերջ կը սկսի Շապին-Գարահիսարի մէջ: Այդ շրջանին ամէն բան առատ կ'ըլլայ: Շաբաթ իրիկուն տէրտէր եւ տիրացու կու գան հարսը կ'օրհնեն: Ափսէի մը վրայ կը դնեն ընտիր մետաքսէ յեռուած հարսնցուի քողը, նարօտը, երկու մատանի, փեսային վերարկուն եւ թագը: Հալաւը օրհնելէ վերջ՝ մատանին

կը դնեն փեսային մատը, վերարկուն կը հագցնեն եւ թագը (թագաձեւ խաչ) ֆէսին կ'անցնեն... Յետոյ կը սկսին զուարճութեան կերուխում, երգ ու նուագ:

Կիրակի առաւօտ փեսան եկեղեցի կ'երթայ, շապիկ կը հագնի, կը հետեւի պատարագին եւ սրբութիւն կ'առնէ եւ իր ընկերներով կու գայ տուն, ուր ճաշի կը նստին եւ կը սկսի ուրախութիւնը: Ահա հարսանեկան ճաշացուցակը. նախ մտի ջրով բրնձէ եղինձ, չամիչի խոշապ, փախլաւա ու սուրճ. կիններու բաժնին մէջ ուզողին սերկելիչ լիցք ալ կը հրամցնեն եւ տոլլանկեռ: Սպասարկողը կ'ըսէ. - «Այս անուշեղէնը Մարգարիտ խաթունը կապած է». «Շատ ապրիսներ եւ ուրախութեան աղաղակներ: Հացէն վերջ կը պարեն. փեսան կը բերեն եւ անոր հետ ալ պար կը դառնան:

Հարսնառ. - 10-15 կիներ աղջիկը բերելու կ'երթան: Իրենց հետ նոյնքան ալ այրեր: Խնդրական կինը հարսին մատանին, կօշիկը եւ քողը ափսէի մը վրայ դրած՝ այդ խումբին հետ կ'ուղղուի աղջկան տունը: Կիներն ու այրերը զատ սենեակ կը մնան: Կնքամայրը եւ փեսային երկու քոյրերը հարսին թեւը մտնելով կը բերեն: Կնքամայրը մատանին հարսին մատը կ'անցնէ նուէր մը տալով: Աղջկան կօշիկները կը հագցնեն, երեսին կը ձգեն մետաքսէ քողը: Նախ կնքամայրը կը համբուրէ հարսը, յետոյ փեսային քոյրերը, որոնք նուէր կու տան եւ այսպէս բոլորն ալ: Վարդէ օշարակ կը բերուի, կը խմեն բոլորը եւ նուագածուները կը նուագեն ու կը սկսի մենապարը:

Մենապարերէն վերջ կը սկսի շուրջպարը. հարսին հայրն ու մայրը կը բերեն մէջտեղ, աղջկան մէկ ձեռքը հայրը, միւս ձեռքը մայրը կը բռնէ եւ բոլորը միասին կը սկսին դառնալ:

Տղան. - Եկուր, երթանք Պալենց պաղչան, պզտիկ հարս, Խնձոր քաղն, գօտիդ շարեմ, պզտիկ հարս: Հարսը. - Ձէ, ես չեմ գար, Պալենց պաղչան,

չար տղայ, Խնձորը քեզ, կարմիր վարդն ալ, շան տղայ: Տղան. - Եարդդ մեռաւ, բող նոր եարդդ ես ըլլամ, Խօսք տուր ինձի, խօսքիդ դուրսսն ես ըլլամ: Հարսը. - Եարս մեռաւ, եարս մ ըլլար, չար տղայ, Խօսքիդ բընաւ չեմ հաւատար, շան տղայ: Տղան. - Նազ մի աներ, մագիդ մեռնիմ, պզտիկ հարս, Ես քու պոյիդ, խալիդ մեռիմ, պզտիկ հարս: Հարսը. - Ի՞նչ ես ինկեր իմ ետեւէս, չար տղայ, Իմ հանգիստս մի խանգարիր, չար տղայ: Տղան. - Վայ, Աստուծմէն դուն չե՞ս վախմար, պզտիկ հարս, Ես քեզ ծընող մօրը դուրսսն, պզտիկ հարս: Հարսը. - Դուն իմ խելքս գլխէս տարիր, չար տղայ, Ես քու սիրուն տունէս կ'ելլամ, ջան տղայ:

Այս պարերէն վերջ սեղան կը դրուի: Հարսնցուն ալ կը մասնակցի: Ծաշացուցակին մաս կը կազմէ միտով պամիան: Կը հրամցուի Արծաթերի գինի. բոլորը կը շնորհակտորեն հարսը: Կիներ կը պատուելին փախլաւաներով եւ տոլլանկեռներով: Կը համտեսեն նոխուլը: - Ծաշէն վերջ հարսը հրածեշտ կ'առնէ ծնողքէն: Յուզումը ծայր կու տայ: Հայր ու մայր լալով նուէրներ կու տան, կ'օրհնեն իրենց դուստրը, կը համբուրեն գայն: Եկեղեցի երթալէ առաջ խնամիները պար մըն ալ կը դառնան ջութակահարին նուագած մելադձոտ եղանակին վրայ:

Պարի վերջաւորութեան կնքամայր եւ փեսային քոյրերը հարսին թեւերը մտած կը հեծցնեն ձիուն վրայ: Ձիուն երկու կողմերէն կ'երթան հարս ու փեսային եղբայրները: Մինչ այդ արեւը մարը մտած կ'ըլլայ: Փեսան կէս ժամ առաջ եկեղեցին է: Հարսը ձիէն վար կ'առնեն ժամուն դրան առջեւ ու ներս կ'առաջնորդեն: Եկեղեցիին ջահերը կը վառեն: Փեսան կը կարդայ

«Մեղու»ն: Ժողովուրդը ծունկի կու գայ: Ընթերցումը լրացած՝ պսակի օրհնութիւնը տեղի կ'ունենայ: Պսակի խորհուրդի վերջաւորութեան մոմերը կը վառեն եւ Հարսու փեսայ մոմերը իրենց ձեռքին մէջ, եկեղեցիէն դուրս կու գան: Կը սկսին երգել. «Թէ Հայենեաց պսակադիր». «Ազնիւ ընկեր, մեռանում եմ», եւ այլն:

Հարսանեկան թարորը փեսային տան առջեւ հասած՝ դրան սեմին կանգնած կ'ըլլայ կեսուրը, որ կը համբուրէ Հարսը, ան ալ խաթունին ձեռքը կը պագնէ: Նոյն միջոցին երեք կիներ կը մօտենան Հարսին, իրենց ձեռքը բռնած մէկ մէկ ափսէ, որոնց մէջ կան թթմոր, ասեղ, դերձան եւ նոր փորուած խանձարուր մը: Աղջիկը երեքին վրայ ալ ձեռք կը դնէ: Յառաջ կու գայ կեսուրայրը, որուն ձեռքը կը համբուրէ Հարսը եւ նուէրներ կը ստանայ:

Հարսին հետ կ'ըլլայ իր 10-11 տարեկան քոյրը կամ ազգականուհին իբրեւ թարգման, որովհետեւ նորապսակ կնոջ արգիլուած է խօսիլը: Հարսը քիչ մը կը հանգստանայ կողմնակի սենեակ մը: Դադարէն վերջ, նախ Հարս ու փեսայ դէմ դէմի կը պարեն, յետոյ կեսուր ու կեսրայր բռնած Հարսին ձեռքերէն, դարձեալ Հարս ու փեսայ ձեռք ձեռքի տուած՝ ծնողքին հետ: Մեծ սենեակի մը մէջ սեղանի վրայ դրուած կ'ըլլան աղանդեր, քիւֆթէ եւ ամէն տեսակ անուշեղէններ: Սազ ու ջութակ կը նուագեն: Պար, կերուխում ու զուարճութիւն կը տեւեն մինչեւ լուսադէմ:

Մինչեւ չորեքշաբթի կը տեւէ Հարսանիքը. այդ օրն է, որ Տէրտէրը կու գայ եւ նարօտն ու թազը կը հանէ թոնիրին վրայ, որմէ վերջ փեսան իր սենեակը կը քաշուի: Իր մեծ քոյրը կ'առնէ Հարսը ու կը տանի իրեն յատուկ սենեակը: Փեսան անպատճառ նուէր մը տալու է իր քրոջ «առագաստ»ի սենեակի մուտքը յայտնելուն համար: Ընդհանրապէս աշնան տեղի կ'ունենան պսակադրութիւնները:

կադրութիւնները: (Սարգիս Խ. Տէօվլէթեան. Յուշեր Շապին-Գարահիսարէն. Փարիզ 1954, էջ 43-52):

Արամ Հայկազ տուած է Շապին-Գարահիսարի Հարսանիքէն պատառիկ մը տեղական գաւառաբարբառով.

«Աստեղաց Հաշնիքները (Հարսանիք) Հաշնիք չեն քի. Ֆէն (հոն) ուրբաթ շաբաթ աղջըկան տուըը չաղլու քէֆ կ'ըլլար տէվոր (մինչեւ) իրինկուն: Կիրէյնօրը (Կիրակի) տէվօր էրկուշաբթի մանչուն տուըը կ'ըլլար Հաշնիքը: Հարսին գլոխը ընդրտար եազմա, տիրէմլիք (գոգնոց) կը դիզէին քի, Հարսին շլիքը (վիզը) կ'իյնէար: Աստեղաց պիչիմ չանախ-մանախ, զըվի-նըվի տանիլ չկար» (Արամ Հայկազ, Շապին-Գարահիսար ու իր հերոսամարտը. Նիւ Եորք 1957, էջ 72):

ՕԱՊԻՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ ԳԻՒՂԵՐՈՒՆ
ՀԱՐՍԱՆԻՔԸ

Իմ խնդրանքիս վրայ Շապին-Գարահիսարցի Պր. Յարութիւն Քեֆեյեան (Փարիզ) իր ծանօթութիւնները գրեց Շ. Գ.-ի 16 գիւղերու Հարսանիքի մասին. այդ գիւղերէն կը յիշէ Բիւրգ, Այծպտեր, Անդրէսա, Մշակնոց, Կրթանոց, Աղուանիս, Առղաւիս, Ալամոնիկ, Սիւխստիւք անունները եւ կ'ըսէ որ բոլորվին սովորոյթն ալ նոյնանման է:

Հարսանեկան երգեր կային: - Այո, բայց չեմ յիշեր:

Ի՞նչ կերակուրներ յատուկ էին Հարսանիքին: - Սոխով միս (եախնի), խաղողի տերեւով միջուկ միսով տոլմա, կարմրած ոչխարի միս փիլաւին վրայ դրուած, կարկանդակներ ընկոյզով, պանիրով, քաշուած միսով, կաթա, սարլըլ պուրմա ընկոյզով վրան մեղր ու շաքարի հեղուկ ցանած, տիկի պանիր եւ պտուղ:

Ի՞նչ հագուստ կը հագնէին Հարսն ու փեսան: - Աղջկան նշանտուքէն յետոյ մօտիկ ազգականները, իրենց կարողութեան համեմատ, ոսկիներ կը նուիրեն Հարսն-

ցուին: Կաղանդին, զատկին սինով կարկանդակ կը ղրկեն ու ոսկի մըն ալ՝ վիզէն կախելու համար: Մինչեւ ամուսնութիւն բազմաթիւ ոսկեզէն զարդեր նուէր կ'ընդունի հարսը, իսկ հարսը տուն բերելու ատեն, կեսուրը անոր կը նուիրէ 15-20-30 մանր ոսկիներու շարոց մը, որ կը կարուի մետաքսէ թապլային վրայ եւ կ'իջնէ ճակատին վրայ: Ատկէ զատ հարսը կը ստանայ ապարանջաններ ու օղեր: Հարսին հագուստները թաւիչէ եւ մետաքսէ կը պատրաստուին. իսկ փեսան կ'ունենայ մետաքսէ դօտի, ժամացոյց, մատանի, արծաթեայ գլանիկի տուփ, ժամացոյցի արծաթէ կամ ոսկիէ շղթայ: Փեսային հագուստները լաւ կերպասէ, չուխայէ կ'ըլլան: Երբ փեսային տունը կը հասնին, հարսին նուէրները անոր գլխուն վրայ կը դետեղեն, իսկ փեսայինները՝ ասոր ուսին վրայ. ասոր կ'ըսեն «ղալաթ»: այնքան կը դիզուին նուէրները որ քանի մը անգամ կը վերցնեն: Երբ փեսային տունը մտնեն, հարսը կիներու մասին մէջ, իսկ փեսան այրերու մէջ կը մտնէ: Տեղի կ'ունենայ ճոխ կերուխում, խրախճանք:

Ի՞նչ պարեր կային. — Թ տեսակ պար կը յիշեմ. — երիտասարդները նեղ զզուայ չերթէզներու նման մարմինին փակած՝ ձեռք ձեռքի, ճկոյթ ճկոյթի անցուած, սրունքները դողացնելով ոտք առ ոտք կը շարժին, պահ մը աջ աջ կ'երթան եւ յանկարծ, նուագին համեմատ սրունքները կը դողան. պահ մըն ալ շարքը երթալով կը գոցուի, բայց յանկարծ կը բացուին ձեռքերը եւ պարը մէկ շարքի վրայ կ'երթայ: Ասիկա է «չիֆթէ թելլէ»: Ուրիշ մըն ալ. «պէն պէն աթը ալտըմ, պէշի տէ գարայ. վայ քէօփէի օղլան, պէն սէնի ալմամ»: Այս պարը աւելի մարդական ու հաճելի պար մըն է: Երրորդ մը՝ «խնձորի ծառէն ճիւղ մը կտրեցի, հայրս ուզեց, չտուի»: այս պարը կը խաղացուի ճկոյթի մատները կցուած, նախ աջ ոտքը, յետոյ ձախը առաջ երթալով:

ԿԻՒՐԻՆԻ ԵՒ ԱՆՈՐ ԳԻՒՂԵՐՈՒ ՀԱՐՍԱՆԻՔԸ

ԿԻՒՐԻՆԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

1891-ին Կիւրինի հայերը — լուսաւորչական, կաթողիկէ, բողոքական-ժողով ընելով 25 կանոններով որոշում կ'առնեն ամուսնական «տնաւեր եւ յոռի սովորութեանց բարձման համար»: Կու տամ կարեւորը.

«1. Պատանիի մը կամ օրիորդի մը նշանախօսութիւնը վաւերական է, երբ իւրաքանչիւր յարանուանութեան եկեղեցական դպրութեան համեմատ կը կատարուի երկուստեք ազատ հաւանութեամբ. 2. Նշանախօսութեան ատեն անմիջապէս նշանն օրհնել տալու է:

Տարէնտէի մէջ, ուր կը նշմարուին հարսանեկան սովորութեանէն դժեր: Կը քաղենք.

Նոր նշանուած տղուն ականջը կը քաշեն, որ նշանածին սէրը վրան տաք ըլլայ: Երբ աղջիկ մը հարս կ'ըլլայ, իր եղբայրը կը կապէ անոր դօտին ու կ'ըսէ. «Եօթն ինծի պէս, մէկ քեզի պէս»: Հարսը ձիով տարած միջոցին բնաւ անոր հետ — գիրկը կամ ետեւը — մանուկ հեծցնելու չէ. անպատճառ կ'այրիանայ: Հարսնեւորներուն եկած ճամբով հարս տանիլն լաւ չէ... ուրիշ ճամբով տանելու է հարսը:

Հարս ու փեսայ պսակի տարուած ժամանակ անոնց մէջէն մարդ անցնելու չէ. իրարմէ կը պաղին: Փեսան պսակի ատեն պէտք է որ հարսին ոտքին վրայ կոխէ, որ միշտ տիրող ըլլայ: Հարսը (ձիէն) իջեցնելէն անմիջապէս ետքը, կեսուրը լման 40 հաւկիթ կը կտորէ, ձուագեղ կ'ընէ ու հարսին շուրջը հաւաքելով բոլոր նշանուած աղջիկները, կը կերցնէ անոնց — որպէս զի բախտ ունենան անոնք ալ անարատ հարս ու բազմածին ըլլալու: Նոր հարսը տուն մտած ատեն կեսուրը երգիքէն անոր գլուխն ի վար ձմերուկ մը կը նետէ, որ կտոր կտոր կ'ըլլայ եւ տղաք կը յափշտակեն. իսկ տանը սեմին

վրայ կեսուրը մեծակ պաքար մը կու տայ հարսին, որ դրանը զարնելով ջարդ ու փշուր կ'ընէ . ամէն մէկը կը յափշտակէ ասկէ, որ տարոս գայ իրենց տունը: Հարսը փեսային հետ տունէն ներս մտած ատեն գիրկը մանչ երախայ մը կու տան, որ անդրանիկը արու ըլլայ» (Բիւրակն, Կ. Պ. 1900, էջ 629-33):

**ՏՐԱՊԻԶՈՆԻ ԵՒ ԱՆՈՐ ԳԻՒՂԵՐՈՒՆ
ՀԱՐՍԱՆԻՔԸ**

Տրապիզոնի նահանգին հին հարսանեկան սովորութեան մասին բաւական յստակ գաղափար մը կու տայ Տրապիզոնի Առաջնորդ Յովհաննէս վարդապետի մէկ շրջաբերականը, տրուած 1836 Ապրիլ 18-ին, որ կը բովանդակէ յաջորդ Կանոնները.

«Ա. Յորժամ ոք զդուստր իւր նշանեացէ տղայի ուրուք, աղջիկն լիցի յերկոստասան ամաց կամ աւելի եւ ոչ պակաս. Բ. Նշանեալ աղջիկն կամ տղայն մի երթեցեն ի տունս միմեանց. Գ. Զկնի նշանելոյ որ եւ իցէ նշանն ոչ եւս դարձցի յետս. Դ. Խնամոց գրաֆէթ կամ գոչում մի լիցի. Ե. Ընծայ տալ հարսնացու աղջկան կամ փեսացու տղայոց մի լիցի. Զ. Երեք կարգ լիցի զգեստ աղջկան. Խուլթնի ալաճայ, չիթ եւ ութ շապիկ, երկրորդ խուլթնի, չիթ եւ վեց շապիկ. երրորդ՝ փլցի (մետաքսէ գործուած) եւ չիթ եւ չորս շապիկ. սեւայի կամ կիւապտանաւ մի լիցի. Է. Նոյնպէս կիւապտանաւ փեշկիր, չեվրէ, մահրամայ եւ պիւրիւնճիկ շապիկ մի լիցի, այլ մանած. Ը. Չամաշուր մի ումեք տացի, միայն փեսային: Թ. Ի հարսանիս միայն մերձաւոր ազգականք կոչեսցին. Ժ. Կերակուրը հարսանեաց վեց կերպ, չորս կերպ եւ երեք կերպ ըստ կարողութեան եւ ոչ աւելի. ԺԱ. Հարսանիք ո՞ր քահանայի իցէ ծուխ, նո՛յն քահանայի յեկեղեցւոջ պսակ լինիցի. ԺԲ. Նշանեցեալ հարսնածու աղջիկն վասն հինայի մի՛ երթիցէ տանէ ի տուն. ԺԳ. Հարսնցու աղջիկն բազմութեամբ ի բաղանիս մի երթիցէ. ԺԴ. Նոյնպէս փեսայն կնքահայրիւն միայն երթիցէ ի

բաղանիս. ԺԵ. Ի հարսանիս միայն ի Կիւրակէ երեկոյին երթիցեն եւ այն ազգականք եւ ոչ բարեկամք եւ զկնի պսակին իւրաքանչիւր ի տունս իւրեանց երթիցեն. ԺԶ. Հարսնեղբայր ամենեւին մի լիցի» (Արեւելք, Կ. Պ. 1900 թ. 4251):

1885 Սեպտ. 28-ին շրջաբերական կոնդակ մը տուած է իր վիճակին Գարեգին Մ. Վ. Սրուանձտեանց, առաջնորդ Տրապիզոնի, որուն մէջ սա կէտերը կը շեշտուին.

«Ա. Սարսափեցէք ազգականի, մերձաւորի եւ Ս. Օրինաց արգելած ամուսնութենէ. Բ. Փեսացուն քսան տարեկանէն պակաս եւ հարսնցուն տասնուվեց տարեկանէն պակաս մի նշանէք, մի պսակէք. Գ. Անբժշկելի ախտ ունեցողը մի նշանէք, մի պսակէք. Դ. Տարիքը մեծ եղողը փոքր տարիք ունեցողի հետ մի՛ նշանէք, մի պսակէք. Ե. Ծնողք միայն իրենց ընտրութեամբ չպսակեն իրենց զաւակները. Զ. Գիւղերու մէջ աղջկան ծնողք փեսայէն պաշլըխ առնուլ եւ քաղաքներու մէջ ծանրագին օժիտ (ճեհէզ) պահանջել հարսին ծնողքէն արգելուած է. Է. Նշանտուութիւնն շատ ժամանակ չանցնելով պսակը կատարուելու է. Ը. Արգելուած է տները նշանտուութիւն ընել, այլ... Առաջնորդարանը...» (Մասիս, Կ. Պ. 1886 թ. 3808, էջ 653):

ԽՈՏՈՐՁՈՒՐԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Իր «Տեղագրութիւն Խոտորջրոյ» յօդուածաշարքին մէջ 1876-ին Յ. Անտոն Պետանեան կը շեշտէ, որ Խոտորջրոյի հասնիքը աշնան վերջերը տեղի կ'ունենար եւ թէ «այս կողմերու հարսանիքն ալ շատ զուարճալի ու հետաքրքրական է»: Թէ «ութ օրուան մէջ հազիւ կը լմննայ ամբողջ հարսանեկան հանդէսը, բայց երեք օր միայն են բուն հարսանիքի օրերը. առաջին օրուան մէջ հարսնեւորները կը ժողովուին, երկրորդ օրը հարսը կը բերուի եւ պսակը կը կատարուի եւ երրորդ օրն է շաչուին օրը:

Շաչու կը կոչուի այն հանգէսը, ուր մէջտեղ կը դրուի սեղան մը եւ անոր չորս կողմը կը բազմին բոլոր հանդիսականները, հոն են նաեւ հարսը երեսը քողով ծածկուած, եւ փեսան իրեն հարսնքով եւ թագուորաղբարովը եւ մէկ կողմը կենալով մակարները, հարսին կողմէ եկող երիտասարդները, որ փեսային կողմէ պատուաւոր անձերէ սկսած մէկիկ-մէկիկ կը կանչեն, երգելով ամէնքը միաբերան. «Այ քող բանայ, քող բանայ, հայսին կեսրայ գող քող բանայ», մինչեւ որ գայ կանչուողը եւ սեղանին վրայ ձգէ հարսին տալիք ընծան, որ սովորաբար կամ ապարանջան է կամ վզնոց կամ վերջապէս զարդի վերաբերեալ բան մը: Ան այս երես-տեսանը հոն ձգելուն պէս ամէնքը միաբերան կը պողան «երես ճերմակ»: Եւ պարգեւաբերը կ'երթայ համբոյրով կը տեսաւորի հարսին եւ փեսային հետ երկայն բարեմաղթութիւններ ընելով «Միասին ապրիք, միասին ծլիք ու ծաղկիք»: Եւ հոն գտնուողներն ալ կ'երթան իրենց աստիճանին համեմատ... երես տեսաներ կը ձգեն ու բարեմաղթութիւններ կ'ընեն» (Բազմավէպ, 1876, էջ 197-8):

2. Մատթէոս Հաճեան (Խոտորջուրցի) ալ տուած է պատկեր մը իր հարենիքի հարսանիքի մասին: Նա կը գրէ.

«Հարսն կ'ածնելէն (զարդարելէն) վերջ, կեսրայրը կու գայ կ'ածնողներուն վարձքը կու տայ ու հարսին ձեռքէն բռնած տունէն դուրս կը հանէ. խուռն բազմութեան մէջ ագուռ (ափ) ագուռ մանր ստակ կը փռէ, որ հին ատեն աւելի կը գործածուէր: Հարսն ու թագուորը ժամը կ'առաջնորդուին: Պսակի խորհուրդը կատարուելէ վերջ, թագուորաղբարն առաջ կ'անցնի, հտեւէն քաւորն, ատոր հտեւէն հարսը գօտիէն բռնած եւ հարսին ետեւէն ալ հարսնքոյրն եւ թագուորաքոյրերն, առջեւէն ալ կ'երթան մակրտանք (մակար, մակրտանք – հարսին կողմէ 7-8 հոգի մարդիկ), խուռն բազմութեամբ: Ժամին

դուռն հարսնքոյրն եւ թագուորաքոյրը քաթա, շաթա եւ շաքար կը փռեն եւ տղաքը խառնիճաղանճ կը ժողվեն:

Երբ քիչ մը տան մօտենան, մակրտանք կը կանգնին. գոհ կ'ուզեն իրենց կենաց: Խոյ մը կ'առնեն, կու գան անոնց առաջ կը մորթեն. մորթողին մեծիտայ մը ընծայ կու տան: Երբ թագուորին տունը հասնին, թագուորին մայրը դուրս կ'ելլէ, տղուն ճակատը կը պագնէ, յետոյ սկաւառակ մը լի ցորենով կու տայ հարսին, որ չորս կողմ կը սփռէ արեւմուտք, արեւելք, հիւսիս եւ հարաւ:

Հոս մակարները փոքր պար մը կը բռնեն, կը կանչեն. «Թագուորամայր, բարիլուս, բարիլուս. փէշքեաշ կու տամ, փէշքեաշ կու տամ, արի դուս»: Վերջապէս թագաւորամայրն դուրս կ'ելլէ, գլխուն վրայ կլոր սեղան մը առած, մէջը սկուտեղ մը քեսահիով (կնոջ գլխու բարակ լաթ) եւ վարչամակով, կու գայ կը մտնէ պարի մէջտեղն ու անոնց հետ կը պարէ ժամանակ մը: Ամբողջ ժողովուրդը կերակուրը վայելելէն վերջ, կու գան պարի տեղը, հարսն ու թագուորն կը նստեցնեն ու իրենք պար կը բռնեն տկով ու քեսամաչիով մինչեւ արշալոյս» (Հ. Մատթէոս Հաճեան, Հին աւանդական հէքիաթներ Խոտորջրոյ. Վիեննա, 1907, էջ 60, ծն. 2):

ՀԱՄԾԷՆՑԻՆԵՐՈՒ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Համչէնցի Հայերու հարսանեկան սովորութեան մասին գրած է Յ. Մուրադեանց, որմէ կը քաղեմ կարեւորը.

Համչէնցի Հայերը սովորաբար 16-18 տարեկանից են սկսում ամուսնացնել իրենց տղաներին: Համարեա նոյն հասակից են սկսում մարդու տալ եւ իրենց աղջիկներին... աւելի տղի համար են շտապում, քան աղջկան... կարելի է ասել թէ ամբողջ Կովկասեան ափերում տունը մնացած աղջիկներ բոլորվին չկան...

Աղջիկ առնելը համչէնցիների մօտ շատ դժուարութիւնների հետ է կապուած. երկար

բանակցութիւններ, սրան նրան միջնորդներ գցել... Աղջիկ փախցնելը նրանց մէջ շատ է պատահում. սովորական բան է նրանց համար... Փախցնելու մի պատճառն էլ աղջկան տիրոջ կողմից պահանջուած դրամական վարձատրութիւնն է...

Աղջիկ ընտրելիս նկատի են առնում արեւնակցութեան ու խնամութեան աստիճանները... տէրտէրին հաշուել են տալիս կը հասնի՞ թէ ոչ («Հաս-չհաս»)... Ինչպէս առանց տղի, նոյնպէս ալ առանց աղջկան յօժարութեան ոչ մի պսակ չի լինում... Խօսք կտրելուց յետոյ, օր են նշանակում. մի երեկոյ տղի հայրը մի երկու բարեկամի հետ գնում է հարսնցուի տունը տանելով մի ոչխար, գինի, գաթա, հինա: Այնտեղ գինիով ու «թօխլիով» պաշտօնապէս կնքում են իրենց խնամութիւնը... Մի քանի օր յետոյ սկսում են հարսնիքը: Սկսելու առաջին նշանը հրացանի ձայնն է լինում:

Մի քանի օր յետոյ սկսում են հարսնիքը: Սկսելու առաջին նշանը հրացանի ձայնն է լինում:

Երգով փեսային գովելը հին սովորութիւն է: Յետոյ նստում հաց են ուտում: Հարսանիքի կերակուրներն են. բլղուր, փլաւ, բարակ հաց, մսեղէն, մածուն, թան, հաւ, մեղր, կարագ: - Հարսանիքն սկսած իրիկունից դառուլ-գուռնան անբաժան է լինում, երբեմն է քամանչա ու տիկ ածում: Նախ գօտեմարտ են սարքում, յետոյ հարսնեւոր բազմութիւնը ձիերով եւ հետեւակ, նուագածուներն առջեւը գցած գնում են նորահարսի տունը. ամբողջ ճանապարհին սարերն ու ձորերը դղրդացնելով հրացանի եւ ատրճանակի թնդիւններով:

Նորահարսին զարգարում, դուրս են բերում, դնում ձիու վրայ: Սկեսրայրը մի քանի սեւ փող է շաղ տալիս: Յետոյ բազմութիւնը ուղղւում է կամ եկեղեցի եւ կամ «թագւորի» տունը: Խորհուրդը կատարելուց յետոյ նոյն հանդէսով, նուագով եւ հրացանաձգութեամբ հասնում են տուն:

Նորից շարունակում են հանդէսը, ուտում, խմում, խաղ են կանչում, պարում մինչեւ լուսնայլը...

Հարսանիքին աղջկան կողմից շատ քիչ ծախս է լինում. ծախսերի ամենամեծ մասը տղի տիրոջ վրայ է. ահագին փող է նստում նորահարսի պսակի հագուստ կարել տալը: Գլխաւոր ծախսերի գումարը, միջակ հաշուով ամենաքիչը 150-200 ռուբլի է» (Ազգագրական Հանդէս, Թիֆլիս 1898 թ. 2, էջ 134-43):

ԱՏԱՆԱՅԻ ՀԱՐՄԱՆԻՔԸ

Նկարագրած է տեղւոյն «Ճշմարտասիրաց Ընկերութիւնը» 1883-ին, դժբախտաբար թրքերէն լեզուով (Տե՛ս Մանգումէի էֆքեար, Կ. Պ. 1883, թ. 5169-70), որուն նման են նաեւ յաջորդ նկարագրութիւնները:

Յ. Յակոբեան «Ատանայի հարսանեկան սովորութիւնները» վերնագրով կը գրէ:

Տեղական նախկին սովորութեամբ հարսանիքի հանդէսը երեք օր կը տեւէր: Ուրբաթ կամ հինգշաբթի երեկոյին մասնաւոր գումարումներ կը լինի մօմ թափելու եւ նամակագրութեան համար, զոր կը կատարեն շարականներով ու տաղերգութեամբ: Բուն հանդէսը շաբաթ երեկոյին կը սկսի: Հրաւիրեալները կը ժողվուին. մինչեւ ժամը չորս ուրախութեամբ կ'անցնեն: Զորսէն վերջ կ'երթան աղջկան տունը հինայելու համար: Հինայելու եւ մազհիւսի պաշտօնը կիներուն է: Մասնաւոր պարերգներով ու զբօսեցուցիչ զրուցուածներով կը հինայն հարսին ձեռքերն ու ոտքերը:

Երեկոյեան ժամը 7-ին կնքահօր կողմէ հիւրերն ու փեսան բաղնիք կը հրաւիրուին, որ կը տեւէ մինչեւ առտուան չորսը: Խինդ ու խրախճանք կը շարունակուին անդադար մինչեւ Կիրակի: Փեսան կը հազցնեն «Խորհուրդ խորին» շարականով, յետոյ կը մեկնին հարսնառութեան, ուր դուռը գոց կը գտնեն. կնքահայրը նուէրով մը բանալ կու տայ: Կը հեծցնեն հարսը ձիու վրայ եւ

փեսան նորա առջիւէն կը բերեն եկեղեցի:
Կը կատարուի պսակը:

Երբ եկեղեցիէն դուրս ելլեն, փեսային մէն մի քայլափոխին մի կուժ կը կտարուի. մանր շաքարեղէն եւ կորեկ կը ցանուի նորապսակներուն գլուխը որպէս բարեմազթուփիւն բազմածնութեան: Տուն կը հասնին եւ փեսան աթոռի մը առջիւ ոտքի կը կենայ եւ հանդիսականներու հրամանով միայն կրնայ նստիլ. նոյնպէս խօսելու ալ իրաւունք չունի: Երկուշաբթի ցերեկը աղջկան պարագաները փեսայատուն կու գան մրգեղէնով եւ նպարեղէնով, անգամ մըն ալ միասին ուտելու եւ ուրախանալու:

Ամուսնութիւնները հետզհետէ կը նուազին. պատճառն այն է, որ իգական սեռը անյազ տենչեր ունի... Աղջիկ մը կ'ուզուի, իսկոյն մայրը կը սկսի համբել՝ ապարանջան, մանեակ, եթէ ոսկի ժամացոյց չպատրաստէ աղջկանս համար, չեմ տար: Փեսացուն իր ամբողջ դրամագլուխը կը յատկացնէ հարսին ոսկեղէն զարդերուն եւ նորէն չի կրնար զայն գոհացնել: (Մասիս, Կ. Պ. 1897 թ. 229):

ՍԻՍԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ.-

Գր. Մ. Թելլալեան կը պատմէ.

Սիսի մէջ ամուսնութիւնը շատ կանխակատար է. տանութէն քսաներեք... իսկ աղջիկը 14-15 տարեկան, արդէն կազմ ու պատրաստ հասրնացու մըն է... Երբ երիտասարդ մը թեւակոխած է ամուսնանալու տարիքը, անոր ծնողքը կը կանչեն բոլոր ազգականները ու ժողովքի կը նստին աղջիկ մը գտնելու համար: Ժողովականներէն ամէնէն ծերերը եւ ականաւորները կ'ընտրուին այս ձեռնարկութեան համար: Հետեւեալ օրը, իրիկուան, ընկերակցութեամբ տէրտէրին ընտրուած աղջկան տունը կ'երթան եւ խնդիրը պաշտօնական եւ բանիմաստ դարձուածքներով կը պարզեն անոր հօրը. - «Աստուծոյ հրամանով եւ մերայնոց հաւանութեամբ աղջիկդ մեր տղուն համար

ուզելու եկանք»: Տանտէրը նախ ժխտողական պատասխան կու տայ... միւս օրը դարձեալ կը վերադառնան հոն. տանտէրը ի նշան տհաճութեան մէկ քանի սոխ կտրել տալով՝ ամէնուն ձեռքը մէյ մէկ կտոր կը հրամցնէ, կամ լաւ եւս, եթէ դուրսը կօշիկներ գտնուին, աղ դնել կու տայ անոնց մէջ: Այս վերջին գործողութիւնը, կ'ըսեն, հիւրի մը շուտ երթալուն կը նպաստէ... Այս միջոցին այցելուներուն խմած սուրճը անշաքար կ'ըլլայ, շաքարը նշան ըլլալով տանտիրոջ հաւանութեան:

Հաւանութիւնը ստանալէ անմիջապէս յետոյ տեղի կ'ունենայ նշանտուքը: Նշանը կը կազմուի ոսկեայ մատնոցէ, օղակներէ, ժամացոյցէ եւ ապարանջաններէ: Նշանտուքէն մէկ քանի օր ետքը կու գայ հարսնտեսի արարողութիւնը: Երիտասարդին բոլոր ազգականներն ու բարեկամները ժողովուած՝ իրիկուն մը աղջկան տունը կ'երթան. խօսակցութիւններէ վերջ, մէջտեղ կը դրուի ափսէ մը, որուն մէջ ամէն մէկը ստակ կը նետէ մէծիտիյէյէ մը մինչեւ 10 ոսկի... Այս դրամները յատկացուած են աղջկան մանեակը, ոսկեղէնները կամ գոհարեղէնները հոգալու: Հետեւեալ առաւօտ նոյն գործողութիւնը կը կատարուի կիններուն կողմէ, որոնք ստակի հետ մէյ մէկ աման համագամ կերակուր կը տանին...

Հարսանիքը կը սկսի ուրբաթ օրն ու պսակը կը կատարուի երկուշաբթի առաւօտուն: Շատ հարուստներ մինչեւ 15 օր կը շարունակեն հանդէսը սրբազան Կաթողիկոսէն սկսելով քաղաքին բոլոր դասերը խնջոյքի հրաւիրելով մէյ մէկ օր:

Սիսի մէջ բուն հարսնիքը ուրբաթ օր կը սկսի... Կիրակի խուռն բազմութիւն մը լիցուցած է հարսնետունը. թէ տան եւ թէ փողոցին մէջ մեծ հանդէսներ կը կատարուին: Խուճը մը կ'երգէ, խուճը մը կը պարէ: Կիններու սրահը գտտ է: Աղջիկներու եւ հարսերու դասը առաջնորդութեամբ «վիրակօ»ներու

կ'ելլէ տանիքին վրայ եւ ձեռք ձեռքի տուած կը պարէ մեծադղորդ երգերով:

Տանիքէ տանիք համբաղ թող բանի,
Քովիկոյ ոսկեղէն օրոց տառանքի:

Կիրակի երեկոյեան կը կատարուի Հին տանելու հանդէսը: Խոշոր եւ զարդարուն խանի մը մէջ Հինա լեցնելով, վրան զետեղելով հարսնացուին զգեստն ու կօշիկները, որոնց մէջ կը դրուին մէկ քանի մեթալիք, գարի, սիսեռ եւ ոսպ, կը դնեն ժամկոչին գլխուն վրայ եւ բազմութեամբ ճամբայ կ'ելլեն: Հինան աղջկան աջ ձեռքին մէկ քանի մատերուն կը դրուի... Երիտասարդին ածիւման հանդէսը կէս գիշերին տեղի կ'ունենայ մեծահնչիւն «Նորաստեղծեալ»ին ընկերացած: Փեսայական զգեստները կը հագցնեն կին ազգականները: Կը ներկեն Հինայով աջ մատները եւ թաշկիւնակներով կը ծանրաբեռնեն անոր ուսերը... գիշերուան վերջին ժամերուն այրերէ եւ կիներէ բաղկացած խումբ մը, հարսնածու կոչուած, կ'երթայ առնել աղջիկը իր հօր տունէն եկեղեցի տանելու համար:

Հոս կատակախառն խաղեր կը կատարուին. - Աղջկան տէրերը կը հրամայեն, օրինակ, հարսնածի եկողներուն ծունը դնել դաւիթին մէջ եւ երկար աղաչանքէ վերջ, երբ վեր կարենան ելլել, ըստ տանտիրոջ քմահաճոյքին, պէտք է անընդհատ պարեն, երգեն եւ օղի կամ գինի խմեն, մինչեւ արբենան: Դիւրին չէ մասնաւոր փորուած խոշոր դռուներ դուրսը դնել իրբեւ զլխարկ, մինչեւ ականջները գոցող...

Արշալոյսին վերջապէս աղջկան տէրերը կը հաւանին հարսնածու խումբին յանձնել հարսը, որ բաժանման այս կէտին ճշմարիտ դառնութեամբ մը համակուած, կու լայ անդադար մինչ գէպի եկեղեցի կ'ուղեւորուին: Պսակէն վերջ զարդարուած ձիերու վրայ կը նստեցնեն փեսան, հարսն ու կնքահայրը: Մեծահանդէս թաքորը ստակի կամ շաքարեղէնի տարափ մը կը տեղացնէ անընդհատ ձիերուն վրայ: Ծամբան զոյգին

ազգական տուներ ընծաներ կու տան, տան կարեւոր առարկայ մը, արտ մը, այգի մը եւ կամ մէկ քանի կանգուն թանկ կերպասեղէն կը նետեն ձիերուն վրայ:

Տուն հասած ատեն զոյգ մատաղ կը մատուցանեն եւ հարսը ձիէն վար առնելէ ետք, անոր ձեռքը կու տան պնդակազմ նուռ մը, որ պատին զարնէ ու փշրէ: պահ մը աղջիկներու եւ հարսերու հետ պարել կու տան վերէն նետուած ստակախառն գարիի տարափին ներքեւ, կուժերու եւ կարասներու մեծաշառաչ ճաթոտոցին ընկերացած: Ետքը հարսը կը հանեն, գիրկը մանչ մը կու տան, գլխուն վերեւ վրան մոմեր տնկուած գտակ մը պտտեցնելէ յետոյ, ներս կը տանին. հանդիսականներուն հրճուանքը կատարեալ է: Կէսօրէ վերջ հետզհետէ ամբոխը կ'անհետի... Միշտ գոցուած է հարսին երեսը կիսաթափանց գեղապաճոյճ քողով մը, հրբեմն մէկէ աւելիով ալ, որ երեսին հետ բերանն ալ կը գոցէ երկար ժամանակ:

Քիչ տարբերութեամբ նոյն սովորութիւնը տեղի կ'ունենայ նաեւ Ատանա, Հաճըն, Ֆէքէ, Միսիս, Գարս-Պազար, եւ այլն» (Մանգուժէի էֆքեար, Կ. Պ. 1906, թ. 1433 եւ 1444):

ԶԷՅԹՈՒՆԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ.-

Թղթակից մը կը գրէ Զէյթունէն 1902-ին.

Աղջիկներն ու մանչերը կը նշանուին շատ փոքր հասակի մէջ: Օրորոցի մանուկներու նշանախօսութիւնը սովորական բան է Զէյթունի համար: Այսքանը բաւական չէ. մայր ըլլալու վիճակին մէջ գտնուող կիներ կը խոստանայ այսինչին տղուն տալ, եթէ աղջիկ ունենայ. ուրիշ մը կը խոստանայ նաքեկէն (գեղեցիկ) պուլուին (մանչ) տալ իր աղջիկը, եթէ Աստուած պարգեւէ...

Աղջիկ մը դպրոց կը յաճախէ քանի գեռ նշանուած չէ, երբ նշանուի, հետեւեալ օրը սկեսուրը կամ կին մը կը դրկէ աղջկան

մօրը կամ ինքը անձամբ կը տեսնէ մայրը եկեղեցիին մէջ եւ կ'ըսէ. «Քըլը՝ (քա), աշխոր թոքնո երկու իրիսիս, փիճի գատոր աջկինը (աղջիկ) կո՞ց (ի՞նչպէս) դորս կո հոնէք. մեր նշանածը թիվիդ նիրքիւր հոց իփիւր, տուն աւիւն ու քուշ (կրակ, վառարան) վառիւր թուղ ուսնո» (Բիւզանդիոն, Կ. Պ. 1902 թ. 1693):

Իր գաւառաբարբառով տուած է Յ. Յ. Ալլավերտեան երկար նկարագրութիւն մը, որմէ կը քաղեմ.

Նշանտուք. - Երբ համաձայնած են այս ինչ աղջիկը իրենց մանչուն հարս առնել, տան հայրը կը հրաւիրէ քահանան ու անոր կը յանձնէ մատանի մը կամ 20 ոսկինոց մը եւ ազգականներէն մեղր, հելվա, ընկոյզ, չամիչ եւ նուէրի դրամ կ'առնեն ու միասին կ'երթան աղջկան տունը, կը բարեւեն ու կը նստին: Տնեցիները կը պատուեն գլանիկով, օղիով, գինիով եւ ճոխ սեղանով: Քահանան խօսքը տանտիրոջ ուղղելով կ'ըսէ. Եթէ Տէրը կամենայ, ձեր աղջիկը այս ինչին տղուն տալու խօսք ըրած էք. եթէ հաւան ես, առ սա նշանը: Տանտէրը եթէ հաւան է, քահանան նշանը կ'օրհնէ եւ կը յանձնէ աղջկան մօրը, որ մատանին աղջկան մատը անցնէ, իսկ դրամն ալ գլխու վրայ կապէ: Ներկաները կը մաղթեն. «Աստուած շնորհաւոր ընէ»: Աղջիկը քահանային եւ հիւրերուն ձեռքերը կը համբուրէ: Սեղանը մէջտեղ կու գայ եւ կը սկսին ուտել խմել - այրերը զատ, կիները զատ: Ահա ուտելիքներու տեսակները. մըսէով սողանլը, օռուզ ապուր, միջէով քուֆտոյ, հում քուֆտոյ, տապկոժ հաւկըթ միդրէով, պաստըրմոյ, տուլմոյ, սիսեռ, պոտուզ, հափըսոյ... Մեկնած ատեն տնեցիք մէկ մէկ նուէր կու տան հիւրերուն:

Հարսանիքը. - Հարսանիքէն երկու-երեք շաբաթ առաջ տղուն հայրը քանի մը պատուաւոր մարդիկներով քահանան կը ղրկէ աղջկան տունը՝ իմանալու համար թէ կը փափաքի՞ն, որ եկող շաբթուն հարսա-

նիքն ընեն: Տնեցիք կը յայտնեն, թէ աճապարելու բան չկայ, աղջիկը դեռ պզտիկ է եւ յետոյ պէտք ունին 5 ոսկի, 10-15 գոյգ կօշիկ եւ այլն: Աղջկան ծնողքը կ'ընդունին իրենց պահանջածները եւ գնումները կ'ընեն կամ շուկայէն կամ Մարաշէն: Տեղի կ'ունենան «Թագուոր»ի լուացուիւր, հալաւօրհնէքը, հինադրէքը, հարսնառը եւ պսակը (Տե՛ս Յ. Յ. Ալլավերտեան, Ուլնիա կամ Զէյթուն, Կ. Պ. 1885, էջ 71-91. Տես ասոնց թարգմանութիւնը՝ Զէյթունի Պատմագիրք Պուէնոս Այրէս 1960, էջ 403-410):

Հետաքրքրական է Զէյթունի հարսին հագուստը. - Տպածոյէ շապիկ, Ղութնուէ կիսաշապիկ, մետաքսէ թիկնոց, կարմիր տայրօ (երկայն պարեգօտ մը), վարդագոյն կօշիկ, որուն մէջը դրամ կը դնեն. ով որ ոտքէն կօշիկը հանէ, դրամը ան կը ստանայ. գլուխը կը զարդարեն վեց կանգուն կտաւով, ճակատին զարդ մը, վզնոց մը, 10-20 թաշկինակ. ամենուն վրան ալ կը նետեն երեսի քող մը, անոր վրան ալ սաւան մը, ասոր վրան ալ դաստառակ մը: Իսկ փեսային զգեստներն են. - Շապիկ թեզանիքներուն ծայրերը ծոպիկներով, շողիկ, վարտիք, կիսաշապիկ, վրան ալ վանքի մէկ վարդապետին հին վերարկուն, նոր Ֆէս, թաշկինակ, գօտի, ձեռքի մէջ թուր մը (Զէյթունի Պատմագիրք, անդ, էջ 408-9):

Աղուոր նկարագրական մը ունի Հայկ-Լեւոն Զէյթունի իր յուշերէն «Հարսանիք մը մեր տան մէջ» (Զէյթունի Պատմ., էջ 445-9), ուր կու տայ նաեւ հարսներգ մը, դժբախտաբար թրքերէն:

Սիրուն է Հարսանեկան պարն ալ (արդեօք ի՞նչ անունով), զոր կը պարեն «20-25 երիտասարդներ ձեռք ձեռքի տուած, ոտքերը զուգընթաց ելեւէջներով, ձեռքերը ծածանուտ թաշկինակներով, գլուխները համաչափ շարժուձեւով: Պար մը, որ հրապոյր էր բոլորին...» (Անդ էջ 449):

ՀԱԾԸՆԻ ԵՒ ԱՆՈՐ ԳԻՒՂԵՐՈՒՆ ՀԱՐՍԱՆԻՔԸ

ՀԱԾԸՆԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Երբ աղջիկը 14-15 եւ տղան 16-20 տարեկանի հասնէր, ծնողքը կը մտահոգուէր զանոնք կարգելու մասին: Ծնողք կը նշանէին այդ տարիքին եւ կամ անկէ առաջ, մինչեւ անգամ օրորոցին մէջ գտնուող մանուկները իբրեւ պեշիկ-քերթմէ: Երբեմն ալ տղուն մայրը աղջկան ծնած օրն իսկ, կ'երթար այդ աղջկան բերանը շաքար կը քսէր, իբր նշան իր մանչ զաւակին կամ թոռնիկին իբրեւ հարսնցու...

Գալով նշանտուքի ձեւակերպութեան, երկու կողմէ օր մը կ'որոշուէր, որ կ'ըսուէր «Կեսալըխ»: Տղուն ծնողքը, ազգականներ եւ տան քահանան կ'երթային աղջկան տունը: Աղջիկը ներս գալով կը համբուրէր բոլորին ձեռքերը. քահանան կ'առնէր ոսկի մատանի մը կամ ոսկի օղակ մը եւ զայն աղջկան մատը անցնելով կամ օղակը ականջը կախելով կ'աղօթէր պահպանիչ մը, որմէ յետոյ ներկաները իրար կը շնորհաւորէին «խայլուն» ըսելով: Ասկէ վերջ տղուն ծնողքը ազգականներով կող ուտելու կ'երթային աղջկան տունը: Կողը ոչխար մըն էր փորը բրինձով լեցուած եւ տղուն տունէն ղրկուած աղջկան տունը:

Հարսանիք. — Պսակի օրերը մօտեցած տղուն ծնողքը քանի մը ազդեցիկ անձեր կը ղրկէր աղջկան ծնողքին առաջարկելով այս ինչ օրը հարսանիք կատարել: Սա կը կոչուէր «կիս ալխի» առնել: Աղջկան ծնողքը հաւանութիւն կը յայտնէր: Պսակէն ութ օր առաջ աղջկան կողմը կը պատրաստէր «պըռիքը» (օժիտ), իսկ տղուն կողմը հարսնցուին ծանրագին եւ բեհեզեայ զգեստը: Հարսնեւորներուն լուր կամ հրաւիրագիր կը ղրկուէր: Բարեկամներ իրենց զրաստնեով հարսանիքի փայտ բերելու կ'երթային: Հարսանիքը կը տեւէր 3-8 օր: Պսակէն օր մը առաջ փեսան կը սափրուէր, յետոյ

աղջկան ծնողաց կողմէ ղրկուած հագուստները կը հագցուէին անոր: «Սաղտըճ» կոչուած թիկնապահ մը, սուրը ձեռքը, միշտ փեսային կողքին էր: Ամբողջ գիշերը մախրէ ջահերով հարսնեւորները կ'երգէին, կը պարէին ու կը զուարճանային մեծ տան մը տանիքին վրայ, յատկապէս կանգնուած այծէ մագէ հիւսուած չուլէ վրանի մը տակ:

Պսակ. — Առտուան դէմ բոլոր հարսնեւորները թարոր կազմած, մախրէ ջահերով եւ մոմերով կը դիմէին դէպի աղջկան տունը փեսացուի ընկերակցութեամբ: Քահանան աղջկան եւ փեսային ձեռքերը միացնելով կ'արտասանէր պահպանիչ մը. յետոյ կ'ուղեւորուէին դէպի եկեղեցի, հարսնցուն ձիու վրայ, իսկ փեսան հետիտան:

Պսակի արարողութիւնը կատարուելէ վերջ, շարականներով ու երգերով կը վերադառնային փեսային տունը, որուն դրան առջեւ կը մորթուէր ոչխար մը, կը կոտորուէին ջուրի կուժեր. ժողովուրդը կը շնորհաւորէր «Խայլուն» ըսելով եւ կը սկսէին ճաշել մատաղ ապուր, մսեղէն ու բանջարեղէն կերակուրներ: Ի վերջոյ քահանան պահպանիչ մը կ'աղօթէր եւ ժողովուրդը փեսային ճակատը կապուած խաչը համբուրելով կը մեկնէր: Հարսանիքը լմնցած էր, բայց հարսը երեք օր իբրեւ հիւր կը պահուէր, առանց փեսային յանձնուելու» (Յ. Պ. Պողոսեան, Հաճընի ընդհանուր պատմութիւնը. Լոս Անճելըս 1942, էջ 189-92):

ՄԱՐԱՇԻ ԵՒ ԱՆՈՐ ԳԻՒՂԵՐՈՒՆ ՀԱՐՍԱՆԻՔԸ

ՄԱՐԱՇԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Աղջիկտես-խօսքկապ. — «Հին ատեն Մարաշի մէջ ալ օրորոցի խնամիխօսութիւն կը պատահէր: Ի նշան փոխադարձ հաւանութեան օրորոցին վրայ քերդ (նշան) կ'ընեն եղեր: Կար նաեւ երկրորդ տեսակ կանուխ ամուսնութիւն մը. — մանչը 16-18 ,

աղջիկը 14-16: Ասոնք վերջ գտած էին: Յարմար կը նկատուէին 20-25 եւ 17-20 տարիքները: Երբ ծնողներու հաւանութիւնը առնուէր, իրար կը շնորհաւորէին ու կ'ըլլային խնամիներ: Իբրեւ նշան կը տրուէր ոսկի զարդեղէն մը: Տղուն կողմէ մեծ ափսէ մը շաքարեղէն ու պտուղ կը դրկուէր աղջկան տունը «տարոսը տուն մնացորդներուն» մազթանքով: Օր մըն ալ աղջկան կողմէ տղուն կ'երթային եւ փեսացուն կու տային նուէրներ, օրինակ ոսկի ժամացոյց: Աստուծոյ հրահրութիւնը «չեքերէ գարշը»: Պաշտօնական նշանաւոր ակնարկ վերջը տեղի կ'ունենար եկեղեցւոյ մէջ, ուր նշանածները մատանի կամ ոսկի զարդեր կը փոխանակէին. կ'երգեցուէր «նշանաւ ամենայաղթ խաչի քով»:

Հարսագիրք. – Կը կատարուէր բացի պաշքի, Կիրակի եւ արգիլեայ օրերէ, երկուշաբթի, երեքշաբթի եւ շաբաթ օրերը: Կը պատրաստուէր մասնաւորապէս քաթա, կը բերուէին նուագածուներ ջութակ, քանոն (68 թելով գործիք), սանթուր (ցպիկներով նուագ) եւ տէֆ: «Հալաւօրհնէքը» եկեղեցին կը կատարուէր «Այսօր երկնայինք» շարականով, յետոյ «Խորհուրդ խորին»ով կը հագուեցնէին փեսան, որմէ յետոյ կը կատարուէր պակը: Թաքորով վերադարձին, փեսային տունը, կը մորթուէր ոչխար կամ այծ: Տան սանդուխէն վեր ելած ատեն հարս ու փեսայի զուլիսը կը նետէին շաքար եւ մանրուք դրամ: Այդ օր փեսան կը կոչուէր «տէգվիւր» (թագաւոր), խաչ բռնողը կ'ըլլար «տէգվիւր-էխպէր»: Պսակի յաջորդ օրը, երբ քահանան նարօտը քակէր - «թագվերաց» - նորապսակները արտօնուած կ'ըլլային առագաստ մտնելու» (Գր. Հ. Գալուստեան, Մարաշ, Նիւ Եորք 1934, էջ 319-26):

ՖԵՆՏԸՆԻՍԳ ԳԻՒՂ -

«Ձընտըճագի մէջ օրորոցէն նշանելու սովորութիւն կայ: Ամուսնութեան համար աղջկան տարիքը 14-15, իսկ տղուն համար 17-20է: Նշանաւոր. երբ երկու ընտանիք

հաճութիւնը կ'ունենան խնամիներ ըլլալու, տղուն կողմէ տաներէցը աղջկան ծնողքին կը յանձնէ գոյգ մը ապարանջան (ապրճոն) եւ կամ գոյգ մը ոսկի (ղազի) իբրեւ նշան: Նշանաւոր եւ պսակի միջեւ կը թողուի մէկէն մինչեւ երեք տարի: Այս միջոցին խնամիներու փոխադարձ այցելութիւններ կ'ըլլան, մանաւանդ տօներու առթիւ: Նուէրներով հարսնցու տեսնելու կ'երթան. տղան եւ աղջիկը չեն կրնար իրար տեսնել մէկէն մինչեւ երեք տարիներու ընթացքին:

Ամուսնութիւն. – Երբ երկու խնամիներու համաձայնութեամբ հարսանիքի օր կ'որոշուի, պսակի օրէն շաքաթ մը առաջ տղան եւ աղջիկը առանձին խոստովանելով կը հաղորդուին եւ հարսանիքի պատրաստութիւններ կ'ըլլան: Պսակի թուականէն երկու օր առաջ տղուն կողմէ հարսնեւորներ քահանայով եւ տիրացուով հարսնային տունը կ'երթան հարս դարձարելու (հորս ճարդեր), ուր կը սկսի հրացանաձգութիւն (կիւլպէնկ): Ազսպ պաշին ափսէի մը մէջ աղջկան զգեստները կը տանի. տարեց կիներ կ'ընդունին դայն ու կը հագուեցնեն աղջիկը եւ կը հինայեն (հինօ) անոր ձեռքերը եւ այդ միջոցին քահանան ու դպիրներ օրուան պատշաճ շարականներ կ'երգեն եւ քահանայի պահպանիչով կը վերջանայ հանդէսը:

Պսակի օրը եկեղեցին կը զարդարուի եւ գորգ կը փռեն դուրսի դռնէն մինչեւ խորանի առաջ: Պսակի արարողութիւնը տեղի կ'ունենայ զիւղի աղաներու եւ հանդիսականներու ներկայութեան: Զոյգ մատանիներ մէջտեղ կը դրուին, որ իրար կապուած կ'ըլլան մետաքսէ բարակ թելով մը: Քահանան հարս ու փեսային աջ ու ձախ կողմերը կը կայնեցնէ կնքահայրերը եւ անոնց կողմէ հաւանութեան բանաձեռի հարցումները, որոնք կը կրկնուին երեք անգամ եւ քահանան կը ստանայ հաստատական պատասխան: Եկեղեցական հանգիսաւոր շուքով տեղի կ'ունենայ պսակի արարողութիւնը եւ քահանայի պահպանիչով կը վերջանայ: Ազսպ պաշին եկեղեցւոյ դուռը

կանգնած հանդիսականներուն նուէրներ կը բաժնէ, տարուսը ձեր գաւակին ըլլայ (տարուսը ձեր պըրրգան թոնոյ) մաղթանքներով: Իսկ հանդիսականները «Աստուած խայրը թենէ» կը պատասխանեն:

Հարս ու փեսայ եկեղեցիէն դուրս գալուն պէս կը սկսի հրացանաձգութիւնը (կիւլպէն), թագաւոր եւ թագուհի ձիերու վրայ նստած թաբորը դանդաղօրէն կը շարժի դէպի հարսնետուն: Ըամբուն վրայ հարսին ձիուն դուրս կը բռնեն եւ կամ չուանով մը թաբորի ճամբան կը կտրեն, մինչեւ որ կնքահայրը տեղւոյն վրայ օրուան պատշած (էփէչք) երգ մը չերգէ եւ հոն հաւաքուող փոքրիկներու խումբին մէջ զբամ եւ կամ յեպլեպի չնետէ: Երբ թաբորը կը հասնի փեսային տան առջեւ, դեռ հարսը վար չիջած ազապ պաշին կոնք մը (յեկէն) կը ներկայացնէ անոր, որ ձեռքերը խմոր շաղելու ձեւով կը շարժէ կոնքին մէջ: Փեսային հայրը իր կարողութեան համեմատ արտ մը, այգի մը կամ պարակզ մը կը նուիրէ հարսին որպէս սեպհականութիւն մինչեւ մահ:

Հարսանեկան հանդէսի ընթացքին երիտասարդներ առանձին, աղջիկներ եւ հարսեր առանձին կը պարեն տաւուլ-գուռնայով ամբողջ ցերեկ ու գիշեր: Հանդէսի ընթացքին այդ պարողները զարդարուած են Շամդուի թնուսը պարեգօտով, Շամ Թարսպուլուս գօտիով, եւ կիւլիւ շեֆթէյի կօշիկով. ձեռքին մէջ կ'ունենան մետաքսէ թաշկինակ մը, որուն մէջ կը դրուի խնձոր մը կամ նարինջ մը:

Փեսան դուռը կանգնած տարեցներու ձեռքերը համբուրելով կը ստանայ շնորհաւորական մաղթանքներ. - «Աստուած խայրը թէնէ, գըսմէթը պէօլ թէնէ, ուտկէն ուղուրլութոնոյ»:

Հարսին օժիտներն են. թաշկինակ, գուլպայ, շապիկ եւ ձեռագործեր: Հարսանիքը վերջացած նորապսակները 8 օր վերջը առագաստ կը մտնեն: Այդ ութ օրը փեսան կնքահօր տունը կը մնայ եւ անոր ի

պատիւ ճաշկերոյթներ կը տրուին: Ութ օր վերջ պսակադիր քահանան կու գայ, նոր ամուսնին անոր առաջ կը ծնրադրեն եւ քահանան խրատներ կու տայ անոնց. - մերձաւորութեան մէջ շափաւոր ըլլան, տօնական, պահքի, Կիրակի եւ տէրունական օրերուն զգուշանան, յղութեան առաջին օրերէն մինչեւ ծննդաբերութենէ 40 օր յետոյ, եւ այս պատուէրները կու տայ իբրեւ եկեղեցական օրէնք. անոնց կը մատնանչէ, որ այս պայմաններով առաջ եկած սերունդը կ'ըլլայ զօրաւոր.

Նոր հարսը 40 օր ետքը իր ծնողաց կը տարուի (դարձ). հոն 15 օր մնալէ յետոյ, տարեց տիկնոջ մը հետ իր տունը կը վերադառնայ: Նոր հարսը չի խօսիր կեսրայրին (պորինպոպ) եւ կեսուրին (պէրմէր) հետ մինչեւ մէկ տարի: Փեսան ալ չի խօսիր աներին (դայինպոպ) եւ զօքանչին (դայիմէր) հետ առանց ստիպողական հարկի» (Ֆընսըճագ, Մոնթէվիտէօ 1949, էջ 26-28):

ԱԿՆԻ ԵՒ ԱՆՈՐ ԳԻՒՂԵՐՈՒ ՀԱՐՍԱՆԻՔԸ

ԱԿՆԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Ակնի հարսանիքի մասին շատեր գրած են. կու տանք անոնցմէ քաղուածք մը:

Յ. Ծանիկեան (Հնուլթիւնք Ակնայ, Կ.Պ. 1895) կը գրէ.

Հին ժամանակ, երբ պատանին 18-20 տարեկան ըլլար, ծնողք կը սկսէին անոր ամուսնութեան մասին մտածել. Աւելի հին ստեն ոմանք օրօրոցի մէջ արդէն կը նշանէին աղջիկը (պեշիք քեսմէ): Բայց աղետալի հետեւանքները եւ կրթութիւնը ցոյց տուին, որ ընտրութիւնը ամուսնացողներուն իրաւունքն է: Երբ երկու կողմէն ծնողք եւ ընտանիքը համաձայն են, միջնորդ ազգականը կ'երթայ աղջկան տունը, առաջարկ կը ներկայացնէ եւ անոնց հաւանութիւնը կը ստանայ:

Նախապէս նշանի (փեկ) 20-նոց ոսկի մը կը տրուէր, յետոյ փեսան, քոյրն ու հարսերը կը ժողովուէին ու նշանտուքի կերթային: Ընտանիքները փոխադարձաբար աղջիկտեսի եւ փեսատեսի կերթային եւ նուէրներ կու տային: Տուփ զրկելու սովորութիւն մըն ալ կայ. արծաթէ տուփի մ մէջ ոսկիներ, արծաթ դրամներ լեցնելով դեռատի աղջիկներու ձեռքով կը զրկեն հարսնացուին: Հարսանիքի օր որոշելը փեսայի ծնողքին իրաւունքն է: Պսակը սովորաբար երկուշաբթի կը կատարուի: Ուրբաթ կամ շաբաթ օրէն սկսած հրաւէր կուղարկուի ազգականներուն: Շաբաթ գիշեր աղջկան կողմէ կիներ հինան ջուրով շաղելով աղջկան գլուխին քիչ մը կը քսեն՝ երգելով (թրքերէն):

Փեսացուին ածիլումը եւ «թագւոր հագցնելու» արարողութիւնը հանդիսաբար կը կատարուին: Քահանան եւ դպիրներ շարական երգելով հալաւը կ'օրհնեն: Երբ փեսային զգեստը կը հագցնեն, երկու հոգի պարեգօտը կամ թիկնոցը անոր շուրջը երեք անգամ կը դարձնեն եւ բարձրաձայն «Աստուած շնորհաւոր անէ» կ'ըսեն: Յետոյ փեսային հայրը որդւոյն ճակատը համբուրելով գտակը գլուխը կը դնէ: Հարուստ ծնողներ անոր մատանի, ժամացոյց կամ այլ նուէրներ կու տան եւ զրպանը դրամ կը լեցնեն:

Տօքթ. Մ. Ս. Գաբրիելեան փեսայի զգեստաւորումի մասին կը գրէ.

Կիրակի առաւօտ փեսան կը հագցնեն: Փեսայի զգեստաւորումը լուրջ արարողութիւն է: Կնքահօր կ'իյնայ այդ պաշտօնը: Կնքահայրը ամէն կտոր հագցնելէն առաջ երեք անգամ փեսային շուրջը դարձնելով կ'ըսէ երեք անգամ ալ «Աստուած շնորհաւոր անէ»: Այս վերջինը բոլոր հանդիսականները միասին կ'ըսեն: Յետոյ կ'երգեն.

«Ելի կայնէ, քագո՛ր աղբար,
Ես քեզ գովեմ գլխոյ ի վար.
Առաջ ես քու հասակդ ըսեմ,

Որ շինարի ծառ կը նմանիս,
Անկէց ես քու երեսն ըսեմ,
Որ լուսընկի կայ կը նմանիս,
Անկէց ես քու մազերն ըսեմ,
Որ առիւծի բաշ կը նմանի,
Անկէց ես քու աչերն ըսեմ,
Որ շահէնի աչ կը նմանի»

(Անահիտ, Փարիզ, 1911, էջ 58)

Հարսին հալաւը նկարագրած է Վ. Գ. Խարրեան հետեւեալ ձեւով.

Թաւշեայ անդրավարտիք կամ շալվար, ոսկեհոռն էնթարի կամ Փիստան, մէջքի թանկագին շալ, կիւճիք մուշտակ, դոյով (երկայն) մուշտակ, զոր անոր վրայէն կը հագնի, ոտնաման, եազմա մը, զոր գլխուն կը կապէ մազերը հաւաքելու եւ տաք պահելու համար, վերարկու, պինիշ, Ֆերածէ, զոր կը գործածեն փողոցին մէջ: Այս զգեստներուն վրայ կը ձգեն կարմիր քող մը, ոսկեթել բանուած, որ մինչեւ ոտքերը կ'երկարի. աջ ձեռքին վրայ ձգուած է ճերմակ թաւշեայ թաշկինակ մը, զոր բերնին առջեւ կը բռնէ մինչեւ առագաստի գիշերը» (Հանրագիտակ, Կ. Պ. 1900, էջ 1366):

«Հին ատեններ կիներու գլխանոցը մը կազմուէր փոքրիկ ֆէսէ մը, որուն գագաթը կը գտնուէր մարգարիտէ բոլորակ զարդ մը ոսկեշար, իսկ գլխուն շուրջը կը փաթթէին եազմա եւ կամ շատ բարակ լաֆուռ (լահոռի) շալ մը թեթեւ ու փոքր շալին ծայրի թելերը դուրս թողուած» (Անդ էջ 101, ծանօթ.):

Հարսին բաղնիքը յիշած է Սրուանձտեանց տալով անոր երգն ալ.

«Բաղնից դուռը զարկին սազը,
Տալուրտաւդ քաշեն նազը,
Ներուրտաւդ հիստեն մազը,
Այս թող շեֆէ կերցնեն,
Ջուր ուզես, շեպէթ խըմցնեն»:

(Արեւելեան Մամուլ, Զմիւռնիա 1883, էջ 375):

ԲԻՆԿԵԱՆ ԳԻՒՂ

Յ. Դանիէլեան Բինկեան գիւղի Հարսանիքի մասին կու տայ Հեգնական տողերով ոչ-ամբողջական պատկեր մը: «Փողի ու թմբուկի արձագանգը քանի մը օրերէ ի վեր կ'երկարաձգուի... Հարսնեւորներու խումբ մը զգայազիրկ եւ խելակորոյս... Բաւական ժամանակ անցած է այսպէս ու ժամը տասին մօտեցած, քահանային կը սպասուի. իսկ անդին կ'իններու խումբը Հարսնցուին շուրջը հաւաքուած կ'երգէ:

Եկեր ենք կու տանիմք, մաբերդ լացու.
Խաբերով լաթ ենք բերեք, կոնակդ անցու.
Խնամի, տունըդ շէն կենայ,
Արեա (միշտ) դոնակդ բաց կենայ....

Գաւառէ գաւառ այս երգերը կը գատորոշուին իրենց հնչումներով: Դպիրը «Ուրախացիր Սրբուհի» կ'երգէ, իսկ քահանան կը կատարէ կէս-պսակը, հարսն ու փեսան գլուխ-գլխի կանգնեցնելով: Մեկնումի ժամը հնչած է, դուրսը «Մի՛ լար, մարիկ, մի՛ լար, աշուիդ կ'աւրի, քեզ պզտիկ կարգողին տնակն աւրի»: Առաւօտուն

Հարսն ու փեսան իրենց հետ ունենալով աւելի ստուար բազմութիւն մը, նուագարաններով կ'առաջնորդուին եկեղեցի, ուր կ'իսատ ձգուած պսակը կ'ամբողջացնէ քահանան... Հարեւանցի ակնարկ մը բաւական է այդքան խուռն բազմութեան մէջէն փեսան գտնելու համար, որովհետեւ կուրծքին վրայ Աւետարան մը, իսկ ճակատին ալ խաչ մը կը կրէ. շատ տեղեր քահանայի շուրջառ մըն ալ կ'աւելցնեն: Տան մեծերէն երկու հոգի դրան սեմին վրայ կը սպասեն դէմ դէմի: Ու երբ քողարկուած հարսը առաջին անգամ ըլլալով կը փորձէ այս դռնէն ներս մտնել, թեւերնին բարձրէն անոր գլխուն վրայ կը բռնեն, որպէս զի միշտ հլու հնազանդ ըլլայ իրենց: Խաղերու ու պարերու այլազան առատութիւն մը կ'ո-

ղողէ հարսնետունը: Կ'իները շատ շատ խաղեր ունին այս պահուն երգելիք. նմոյշ մը անոնցմէ.

Երկու կախուկ կայ ի բունը,
Կը կաթէր երեսին գունը,
Դուն ես մեր տան ոսկի սունը:

Ատոռանց կանուխ, կանուխ,
Մտնեմ պաղաղ, քաղեմ անուխ,
Հարսին սիրուն է պոկանուխ:

Մեր տունը ձեր տան դիմաց,
Երբօր անեմ աջօխ իմաց,
Ելիւ ի իկոր կամաց կամաց, եմ

(Արեւելք, Կ. Պ. 1909 թ. 5211):

ԱՊՈՒՉԵՆ ԳԻՒՂ. – 1848-ին տպուած կանոնագրութիւն մը կը սահմանէ Ապու-չիս գիւղի համար. 1. Նշանտուք ըլլալու ատեն միայն բարեկամին մէկը կնքահայրը հետը առնէ քահանայով, առանց ուրիշ մարդու ու շալղըլի. 2. Նշանին ոսկին 80, 60, 20 դուռուշնոց ըլլայ. 3. Բարեկողմանէ Հարսնցուին ոսկի տալ կամ ղրկել արգիլուած է... 4. Տակաւին չկարգուած փեսային ընծայ տալ արգիլուած է. 5. Հարսանիքի տէրը երկու օր առաջ աղջկան տիրոջը իմաց տայ. 6. Փեսային թրաշին մարդ չհաւաքուի. 7. Փեսան հագուեցնելու ատեն ուտելիք կամ խմելիք չըլլայ. 8. Խնամի գացողները կերակուր չուտեն... մինակ խահուէտով... 9. Պսակը առաւօտուն ըլլայ, երեկոյին վար առնուի... 10. Ճեհէզին մէջ դրուած հագուստները կիւմէզէն մերինոզէն վեր բան չըլլան. Սրմա իշի, թանթելայ իշի չգտնուի... 11. Արծաթեղէն ու ոսկեղէն եւ մարգարտեղէն չգտնուի. 12. Հագցուցած (հալաւ) հագուստն ալ մէկ խաթ ըլլայ:

(Աստղաբերդ, Կ. Պ. 1952, էջ 87-88):

ԱՐԱԲԿԻՐԻ ԱՆՈՐ ԳԻՒՂԵՐՈՒ
ՀԱՐՍԱՆԻՔԸ

ԱՐԱԲԿԻՐԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Օրիորդ մը Արաբկիրէն կը գրէ 1879 մայիս 28-ին.

«...Մանկահասակ օրիորդը տակաւին արբուկքի չհասած, 11-12 ծաղիկ հասակի մէջ ամուսնութեան կը հրաւիրեն, որ չուսնի թերեւս ճաշակ եւ զգացում... Հարսնացուցման վայրկեանին կը կապեն անոր բերանը եւ լեզուն, որ չխօսի մէկու մը հետ եւ 15-20 տարի լուռ ու մուսջ կեանք մը անցնէ...» (Մասիս, Կ. Պ. 1879 թ. 2371):

Թղթակից մը 1879-ին Արաբկիրի աղջկանց դպրոցը կ'այցելէ եւ կը տեսնէ, որ հոն 10 տարեկանէն վեր աղջիկ չկայ. կը հարցնէ թէ ի՞նչ է պատճառը. կը պատասխանի. «Հոս 11 եւ 12 տարեկան եղածին պէս կ'ամուսնացնեն...» (Մասիս, անդ, 2372):

Թղթակից մը 1886 Փետր. 21-ին կը գրէ Արաբկիրէն.

«Հոս ձմեռուան ամիսները հարսանիքի ամիսներ են. օր չ'անցնիր առանց մէկ կամ երկու պսակադրութեան, որոնց թիւը երբեմն մինչեւ 9 կը հասնի: Ամուսնացողներու թիւը ամէն տարի միջին հաշուով 150-է նուազ չ'ըլլար՝ Պսակադրութիւնը կը կատարուի եկեղեցին եւ ընդհանրապէս գիշեր ատեն: Շատ գեղեցիկ են հարսանիքի գիշերներու տեսարաններն այստեղ: Թմբուկի ձայնն եւ ջահերու լոյսերը կը լեցնեն ամբողջ տունը եւ փողոցներ, կարծես ազգային տօնախմբութեան մը հանդէսը կատարուի: Երիտասարդի մը տունէն նուազածուներու խումբ մը կ'երթայ հարսին տունը, ուր հարսի մազերու հիւզքին արծաթ թելեր են խառներ եւ հինայով կարմիր են ներկեր մատներն ու մազերը...» (Արեւելք, Կ. Պ. 1886 թ. 657):

Յ. Պ. Մ. Արաբկիրէն կը գրէ 1890.12.23-ին «Հարսանիք յԱրաբկիր» խորագրով.

Նշանախօսութիւնը կը կատարուի այսպէս: Մանչուն ծնողքը երեկոյ մը տաներէցին եւ քանի մը բարեկամներու հետ խօսք կապը կը տանին, որ է ոսկի, մահմուտիէ կամ քրեմից եւ կը յանձնեն աղջկան ծնողքին: Յետոյ կը սկսին նուիրատուութիւնները, որ կը կոչուին խնդիր նապալայի: Երիտասարդին ծնողքը որչափ այցելին խնամիրն, պարտին հարսնացուին նուիրել յիշուած ոսկիներէն մին կամ միւսը եւ յաճախակի այցելութիւնը պարտաւորիչ է, զի պէտք է ոսկին շատցնել շարոցի համար: Փոխադարձաբար պիտի զրկուին շատ անգամ փեսացուին տունը մեծաքանակ շաքարեղէն, միրգերու ընտիր տեսակներ, մետաքսեղէններ, զգեստներ...

Կը հասնի հինայ տանելու հանդիսաւոր ժամանակը: Երկու օր եւս եւ ահա կը լսուի սագերուն ձայնը. հարսնետունը վերածուած է բազմաթիւ բաղնիքի, ոմանք կը պարեն, ուրիշներ կը խօսին ու կը խնդան. խումբ մը երիտասարդներ կը կատարեն փեսան փախցնելու հնօրեայ արարողութիւնը. դուրս, դուրս, տունէն դուրս կը փախցնեն զայն, որ մի վայրկեան դրացի տուն մը մնալէ ետք, կը վերադառնայ:

Յետոյ փեսայութեան զգեստները հագցնելով, լապտերներով ու ջահերով, ձի հեծցուցած կ'առաջնորդեն եկեղեցի կէս գիշերուան կեցցէներու գոչիւններով:

Մինչ այն մինչ այն, հարսնաօր գացող խումբ մը օրիորդին տունը հանգչելէ վերջ նոյն ձեւով կը բերեն նոր հարսը, սքողուած գունաւոր, նուրբ եւ կիսաթափանց քողով մը, որուն տակ կը նշմարուին կուսին աչքերէն հոսող արցունքի շիթերը: Ս. Պսակի արարողութենէն վերջ երկու նորապսակները ձի հեծած կը տարուին տուն, ուր այժմ աւելի ոգեւորութիւն կը տիրէ. բակին դռան սեմին վրայ կը զենուի ոչխար մը անոնց ի պատիւ...» (Արեւելք, 1891, թ. 2104):

Նախ փեսային տունը կը կատարուի հալաւօրհնէքը, յետոյ քահանան աղջկան

«խօսքկապը - երկու ոսկի, մէկ մատանի, մէկ ապարանջան եւ մէկ պիւլպիւլի շղարշ, կեսրոջ կողմէ տրուած զգեստով միասին - կը տանի աղջկան տունը եւ հոն ալ կը կատարէ հալաւօրհնէքը: «Խօսքկապ»ը տանող քահանայէն քիչ յետոյ ճամբայ կ'ելլէ «խնամտաք»ի (խնամիններ) բազմութիւնը - միայն այրեր - լապտերնեով, մոմերով եւ նուագարաններով (տաւուլ-զուռնա): Ասոնք կու գան հարսը պսակի տանելու համար: Հարսը առանջին սենեակի մէջ կը հագցնեն մօրը եւ քոյրերու արտասուալից ներկայութեան: Երբ պատրաստ է, կը հեծցնեն զարդարուած ձիու մը վրայ եւ «խնամտաք» բազմութիւնը կ'ուղղուի դէպի եկեղեցի:

Հարսին քովերէն կը քալին երկու «հարսնեղբայրներ», որոնք կրնան ըլլալ եղբայր կամ ազգականներ: Նոյն միջոցին փեսան ալ հեծած իրեն համար պատրաստուած ձիուն վրայ բազմութեամբ կ'ուղղուին եկեղեցի: «Խնամտաք» ու փեսայի խումբը միեւնոյն ժամանակ կը հասնին եկեղեցի. հարսն ու փեսան առանձին առանձին կ'երթան ներս: Այս ժամանակ է որ փեսան աննշմարելի կերպով կը գոցէ գրպանին մէջ ունեցած բաց զմելինը գոցելու համար թշնամիներու բերանը:

Հարս ու փեսայ կը խոստովանին եւ կը կանգնին սուրբ պսակին, որուն ներկայ կ'ըլլան բոլոր հրաւիրեալները: Պսակող քահանան փեսայի գլխարկին եւ հարսի մագերուն կը կապէ մեղրամոմէ խաչ մը եւ կարմիր ճերմակ թելերէ նարօտը: Փեսայի ձիուն քով կը սպասեն մէկ քանի բարեկամներ, որպէս զի մի գուցէ թշնամիներ յաջողին ձիուն ասպանդակէն քար անցնել եւ ատով արգելք ըլլալ երկու ամուսնորուն խերելուն եւ պտղելուն: Եկեղեցիէն ելլելով հարս ու փեսայ կը հեծնեն ձիերը եւ փեսան առջեւէն, հարսը ետեւէն կը դիմեն փեսայատունը: Ճամբան «հարսեղբայրներ» ու ձի քաշողը նազ կ'ընեն եւ շատ անգամ կը փորձեն ետ դարձնել

հարսը, բայց չեն յաջողիր: Բարեկամ մտավաճառներ կ'ուզեն ոչխար մորթել, բայց նուէքներով կ'արգելուին:

Երբ մօտենան փեսային տան, տղաք եւ աղջիկներ կը դիմաւորեն նորահարսը ճրագներով ու կ'երգեն.

Եկուր, ազոուր աղջիկ, հարս եղար մեզի.
 Զծախուած, չփոխուած մալ եղար մեզի:

Փեսատան բակին մէջ շատ ուրախութիւններ կ'ըլլան. մոմերով զարդարուած խոյեր կը մորթուին. «մաշալլահ»ներու աղաղակներ կը թնդան. հրախաղութիւններ կը կատարուին եւ այլն, որոնցմէ յետոյ հարս ու փեսայ դռնէն ներս կը մտնեն կեսրոջ թելի տակէն: Մինչ փեսան կը հանգչի, հարսը ստիպուած է ձեռքպագի արարողութեան, որ շատ երկար եւ յոգնեցուցիչ ըլլալուն արաբկիրցի աղջիկները կ'ըսեն. «Հարսնութիւն, շան գերութիւն»:

Այդ գիշեր հարս ու փեսայ դէմ առ դէմ ձեռք-ձեռքի երկու բարձի վրայ կը նստին. քահանան բաժակ մը զինի կ'օրհնէ եւ կու տայ անոնց, որ կէս առ կէս կը խմեն. հարսին քողը վերցնելով շղարշ մը (պիւրիկ) կը ձգէ եւ նարօտը քակելով մը մաղթէ միաթագ, միապսակ մնալով մէկ բարձի վրայ ծերանան եւ ալեւորին: Հարսը մունջ կը մնայ տասը, քսան, երեսուն տարի: Առջընդարձը վեց-եօթը շաբաթ վերջ տեղի կ'ունենայ (Հայրենիք, Կ. Պ. 1893 թ. 370-2. տե՛ս նաեւ Armenia, Կեռլա, 1892, էջ 121. Բիւրակն, Կ. Պ. 1898, էջ 621, 765. Բազմավէպ, 1957, էջ 160. Ս. Ա. Բախտիկեան, Արաբկիր, Պէյրութ. 1934, էջ 79-108):

ՔՈՒՇՆԱ ԳԻՒՂ

Մարտիրոս Փեհլիվանեան, բնիկ Քուշնացի, հաճեցաւ իր գրի առած Քուշնայի սովորութիւնը ինծի տրամադրել Պր. Վահան Շապոյեանի (Վառնա) միջոցաւ:

Ըստ Քուշնայ գիւղի վաղեմի սովորութեան, հարսանիքը կը սկսի ուրբաթ օր եւ

փոխան հրաւիրագրի հաւկիթով, կարագով
 շաղուած, վրան շուշմա ցանուած եւ թոնրի
 մէջ եփուած պճիկներ (օշեր) կը դրկուին:
 Շարաթ օր Ազատ-պաշին նուագածուի ա-
 ռաջնորդութեամբ նախ կնքահայրն ու
 կնքամայրը, յետոյ ուրիշ հրաւիրեալներու
 բազմութիւն մը հաւաքելով կ'երթան հար-
 սին տունը, կատարելու համար հինայի ա-
 րարողութիւնը, որ շատ հանդիսական է:

Հարսնացուն գլուխը քառանկիւն թա-
 գով (գասապա) վրան կրկնագոյն շղարշով
 մը ծածկուած շրջապատուած է հարսնա-
 պահ աղջիկներէ: Կնքամայրը նախապէս
 ափսէի մէջ շաղուած հինային շուրջը շա-
 րուած մոմերը վառելով ի տես ժողովրդեան
 աջ ձեռքը բարձր դիրքի վրայ բռնած հի-
 նան, իսկ ձախովն ալ իր կողմէ հարսին
 նուիրուելիք թաշկիւնակով կը սկսի երգել ու
 պարել եւ յաջորդաբար հինան կու տայ
 հարսնապահ աղջկանց, որ նոյն յանկերգով
 կ'երգեն ու կը պարեն:

Նա, հինան, նա, նա, հինան (3 անգամ
 կրկնել),

Կնքամարդ եմ, մօր մը նման,
 Պաղշիշ կու տամ այս մայրիման,
 Աչերդ սրբէ, վնաս կու տան,
 Ափիկդ բաց դնեմ հինան:
 Նա հինան, առէ, խաղցէ,
 Հարսին չորս կողմ դարձէ,
 Դնենք հինան ափին,
 Թող թշնամիք ճաթին:

Հարսնապահ աղջիկները հինան նոյն
 դիրքով բռնած յաջորդաբար իրար յանձնե-
 լով կ'երգեն.

Հարսնուկ, սրբէ աչերդ բաց,
 Որ չըսեն քի լալկան մօրկանց,
 Թապիլեթն է մերաս ինկած,
 Ուրախութեամբ ափիկդ բաց:

Այ մոռցիր դուն հարդ ու մարդ,
 Մայրիկ ճանչցիր կեսուր մարդ,

Աղա պապա կեսեր հայրդ,
 Ոսկի տի շարէ ճակատդ:

Հարսին ձեռքը օծելու ժամանակ աւելի
 ծանր եղանակով բոլորը միասին կ'երգեն.

Ոսկի ամանի մէջ հինադ շաղեցիմք,
 Ատ հինայով ձեռներդ օծեցիմք,
 Արծաթ սանտրիկով մագերդ սայրեցիմք,
 Թել թել ըրիմք սոմա թելով հիւսեցիմք:

Աս տարոսը թող ամէնուն տունն ըլլայ,
 Աս օրհնենքով ըմմէն աղջիկ հարս ըլլայ,
 Ըմմէն մարիկ նստի աս տէրտով լայ,
 Ըմմէնս մէկ ըսենք շնատր ըլլայ:

Նուագածուներու առաջնորդութեամբ
 հրաւիրեալները կ'երթան փեսային տունը
 եւ կնքամայրը փեսային ձեռքն ալ կ'օծէ
 յատուկ նուէր մը ստանալով անկէ: Կնքա-
 մայրը կը տաղերգէ.

Ձեռներդ նաշխեցի հարսին հինայով,
 Հարս ու փեսայ ըլլիք խերով բարով,
 Երկուդ ալ նմանակ սելվի պոյով,
 Կեանքներնիդ թող անցնի խաղով
 խնդալով:

Երգախառն է նաեւ փեսային սափրե-
 լը: Իսկ փեսան հագցնելու առեն «Խոր-
 հուրդ Խորին» կ'երգեն, որմէ վերջ հապիտ
 ու կատակախօս երիտասարդ մը, որ հագց-
 նելու պաշտօնն ունի, կ'առնէ բաճկոնը եւ
 տաբատի տեղ կը հագցնէ, իսկ տաբատն ալ
 բաճկոնի տեղ, ասոր նման շատ մը կատակ-
 ներով ներկաները կը խնդացնէ: Գլխարկը
 միայն քահանան կը դնէ իր ձեռքով «Թա-
 գաւոր երկնաւոր» շարականով: - «Հարս-
 նառ»ը կիրակի կէսօրին տեղի կ'ունենայ
 փոխնիփոխ երգով, երբ հարսին զուռը փակ
 գտնելով հարկ կ'ըլլայ նուէրով մը գօհաց-
 նել: Այդ առթիւ է որ «աղջիկ լացնելու» եր-
 գերը կ'երգեն, որոնք նոյն են կամ նման
 քաղաքի երգերուն հետ: Հետաքրքրական է
 սա տունը.

Օր մը օրանց քեզ բան չիմացուցին,
Աղոտը նա նա նա նա նա,
Նշանուիրդ անգամ, եսվրում,
գաղտուկ պահեցին:

Մինչ այս փեսան արգէն եկեղեցին է,
կը խոստովանի ու կը հաղորդուի, իսկ հար-
սը ճամբայ կը հանեն ու ծանր ծանր կը քա-
լեցնեն: Հարսնեղբայրներու նազը շատ է եւ
ինչ որ փափաքին, գործադրել կու տան: Օ-
րինակ, կը պահանջեն սեղան, սինի գինիով,
օղիով, հելվայով, շիշ-քեպպով, հաւով,
եւն, որոնք կանխապէս պատրաստուած
կ'ըլլան ու կը հրամցուին: Հազիւ սակայն
քանի մը քայլ առած այս անգամ մէկը կը
ձայնէ. «Ճամբան տղմոտ է, հարսը չի
կրնար քալել, կամուրջ կ'ուզէ»: Բոլոր
հարսնեւորները կորաքամակ, ձեռքերնին
գետինը կամուրջի ձեւ կու տան: Ուրիշ մը-
«Կ'ուզեմ որ այրերը կին, կիները այր ըլ-
լան».

անմիջապէս ֆէսերն ու լաչակները
կը փոխուին ուրախութիւնը աւելցնելով:
Պսակի արարողութիւնը լրանալէ վերջ
թագաւոր-թագուհի ձիերու վրայ են. թա-
գաւորը քահանային շուրջառը կռնակը,
թագը գլուխը, խաչը շրթունքին, իսկ հար-
սը արգէն քառանկիւն թագով մը ձիերով
կը յառաջանան դէպի տուն, ոմանք «Առա-
ւօտ լուսոյ», ոմանք ազգային երգերով, իսկ
ուրիշներ նուագով ըստ կնքահօր փափա-
քին: Դրան առջեւ գառնուկ մը կամ հաւ մը
կը մորթուի եւ այս պահուս կ'երգեցուի.

Բարով եկաք բարունակ,
Արեւելք ծաղկունակ,
Եկաք, տուներնիս շէնցաւ,
Տեսով, արեւ նմանակ:

Թագաւորի մար դուրս եկուր,
Թագաւոր տղեկդ է եկեր,
Թե՛ք գացեր չիֆթէ եկեր,
Ալով հարսնուկ մ է բերեր:

Տղուն մայրը, խնկամանը հարս ու փե-
սային գլխուն վրայ պտտեցնելով կ'ըսէ.

Վարդի պէս ծիւփ ծաղկիւփ.
Մէկ բարձով մը ծերանաւ,
Զաւակներու տիրանաւ:

Կը մտնեն ներս ու կը սկսի նուագ,
պար, ուրախութիւն, կերուխում, երեք օր ու
երեք գիշեր: Այս առթիւ կը պարուի թեւ-
խաղը, որմէ ահա նմոյշ մը.

Մառն որ ծաղկի, նուշ կ'ըլլի,
Ես կարօտնամ ուշ կ'ըլլի,
Մտիս սիրածն որ տան,
Ատկէ անոյշ ի՞նչ կ'ըլլի:

Գեղերնիս շուխուր տեղ է,
Ջուրը հիւրնդի դեղ է,
Սիրած սիրածի շէն տար,
Աս ի՞նչ անօրէն գեղ է:

ԵՒԴՈՎԻԱՅԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

«Ուսումնասէր»ը կու տայ համառօտ
նկարագրական մը «Հարսանիքի հանդէս
յեւզովիս» վերնագրի տակ 1887-ին. կ'ամ-
փոփենք:

Հրաւէրներ կը բաշխուին ազգական-
ներուն եւ բարեկամներուն ներկայ
գտնուելու «Հայր մեր»ի եւ նշանի օրհնու-
թեան. հարսնեւորները կը հաւաքուին, այ-
րեր եւ կիներ զատ զատ սենեակներու մէջ,
երկու մեծ պղնձեայ աշտանակներ, քարիւ-
ղի ճրագներ եւ մոմեր կը վառին. սենեակ-
ները կահաւորուած են բաղմոցներով ու
գորգերով: Ամէնէն յարգի մեծարանքը օ-
ղին է. օղիի զաւաթին կ'ընկերանայ բարե-
մաղթութիւններու շարք մը, որ իրենք «ես-
տենութիւն» կ'անուանեն: Նուագածունե-
րու խումբ մը ջութակ, քնար եւ սազ կը
հուսպի:

Գիշերուան երկուքուկէսին երգեցիկ
տղաք մոմեր իրենց ձեռքին, կը շերեն փե-
սային հագուստները: Քահանաներ հալաւը
կ'օրհնեն, յետոյ տղաք կ'երթան շարական-
ներով փեսան բերելու: Փեսային երկու
կողմը կան մէյմէկ երիտասարդ գեղեցիկ

մոմերով. փեսան կը համբուրէ քահանային ձեռքը, որ պահպանիչ մը կ'ըսէ անոր վրայ, յետոյ ան ներկաներուն դառնալով թեմեննահ կ'ընէ, իսկ անոնք «Աստուած շնորհաւոր արասցէ» կ'ըսեն: Կը հրամցուին օղի եւ սիկար, նաեւ փեսային, որ երբ նազանքով հազիւ կը յօծարի գաւաթն առնել, դպիր մը կ'երգէ «Անոյշ, անոյշ նոր փեսային»:

Ժամը 5-ին թաբորին առջեւէն կ'երթան Հետիոտն, բայց հարսին համար կը տանին վայելուչ կազմուածքով ձի մը. թաբորին առջեւէն կ'երթան նուագողները, ապա այրեր, ասոնցմէ վերջ 6-8 պղտիկ աղջիկներ գլուխնին պսակ եւ գեղեցիկ մոմերով, յետոյ փեսան, որուն առջեւէն մեծ ջահ մը եւ ամէնէն վերջը կիներ սպիտակ սաւաններով ծածկուած: Հարսին տունը կը տիրէ տիրութիւն, որովհետեւ հարսը պիտի յանձնեն օտարներուն. կը նուագեն ու կ'երգեն մեկնումի պահուն տիրեցնելու համար հարսն ու ծնողքը: Թաբորը կ'առաջնորդուի եկեղեցի, հարսը ձիու վրայ: Պսակի արարողութիւնը կարատուելէ վերջ, փեսան կը կենայ քահանային քով, որ աւետարանը բռնած կ'ըլլայ եւ ժողովուրդը աւետարանը կը համբուրէ ու փեսային կ'ըսէ. «Աստուած շնորհաւոր արասցէ»:

Թաբորը կ'երթայ փեսային տունը, ուր կը զուարճանան մինչեւ առաւօտ: Ծաչէն վերջ այրեր ու կիներ կը միանան եւ հայուհիները կը հիւրասիրեն արու հիւրերը: Ժամը 5-ին նուագողները կ'երթան հարսը բերելու, որ հագած է եւրոպական շրջագետ, երեսը թանձր քող կամ լաչակ, վրայէն ծանրագին թաւապատ մուշտակ, գլխուն պսակ եւ ասոր վրայէն ալ ոսկեղէն կամ արծաթի թելերու փունջ մը...» (Արաքս, Պետերբուրգ, 1887, էջ 96-99):

Բնիկ Եւդոկեացի ծանօթ մտաւորական Յովհաննէս Գազանճեան ունի «Եւդոկիայի Հայ կինը» յօդուածաշարք մը, որմէ կը քաղեմ.

Աղջիկ մը երբ հարսնանալու տարիքն ունի, հարսնցու է ու կ'ընդունի բազմաթիւ աղջիկտեսի այցելութիւններ: Երիտասարդին մայրը, քոյրը, մէկ երկու մօտիկ ազգականներ կ'երթան աղջկան տունը, ուր շատ յարգանքով կ'ընդունուին: Աղջիկը ծանրութեամբ կու գայ եւ կիներու ձեռքերը կը համբուրէ, սիկար, անուշեղէն, օղի եւ սուրճ կը հրամցնէ՝ անոնց գննող նայուածքներուն տակ: Աղջկտեսի այցելութիւնը ընդհանրապէս 15-20 վայրկեան կը տեւէ:

Եթէ երիտասարդին պարագաները աղջիկ մը հաւնին, գայն երիտասարդին ցուցնելու հնարք մը գտնեն, երիտասարդն ալ հաւնի, այն ատեն խնամախօսութեան համար մարդ մը կը դրկեն աղջկան ծնողաց: Խօսքկապէն քանի մը շաբաթ վերջ տեղի կ'ունենայ երես հանելու եւ նշան տալու արարողութիւնը: Մանչը իր մօր, քրոջ եւ մի քանի շատ մօտիկ ազգականներու հետ կ'այցելէ աղջկան տունը: Աղջիկը երկար չեմբէ ըսուած ոսկեթել ճերմակ քողով մը ծածկուած կ'ըլլայ. այցելու կիներէն մին մէկդի կ'առնէ քողը եւ աղջկան համբուրել կու տայ ներկաներու ձեռքերը: Այս միջոցին մանչը եւ իր պարագաները նուէրներ կու տան:

Մանչուն նուէրը, որ նշանն է, կ'ըլլայ ոսկի ժամացոյց եւ շղթայ, ոսկի ապարանջան կամ ազամանդէ օղ: Երես հանելու եւ նշան տալու գործողութենէն վերջ, այլեւս երկու խնամիներու միջեւ ազգականութեան կապը հաստատուած է եւ ամէն առիթով իրարու հետ կը տեսնուին: Մինչեւ իսկ մանչը ազատ է այցելել իր նշանածին տունը: Հին ատեն մինչեւ քանի մը տարի կրնար տեւել նշանածութեան վիճակը: Աղջիկը կը պատրաստէ իր օժիտը, որ կը բաղկանայ ճերմակեղէններէ եւ հագուստներէ: Վերջապէս տեղի կ'ունենայ հարսանիքը եւ հանդիսական հասնառով կը տարուի եկեղեցի պսակուելու համար եւ անկէ ալ փեսային տունը...» (Արեւելեան Մամուլ, Զմիւռնիա 1903, էջ 832-35):

ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՐՍԱՆԻԸՐԸ

1. Մկրտիչ Քեսեճեան ունի «Ամասիացի հայ կիներ» գեղեցիկ գրութիւն մը, ուր կը գծէ պատկերը Ամասիայի հարսանեկան սովորութեան: Կ'ամփոփենք.

Աղջիկտեւը. - Աղջիկ մը, որ 14-15 տարեկան եղած է, ալ կրնայ տրամադրելի սեպուիլ ամուսնութեան եւ կ'ընդունի յաճախ աղջիկտեսի այցելութիւններ: Աղջիկտեսի օրերն են երկուշաբթի եւ չորեքշաբթի: Ամուսնանալիք տղուն մայրը, քոյրը, մօտիկ ազգականներ ոեւէ պատրուակով կ'երթան աղջկան տունը: Աղջկան մայրը կը կռահէ եւ հիւրերը յարգանքով կ'ընդունի: Աղջիկը անմիջապէս առտնին զգեստները (շալվար եւ կարճ պարեգօտ) կը հանէ, կը մաքրուի ու վրան գլուխը յարդարելէ վերջ կու գայ տարիքի կարգով կը համբուրէ այցելուներու ձեռքերը, յետոյ եղանակին համեմատ պտուղներով ու անուշեղէններով զարդարուած ափսէով օղի կը հրամցնէ, յետոյ սուրճ մը: Եթէ հաւնուի աղջիկը, խնամախօսութեան պաշտօնական ձեւ տրուելով այս անգամ աղջկան տունը կը ղրկուին տաներէցը, կնքահայրը եւ տղուն ծնողքը, որոնք պաշտօնական նշանախօսութիւն կը կատարեն:

Ատկէ 8-15 օր վերջ տեղի կ'ունենայ երեստեսի արարողութիւնը, որուն լուրը նախապէս տրուած կ'ըլլայ մանչուն կողմէ: Գացողներն են նշանուած մանչուն մայրը, քոյրը եւ մէկ քանի մօտիկ ազգականներ: Աղջիկը գլուխը մետաքսէ եազմա ձգած պարմանի կնոջ կամ նոր հարսի մը ընկերութեամբ կը մտնէ ներս ու կը համբուրէ ներկաներուն ձեռքերը, որոնք կու տան իրենց նուէրները, փեսան՝ գրեմից ոսկի, ոսկի ժամացոյց, օղ, եւն, իսկ միւսները մէկ մէկ ոսկի, որ փեսան ինքը անոնց յանձնած է կանխապէս: Հիւրերը կը մեծարուին օղիով ու սուրճով, տեղ տեղ նաեւ բազմախորտիկ սեղան մը: Այդ օրէն երկու ընտանիքներու մէջ խնամութեան կապերը հաստատուած

են. փոխադարձ սէր կը տածեն իրարու հանդէպ ու յաճախակի այցելութիւններ կը փոխանակուին:

Տարիէ մը աւելի չի տեսեր նշանախօսութիւնը: Հարսանեկան պատրաստութեան համար նախ մանչուն կողմէ կ'երթան աղջկան ոտքին չափն առնելու, որ նշան է, թէ 15 օրէն հարսանիքը պիտի ըլլայ: Ոտքի չափէն վերջ աղջիկը հօր տունը չի մնար գրեթէ. իր ազգականները կարգով բաղնիք կը տանին ու ճաշի կը պահեն. աղջկան ընկերացած կ'ըլլայ իր քոյրը կամ «հարսնքոյրը»: Ուրբաթ կը սկսի հարսանիքի հանդէսը: Նախ հարսնեբաղնիք եւ փեսաբաղնիք, որոնք հրաւիրեալներու բազմութեամբ կը կատարուին. ծախքերը մանչուն կողմէ: Երկուշաբթի առաւօտ հարսնառով եկեղեցի պիտի տարուի աղջիկը արտասանելու համար «մեծ այո»ն: Բաժանումէն առաջ աղջիկը արտասուեալով համբուրներ կը դրոշմէ իր ծնողաց ու ազգականներու ձեռքերուն...» (Մանգումէի էֆֆար, Կ. Պ. 1906 թ. 1664):

2. Ամասիայի հարսանիքի մասին ունինք նաեւ անտիպ գրութիւն մը, զոր մեր խնդրանքին վրայ գրի առած է բնիկ Ամասիացի, այժմ Վառնայաբնակ Տիկ. Երանուհի Միքայելեան: Ան կը գրէ.

Աղջիկտեւ. - Հին ժամանակները հարսն ու փեսան իրար չէին ճանչնար. անոնց ծնողքը կ'որոշէր իրենց գաւակներու ամուսնութիւնը: 1910-ին հետեւեալ կերպով տեղի կ'ունենար հարսանիքն Ամասիոյ մէջ: Նախ աղջիկտեսի կ'երթան մանչուն տունէն կամ անձամբ, կամ ազգականի կամ դրացիի միջոցաւ. երբեմն ալ աղջիկը դրացիին տունը կանչել տալով: Աղջիկը քննելու եւ հաւնելու համար կարեւորութիւն կու տան զայն տեսնելու բաղնիքի մէջ: Երբ կ'իմանան թէ իրենց ընտրելի աղջիկը այս ինչ օր բաղնիք պիտի երթայ, իրենց կողմէ մասնաւոր մարդ կը ղրկեն բաղնիք այդ նպատակով:

ԽՈՍՏԱՄԱԽՈՍՄՈՒԹԻՒՆ.— Երբ վերջապէս մանչուն տունէն աղջիկ մը հասնուի, խնամախօսութեան համար մասնաւոր մարդ կը դրկուի աղջկան տունը, երբեմն նաեւ քահանային ընկերակցութեամբ: Գացողները խօսք առնելով «եկած ենք, կ'ըսեն, Աստուծոյ հրամանով եւ եկեղեցւոյ օրէնքով խնդրել ձեր աղջկան ձեռքը մեր մանչուն համար: Եթէ պատրաստ չէք, մտածեցէք, որոշեցէք, մենք կրկին կու գանք խօսելու: Տեսցիք սուրճ, օղի, շաքարեղէն, հանգստապատառ եւ պտուղ կը հրամայեն:

Նշանախօսութիւն. — Երբ խնամախօսութիւնը յաջող անցնի, երկու կողմէն կ'որոշեն նշանտուքի օրը: Մանչուն կողմը պատրաստութիւնը շատ է. կը հրաւիրեն ազգականներ, բարեկամներ, կը գնեն մեծաքանակ շաքար եւ գանոնք թղթէ սիրուն ծարրիկներով կը լեցնեն երկու մեծ ասփէններու մէջ, իբր 100-120 ծարրիկ, նշանտուքի գիշերը բոլոր ներկաներուն բաժնելու համար: Յետոյ թաւիշէ տուփ մը կը զարդարեն ընտիր շաքարներով ու շոկոլաներով, որուն մէջտեղը կը տեղաւորեն նշանին սակեղէն զարդերը:

Հարսին մատանին փեսան շինել կու տայ, իսկ փեսային մատանին Հարսը. Հարսին մատանին վրայ փեսային անունը, իսկ փեսային մատանին վրայ Հարսին անունը փորագրուած կ'ըլլայ: Նշանը օրհնելու համար կա'մ նոյն օրը քահանայ կը կանչեն կա'մ կիրակի օր եկեղեցւոյ մէջ կ'օրհնուի Հայաւին հետ: Հինգէն մինչեւ քսան «գրիմիցա» ոսկի կը նուիրուի, որոնց շարքը Հարսնցուին վիզը կը կախէ կա'մ փեսային մայրը (կետուր), կա'մ կնքամայրը: Ատկէ վերջ կերուխում, շնորհաւորութիւն ու գուարճութիւն: Ծաքաթ մը վերջ նշանի ասփէները «պաքլալայով» ու «գուրապլայով» լեցուած եւ վրան փեսային համար վերարկու շինուելիք նիւթ դրուած փեսային տունը կ'ուղարկուի: Նշանտուքի շրջանը երբեմն երկար կը տեւէ. այդ շրջանին

Հարսնցուն տեսնելու կու գան փեսային կողմինները միշտ նուէրով:

Հարսանիք.— Հարսանիքի պատրաստութիւնը կ'ըլլայ Հարսին կողմէ օժիտ պատրաստելով. իսկ փեսային կողմէ Հարսին կը դրկուի ճերմակ մետաքսէ Հագուստ, կօշիկ, գուլպայ, ձեռնոց, զլխուն ծաղկեպսակ եւ այլն: Հարսին կողմէ փեսային համար կը դրկուի «քոլալը» շապիկ, փողկապ, ձեռնոց եւ այլն: Հարսանիքը կը սկսի շաքաթ օր, փեսային տունը գատ, Հարսին տունը գատ: Կ'ապապրուի նուագախումբ, խոհարար, էրկանէր կողուած երիտասարդներ, որոնք սեղաններուն պիտի ծառայեն, երգիչներ ու պարողներ եւ այլն:

Ծաքաթ իրիկուն 2 ոչխար կը մորթուի եւ փորելը բրինձով լեցուած փուռը կը դրուի, մէկը այրերուն, միւսը կիներուն. կ'եփուին նաեւ ուրիշ կերակուրներ: Կիրակի եւ երկուշաբթի ալ 2-ական ոչխար կը խորովուի եւ տեսակ տեսակ համադամներ կը պատրաստուին Հարսանիքի սեղանները ճոխ ընելու համար: Ըմպելիքն է լիւաւորաբար օղի եւ կոնեակ: Կիրակի սափրիչ կանչելով «փեսա-թրաշ»ի հանդէս կ'ընեն նուագով եւ բոլոր այրերը կը սափրուին, յետոյ եկեղեցի կ'երթան եւ «Հալաւօրհնէք» կատարեն: Հին ատեն նաեւ Հարսանեկան հինայի սովորութիւն կար եւ Հարսին ձեռքերն ու ոտքերը կը հինայէին:

Հարսնառ.— Երկուշաբթի առտու կանուխ «Հարսնառ»ի կ'երթան մեծ բազմութեամբ, նուագախումբով ու բոլորին ձեռքը վառուած մոմերով: Հարսը Հագցնելու ժամանակ իր եղբայրն է, որ դօտին կը կապէ եւ ոսկեղէն մը նուէր կու տայ, իսկ Հարսը բոլորին ձեռքերը կը համբուրէ: Հարսնեւորներուն կը հրամայուի անուշեղէն, օղի, կոնեակ: Տունէն մեկնելու ատեն յուզիչ երգեր ու նուագ տեղի կ'ունենայ: Բաժանումի այդ պահուն յատուկ շատ մը տեսակ երգեր կային, բայց շատ չյուզելու համար գանց կ'ընէին:

«Ճայթոն-եալը» կառքի մէջ դրած կը տանին Հարսը. քովը կը նստին «Հարսնապահ» 2 կիներ, որոնցմէ մէկն է կնքամայրը, երկրորդը Հօրաքոյր կամ մօրաքոյր: Հարսին կ'ընկերանան նաեւ մօտ ազգականներէն 2 այրեր: Պսակի գացած ժամանակ 3 մասնաւոր կաթա կը պատրաստեն, մէկը Հարսին, մէկը փեսային եւ մէկն ալ փեսեղբօր Համար եւ անոնց ծոցը կամ գրպանը կը դնեն – որպէս զի «մէկ բախտով ըլլան»:

Պսակէն վերջ տուն դարձին անպայման մատաղ պիտի ընեն ոչխար մը կամ աքբօր մը, որուն արիւնին վրայ կոխելով պիտի անցնի Հարսը: Երբ Հարսը տունէն ներս կը մտնէ, կեսրայրը դիմաւորելու կու գայ ձեռքը ոսկիէ ժամացոյցով կամ ուրիշ ոսկեղէն նուէրով: Հարսին Համբուրել կու տան մեծին ու փոքրին ձեռքերը, որմէ վերջ զինքը կը բազմեցնեն բարձր տեղ մը, իր ալ ու ձախ կողմ ունենալով «Հարսապահ»ները: Հարսանեկան հիւրերուն շաքարեղէնով «չէօրէք» կը հրամցուի (ընկողջով, կարագով պատրաստուած), օղի կը պտտցնեն, անուշեղէններ կը հրամցուին, վերջն ալ շուկան մասնաւոր պատրաստուած «չէօրէկ» մեծ կտորներ կողովներով կը բերեն եւ տաք կը բաժնեն բոլորին:

Երբ միայն ազգականներ, «Հարսնապահներ» կը մնան, այն ատեն սեղան կը դրուի փուռը խորոված ոչխարի «փաչափիլա» բրինձով, սիսեռով. կ'ուտեն, կը խմեն մինչեւ իրիկուն: Երեջարթի առտու փեսային տունէն կին մը կը ղրկեն Հարսին մօրը, որպէս աչքի լուսի պնակ մը շաքարեղէնով, ուր կը հիւրասիրուի եւ ճաշով կը պատուուի: - Առաջին «Հարսնդարձ»ը տեղի կ'ունենայ պսակէն 15 օր վերջ. փեսան միասին կ'երթայ. երկրորդ Հարսանիքի մը պէս շատ ճախ Հացգիրոթիներ կը կատարուին Հարսին ծնողաց տունը, ուր հրաւիրուած կ'ըլլան նաեւ երկու կողմի ազգականները:

ՄԱՐԶՈՒԱՆԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Հետեւեալ նկարագրութիւնը քաղած եմ 1968-ին Տիկին Լիբիա (ծնեալ Գրաճեան) Թաղէտեսանէ, բնիկ Մարգուանցի, 84 տարեկան (Իսթանպուլ): Նշանտուք.

Մանչ ու աղջիկ իրարու հետ տեսնուելու եւ իրար ճաշնալու իրաւունք չունէին. ծնողքն էին, որ ամէն բան կը կարգադրէին: Աղջիկը 16-20, իսկ մանչը 20-30 տարեկան կ'ըլլար: 25 տարեկան աղջիկ մը տունը մնացած կը Համարուէր, որ տեղական բառով «ղալուխ» կը կոչուէր: Նշանը կ'օրհնուէր կամ եկեղեցին եւ կամ տանը մէջ: Նշանն էր կամ ոսկի մը, որ կրնար ըլլալ «քրիմիցա» եւ կամ մանր ոսկիներ. Հարուստները կու տային շղթայով ոսկի ժամացոյց: Նշանտուքը կը տեւէր 2 ամիսէն տարի մը: Այս շրջանին ամէն անգամ որ այցելէին տղուն ծնողքը իրենց Հարսնցուին, անպատճառ ոսկի մը կու տային ձեռքհամարի ժամանակ: Հիւրերուն կը հրամցնէին սուրճ, անուշեղէն եւ այլն: Եթէ շատ կենսային հիւրերը, կը հրամցուէր գինի, չոր մսեղէններով, պտուղով եւ «բլպլպի»ով: - Նշանտուքի շրջանին աղջկան կողմէ փեսացուին կը նուիրէին Հագուստի նիւթ ամէնէն պատուական տեսակէն:

Հարսանեկան զգեստը – Հարսին զգեստը փեսան կը հագար: Փեսային ծնողքը դերձակի մը հետ Հարսին չափը կ'առնէին 2 ձեռք Հագուստի: Մուշտակ-վերարկու մը կը նուիրէր Հարուստը: Ասոնց մէջ էին նաեւ գուլպայ եւ կօշիկ: Փեսային Համար աղջկան կողմէ միայն ներքնազգեստ կը նուիրուէր: Փեսային զգեստը ինքը կը պատրաստէր: Հալաւ-օրհնէքը կիրակի օրը տեղի կ'ունենար եկեղեցւոյ մէջ: Փեսային զգեստը Հագցնելու ատեն շարական կ'երգէին: Հագցնելէն վերջ փեսան Հօր ձեռքը կը Համբուրէր եւ այս առթիւ Հայրը պարտական էր իր դիրքին Համեմատ նուէր մը տալ: Հայրը իր ձեռքով փեսային Ֆէսը զլուխը կը դնէր գաւակը Հարուրելով:

Հարսին զգեստը կը հագցնէին փեսային մայրը, կնքամայրը եւ մօտ պարագաները: Սովորութիւն էր, որ հասնցուն շատ լար-առանձին սենեակի մէջ տեղի ունենար հագուստ-կապուստ առանց երգի եւ նուագի: Երբ վերջանար, մէջտեղ կը բերուէր կնքամօր միջոցով, որուն յանձնուած կ'ըլլար հարսը: Այդտեղ հարսը ձեռքհամբոյր կ'ընէր բոլորին: Հարսին եղբայրը կնքամօր օգնութեամբ կը կապէր հարսին գօտին անոր զլխուն վրայ 3 անգամ պտտցնելէն յետոյ եւ իր դիրքին համեմատ իր քրոջ դրամական նուէր մը կ'ընէր: Հարսանեկան գօտին ընդհանրապէս արծաթէ կ'ըլլար: Յաճախ փոխալ կ'առնուէր: Այս գօտին միայն պսակի առթիւ կը գործածուէր:

Պսակը պատարագի միջոցին տեղի կ'ունենար եւ այն միայն երկուշաբթի օրերը: Եթե քանի մը պսակ միեւնոյն օրը հարկը կատարել, առաջինը անոր պսակը կ'ըլլար, որ ամէնէն շատ կը վճարէր: Քիչ անգամ հարսը ձիով կը տանէին եւ այս պարագային կնքահայրը, տղուն եղբայրը հարսին երկու կողմէն կը քալէին: Ընդհանրապէս քալելով կը տանէին: Ծամբու ընթացքին երգեր կ'երգէին: Փեսային տունը հասած ատեն հարուստները երկու ոչխար կը մորթէին, մէկը հարսին, միւսը փեսային ոտքին: Հասարակ ժողովուրդը մէկ ոչխար կամ աքլոր մը: Երբ հարսը ոտքը տան շքմին դնէր, հողէ աման մը կը կոտրէին:

Ներսը, ճաշէն առաջ, սեղան մը կը դնէին վրան ափսէ մը: Հարսը շրջապատուած իր կեսուրէն եւ կնքամօրմէն կը կենար այդ սեղանին քով: Բոլոր այր մարդիկ ափսէին մէջ ոսկի մը կը նետէին: Ասոր կը յաջորդէր այր մարդոց ճաշը, որ կ'ըլլար լման գառնուկ մը, մէջը բրինձով լեցուած: Հարուստները կ'ունենային քանի մը գառնուկ: Ատկէ զատ կային խմորեղէն, ճեմենլի մսեղէն, տոլմա, պէօրէկ, իսկ ըմպելիէներն էին օղի, գինի, որոնք երբեմն շատ կը գործածուէին:

Յետոյ կը սկսէր կիներու ճաշը, որ միեւնոյն տեսակով կ'ըլլար: Կիներու ճաշէն վերջ տեղի կ'ունենար նուիրատութիւն մը հարսին, որ ընդհանրապէս ոսկի մը, եագմա մը կամ շղարշ մը կ'ըլլար: Հարսանիքը կը տեւէր երկու օր:

Հին սովորութիւնն էր, որ պսակը կիրակի տեղի կ'ունենար եւ այդ պատճառաւ հարս ու փեսայ առաջին գիշերը քովէքով չէին գար. փեսան կնքահօր քով կը տանէին: Այս հին սովորութիւնը վերացուած էր արդէն 1880-ական թուականներուն: Կիրակին երկուշաբթիի փոխուելէն վերջ հարս ու փեսայ առաջին գիշերը կրնային քովէքով գալ:

Պսակէն վերջ տարուան մը ընթացքին, առաջին տաղաւարին սովորութիւն էր որ կնքահայր, կնքամայր, կեսուր, կեսուրայր, եղբայր ու քոյր հարսն ու փեսան հարսին ծնողքին տունը կը տանէին եւ ճաշէն վերջ բոլորը կը վերագառնային, բացի հարսէն ու փեսայէն: Եթէ Զատկէն առաջ տեղի ունեցած էր պսակը, նոր կիրակիին կ'ըլլար այդ դարձը»:

ԿԵՍԱՐԻԱՅԻ ԵՒ ԱՆՈՐ ԳԻՒՂԵՐՈՒՆ ՀԱՐՍԱՆԻՔԸ

ԿԵՍԱՐԻԱՅԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

1. Տրդատ Եպ. Պալեան տուած է Կեսարիոյ «նշանախօսութիւն»ը:

«Կեսարիայի մէջ նշանախօսութիւնը կը կատարուի երիտասարդին 25-30 ու աղջկան 15-18 տարեկանին: 18 տարեկան հասակն անցնող աղջիկներն իբրեւ հրնտրած գրեթէ տունը մնացած կը համարուին: Հայր մը կամ մայր մը, երբ մտադրէ իր տղան նշանել... տեղեկութիւններ կը հաւաքեն զանազան աղջիկներու մասին ու վերջապէս երկուքը կամ երեքը կ'ընտրուին ու կ'որոշուին իրենց ընտանիքին յարմար: Այս ընտրութենէն ետքը տան մեծին հրամանով մօտաւոր ազգականներէն մէկը նշանուելիք երիտասարդը հետն առնելով

որոշեալ տուները կ'երթան աղջիկները տեսնելու: Ասոնք որ տունն ալ այցելեն, առանց որեւէ դիտողութեան կ'ընդունուին: Հարեւանցի տեսակցութենէ ետքը առաջնորդող անձը կը խնդրէ, որ իրենց այս ինչ աղջիկը ջուր մը բերէ, կամ ներս գայ: Այս խնդրանքին վրայ կը հրամայեն աղջկան, որ ջուր մը բերէ. աղջիկը կու գայ եւ ներկայ հիւրերը բարեւելով հինգ տասը վայրկեան կը մնայ, ապա խոնհարութիւն ընելով սենեկէն դուրս կ'ելլէ: Քիչ վերջ հիւրերն ալ կը մեկնին, առանց որեւէ բան ըսելու: Այս հիւրընկալութեան միջոցին որեւէ մեծարանք չ'ըլլար: «Աղջիկտես»ի այս ձեւակերպութիւնները կատարուելէն ետքը վերջապէս աղջկան տան կողմէ օր կ'որոշուի «այս ինչ օրը թող հրամանեն»:

Այդ օրը հինգ կամ տասը մարդիկ, որոնց բեճաճը անունը կը տրուի, որոշեալ ժամուն աղջկան տունը կ'երթան, ուր կը գտնեն մօտակայ ազգականներն ալ: Բէճաճըններուն մէջէն ամէնէն հասակաւորը խօսքը կը բանայ եւ «Աստուծոյ հրամանաւ» սովորական ձեւով կ'իմացնէ թէ եկած են տան այս ինչ աղջիկը իրենց այս ինչ տղուն համար խնամութիւն հաստատել: Աղջկան հօր կողմէ սակայն երկար քաջքշուքներէ վերջ հազիւ մեծ այո-ն ըսել կու տան եւ առաջին խօսող անձը ծունկի գալով «Հայր մեր» տէրունական աղօթքը կ'արտասանէ եւ երկար կը խաչակնքէ. նոյնը կ'ընէ նաեւ աղջան հայրը եւ ահաւասիկ «խօսք կասլը» լրացաւ:

Ալ այնուհետեւ կը սկսի մեծարանքը, շաքար, անուշեղեններ, օղի, օշարակ, սուրճ կը բերուին «աչքիդ լոյս խնամի, խայրըլը» բարեմաղթութիւններ իրարու կը յաջորդեն, կը խաղան, կը պարեն, կ'ուրախանան, իսկ աղջիկը ձեռքերը կը համբուրէ եւ բարեւի կը կենայ: Միւս օրն երկու կողմէն մէյմէկ մարդ Առաջնորդարան դիմելով հրամանագիր մը կը ստանան (8 տարիներէ ի վեր հաստատուած է այս սովորութիւնը), որով տաներէց քահանան կ'երթայ թէ

տղուն եւ թէ՛ աղջկան վրայ «պահպանիչ» մը կ'արտասանէ:

Ատկէ երկու շաբաթ կամ երկու ամիս վերջը կը դրկուի բուն պաշտօնական նշանը քահանային ձեռքով: Տղուն կողմէ աղջկան կը դրկուի մետաքսէ շալ մը եւ 2 գրիմեց ոսկի, իսկ աղջկան կողմէ տղուն՝ մէկ ձեռք զգեստի նիւթ: Նշանտուքի այս ձեւակերպութիւններէն շաբաթ մը ետքը տղուն ամբողջ ընտանիքը մօտակայ եւ հեռաւոր ազգականներով իրիկուն մը աղջկան տունը կ'երթան իրենց հարսնցու աղջկան նուէրներ տալու համար: Կը տեւէ մինչեւ առաւուտ ու նուիրատուութիւններուն թիւը 20-50 կ'ըլլայ: Տղուն հօրը եւ մօրը կողմէ մէյմէկ գըրմից ոսկի եւ տղուն կողմէ նոյնպէս, իսկ միւսներու կողմէ մահմուտիէ ոսկիէն սկսեալ մինչեւ տրօ կամ դագի ոսկիներ:

Յետոյ աղջկան մայրը իր ամբողջ պարզաներով առանձին սենեակ մը կը քաշուի, ուր կը հրաւիրուի միմիայն իրենց փեսացուն. այս տեղ ալ կը սկսին փեսացուին տրուելիք նուէրները. - զոքանչին ու աներոջ կողմէ մէկ մէկ աղամանդ մատանի, ուրիշներէն մատանի մը, սաթէ համրիչ, ծխափայտ, մետաքս թաշկինակ: Փեսացու եւ հարս պարտաւոր են գործածել առած նուէրները. հարսը կը կախէ իր կուրծքը, կը զարդարէ իր մագեքը...» (Բիւրակն, Կ. Պ. 1900, է 344-7):

2. Կեսարիա քաղաքի հարսանիքի մասին կ'օգտուիմ նաեւ Ա. Ալպոյաճեանի «Պատմութիւն Հայ Կեսարիոյ» գործէն.

Հարսանիքները կը կատարուին Ս. Սարգիսէն Բարեկենդան տեսութեան կամ Առջի պսակին: Հարսանիքը կանխող հինգշաբթի օրը փեսան բաղնիք կը տանին երգով ու նուագով, իսկ տունը ճաշ կու տան ազգականներուն: Ուրբաթ հարսը կը տանին բաղնիք եւ վերադարձին հինայ կը դրուի անոր երգելով (թրքերէն): Հրաւիրուած են բոլոր ազգականները:

Շարաթ օր Հարսին մագերը կը հիւսեն ու փեսան կը սափրեն, յատուկ երգերով (Թրքերէն):

Նոյն օրը փեսային կողմէ Հարսին կը զրկուի «պաշլըի»ը, որ կը բաղկանայ գո-Հարեղէնէ մը, քողէ, կօշիկէ, որոնք կը ծրարուին մետաքսէ թաշկինակի մէջ - «խաֆէ-սի»: Իսկ փեսացուին կը զրկեն Հայելի, շապիկ, գուլպայ, թաշկինակ եւ թուղթով շաքար ծրարուած մետաքսի մէջ: Կիրակի կը կատարուի Հարսանիքը, առաւօտէն կէս գիշեր: Ամէն Հարսնետուր նուէր կը բերէ միս, խմորեղէն, օդի: Հարսանեկան սեղանին վրայ կը հրամցուի փիլաւ եւ կարմրած ոչխար, բանջարեղէններ, խմորեղէններ:

Կը կատարուի փեսայ Հագուեցնելու արարողութիւնը: Կեսարիայի մէջ այդ պաշտօնը եղբօր պարտականութիւնն է: Կիրակի գիշերէն վերջը երկու կողմերն ալ եկեղեցի կ'երթան: Ճամբայ ելլելէ առաջ Հարսին մէջըը երկար գօտի մը կը փաթթեն աղօթքներով իբր նշանակ գօտեպնդումի, աշխարհի դժուարութիւններուն յաղթելու Համար: Պսակի ատեն Հարսին ու փեսային ճակատը խաչ կը կապեն, որոնք կը մնան մինչեւ երկուշաբթի:

Պսակէն վերջ Հարսն ու փեսան տուն կ'առաջնորդուին երգերով ու նուագով: Հայերէն հին երգ մըն էր «Բարի գեղեցիկ»: Թարբորին առջեւէն կը տարուին լապտեր կամ մոմ: Պսակէն վերջ կնքամայրը կ'առաջնորդէ Հարսը, իսկ կնքահայրը՝ փեսան: Տուն Հասած ատեն Հարսուփեսային առջեւ կաւէ աման մը կը կոտրեն՝ չար աչքերու Համար: Սեմին վրայ ոչխար մը կը մորթեն, որպէս զի ոտքերնին խատեմիլ ըլլայ: Նոյնպէս Հարսին գլուխը դրամ կըքանեն: Դրան առջեւ Հարսին ձեռքը նուռ մը կամ տոպրակ մը շաքար կու տան, որ դրան գարնէ: Ակէջ յետոյ Հարսանեկան խրախճանքը կը սկսի: Երկուշաբթի օր քահանան Հարսին ու փեսային գլխուն անցուած խաչերը կը Հա-

նէ: Հարուստները խրախճանքը մինչեւ ութը օր կը շարունակէին, ամէն օրուան Համար մէկ մէկ արարողութեամբ եւ զանազան կոչումներով: Հարսանիքին ութօրեակը, որ խրախճանութեանց փակուածն էր, կը կոչուէր «պլթըն պագալը», որովհետեւ եկողները ոսկեղէն նուէրներ կը բերէին Հարսին» (Ա. Ալպրոյսճեան, Պատմութիւն Հայ Կեսարիոյ. Գահիրէ 1937 էջ 1724-30):

ԹԱԼԱՍ ԳԻՒՂԱՔԱՂԱՔ

Թալաս գիւղաքաղաքի Հարսանիքի մասին գրած է Յակոբ Աբրահամեան:

Թալասը մեծահարուստ Կիւլպենկեաններու Հայրենիքն է: Տղան 15 տարեկանին պանդխտութեան կ'երթար եւ 3-4 տարի ետքը (18-20 տարեկան) երբ Թալաս դառնար, ծնողքին առաջին հոգը կ'ըլլար զայն նշանել: Հարսնցու փնտորներն էին մայրը, հօրաքոյրը եւ ինքը տղան: Օր մը խօսքկապի Համար աղջկան տունը երթալով ոսկի մը նուէր կը տրուէր: Տղուն մօտաւոր ազգականներն ալ ոսկիներ կը կախէին Հարսի վիզէն:

Նշանախօսութենէ վերջ փեսացուն արտոնուած էր Հարսնցուին տունը երթալ, ճաշել եւ նշանածին Հետ խօսիլ: Դեռ չպսակուած տղան եւ մեկնէր դարձեալ ճամբորդներու Հետ եւ այս բաժանումը կը տեւէր 2-3 տարի: Երբ վերադառնար, Հարսանիքի պատրաստութիւն կը տեսնուէր: Հարսանիքը անպայման երկուշաբթի կը կատարուէր: Հարսն ու փեսան ծննդանիքով եկեղեցի կը տարուէին, ուր պատարագի ներկայ կ'ըլլային եւ կը Հաղորդուէին: Պսակէն վերջ լաւ խնջոյք մը կը տրուէր եւ եկած նուէրները կը ցուցադրուէին սենեակի մը մէջ: Հարսանիքի հրաւիրողը Թալասի լեզուով օրույուճու կ'ըսուէր: Շրջակայ գիւղերէ եկած Հիւրերը շաքաթներով կը մնային: Մեղրալուսնէն յետոյ փեսան դարձեալ պանդուխտի ցուպը ձեռք կ'առնէր...» (Յառաջ, Փարիզ 1962 թ. 9389, Ապրիլ 16):

ԷՎԵՐԵԿ-ՖԵՆԷԷ ԳԻՒՂԱՔԱՂԱՔ

Լուրջ արարողութիւն մըն էր աղջիկ փնտռելը: Քննութիւն կը կատարուէր անհատներու կամ քահանայի միջոցով: Երբ աղջիկը յարմար նկատուէր, լուր կը տրուէր, թէ այս ինչ օր դարձեալ պիտի երթան: Եթէ երկուստեք արդէն որոշած ու գաղտնօրէն համաձայնած են, տղու կողմէ կը տրուի խօսքկապի նուէր մը, տեղական լեզուով պիւլաղը: Ատկէ վերջ այցելութիւններով կու տան իրենց նշանն ու արժէքաւոր նուէրները: Ատեն մը կը մնան նշանուած:

Մինչև հարսանիք աղջկան կամ ազգականներու տան մէջ առիթ կը ստեղծէին մանչ ու աղջիկ իրար տեսնելու: Հարսանիքի օրը որոշուած է, նուազածուկներ վարձուած են, կնքահայրը տեղեակ կը պահուի մասնաւորապէս եւ կը հրաւիրուի իր պաշտօնին: Մաքուր հագուած գոյգեր (օխուճի) կը պտտին թաղէ թաղ, սուռնէ տուն ու կը հրաւիրեն հարսանիքի:

Հարսանիքը տեղի կ'ունենար ընդհանրապէս կիրակի օր, հարուստները եկեղեցւոյ մէջ, իսկ աղքատները տուններու մէջ: Նախորդ իրիկուրեմէ կը կատարուէր հինա դնելը ուրախութեան ու ծիսի մէջ: Տաներէց քահանայի կողմէ հարսանեկան հայաւը օրհնուելէ ետք, մասնաւոր ծրարով մը կը տարուէր հարսնցուի տունը: Մարտին մէջ կը գտնուէին՝ գոյգ մը ֆոթին կալոյ, ֆիստան, ֆէս, դեղին եազմա, ոսկի ճընդըլ, երեսի բուլլու քող:

Ատուռանց կանուխ կ'երթային հարս առնելու, հետիոտն, թաքորով, նուազով: Հարսնցուի տան դուռը բաց է, կը բացուի նուէրի խոստումով: Նուազով ներս կը մտնեն: Հարսը հագուած, պատրաստ է: Ծայր կու տայ բաժանումի լացն ու ողբը մօր եւ աղջկան միջև: Հարսը շրջապատուած է իր քոյրերով, ընկերուհիներով, մինչ փեսան կը սափրուի ու կը հագուի:

Նուազը կը փոխուի հրաժեշտի եղանակներու: Բաժանումի պահն է. հարսին

թեւը մտած դուրս կը հանեն «Առաւօտ լուտոյ» կամ հայերէն երգով մը: Բուլլու քողը երեսին հարսնցուն կը կանգնի տղուն դրան առջև: Դիմացը կու գան կեսուրն ու կեսրայրը ու ներս կը հրաւիրեն՝ «Հարսս, բարի եկար, այաղըն գատմէի, պաշըն տէօլէթի, մեր սուռը ուղուր, պերեքեթ ու գաս, ծիսս, ծաղկիս պտղաւորիս, Ասուած չամչցունէ»:

Հարսանեկան քողը դէմքին ու ձեռքերը կուրծքին հարսնցուն կը կանգնի անկիւնը. կու գայ փեսացուն կնքահօր հետ ու տեղի կ'ունենայ պսակի արարողութիւնը: Խաչն ու նարտը կապուելէ վերջ հարս ու փեսայ կ'ընդունին շնորհաւորութիւնները: Այնուհետեւ ծայր կու տայ պարն ու խրախճանքը, նուազն ու կերուխումը: (Յիշատակարան էվերեկ-Ֆենեսէի, Փարիզ 1963, էջ 156-61):

ԹՈՄՍՈՂԱ ԳԻՒՂԱՔԱՂԱՔ

«Թոմարգայի մէջ ամուրի մնացողները հազուադէպ էին: Երիտասարդները 18-20 եւ օրիորդները 15-16 տարեկանին կ'ամուսնացնէին: Երիտասարդները նշանտուքն առաջ իրարու հետ խօսելու եւ իրենց փոխադարձ զգածումները արտայայտելու պատահութիւն չէին ունենար: Իրարու հետ կրնային խօսիլ հեռուէն, տանիքներու վրայէն, ջուրի ճամբան, հարսանիքներու ընթացքին: Երբ ծնողք նշանելու մասին խօսք կը բանային... տաներէց քահանան եւ երկու պատկառելի մարդիկ խնամախօսութեան կը դրկէին աղջկան տունը: Երբ հաւանութիւնն ին առնէին, նշանի մատանին կը յանձնէին եւ աչքըլուսի ուրախութեան կը սկսէին: Մինչ այդ երիտասարդը տանիքը ելած, խօսակցութեան ունկնդիր՝ շուտով աչքի լոյսի լուրը կը հասցնէր իր ծնողքին:

Պսակադրութենէն առնուազն երկու շաբաթ առաջ հարսանիքի հրաւէր կ'ուղղէին: Հետզհետէ հաւաքուելէ վերջ կերուխումը, խաղը եւ զուարթ միջնորդտը անպակաս էին: Հարսին պարը կը գնահատուէր նուէրներով: Պսակի օրերն էին Ս.

Յակոբի եւ Յիսնեակի շաբաթապահքերու շաբաթ օրերը: Միեւնոյն օրը երբեմն 50-60 զոյգ պսակ կ'ըլլար պատարագով: Պսակի նախորդ երեկոյան ալաֆը (հալաւ) եկեղեցին կը տարուէր եւ օրհնուելէ վերջ հարսնացուին տունը կը զրկուէր: Փեսան հագուեցնելէն առաջ մասնաւոր արարողութեամբ նախ կը սափրուէր:

Երգով ու նուագով էր հարսնաւոր, որուն միջոցին աննշմար կերպով առարկաներ միասին կ'առնէին: Պսակէն վերջ երբ տուն հասնէին, հարս ու փեսայի գլուխը մանր դրամ կը ցանէին եւ անասուն կը մորթէին մատաղի համար: Նոյն օրն իսկ քահանան նարօտը վար կ'առնէր, փեսան երեք օրուան համար կնքահօր տունը հիւր կ'երթար, իսկ հարսը իր ընկերուհիներով կը շրջապատուէր: (Յուշամատեան Թոմար-գայի, Պէյրութ 1959, էջ 401-4: - Տես նաեւ Յարութիւն Պարութեան, Յուշեր Թոմար-գայի անցեալէն. Պէյրութ 1960, էջ 52-57):

ՆԻՐՁԷ ԳԻՒՂ.

Կեսարիայի Նիրգէ գիւղը 1896-ին 130 տունով թրքախառն հայ գիւղ մըն էր, պահած իր մայրենի լեզուն: Ներսէս Զ. Կ. Ստեփանեան կու տայ նկարագրութիւն մը տեղական հարսանիքի մասին, զոր կ'ամփոփենք.

Գիւղիս երիտասարդը երբ 22-23 տարեկան ըլլայ, ծնողքը կ'ընտրեն իրենց հարսնացուն: Երբ խնամութեան գացողը հաստատական նշանով վերադառնայ, որոշեալ օր մը հայրն ու մայրը մահմուտիէ կամ գրամից կամ 20 ղուրուշնոց ոսկի մը իբր նշան կը տանին եկեղեցի: Քահանան կ'օրհնէ այդ նշանը, կը տանի աղջկան գլխուն վրայ կը դնէ եւ պահպանիչ մը կ'ըսէ: Շաքար կը բաժնեն տունը եւ ազգականներուն եւ բոլորին ձեռքերը կը հինայն: Ասով նշանտուքը փատարագն է: Եւ յի սր պարուն ընտանիքն ու ազգականները աղջկան տունը կ'երթան ու կերուխումէ վերջ մէկ մէկ ոսկի նուիրելով աղջկան կը մեկնին: Երբ երիտասարդ մը

նշանուի, գիւղին երիտասարդները ուր որ տեսնեն ականջը կը քաշեն:

Նշանտուքէն քանի մը ամիս կամ քանի մը տարի վերջ կը կատարուի հարսանիքը: Հարսանիքի հրաւիրողները մեխակ կը բաժնեն, փոխարէն խնձոր, տանձ ընդունելով. Փեսային ու հարսին հագուստները կը հագցնեն երգով ու նուագով: Հարսին գօտին իր եղբայրը կը կապէ «եօթը տղայի վրայ աշկին մը ունենաս էն է կետինին տակը անցնի» ըսելով: Հարսն ու փեսան ձիով կը տանին եկեղեցի կամ փեսային տունը: Հարսին տնէն ելլելու ատեն հարսնեւորները որեւէ բան մը «կը գողնան», մանաւանդ խուփ մը -որպէս զի հարսին բերանը դոց ըլլայ, աղ որպէս զի տան մէջ խռովութիւն չըլլայ, կաթա որպէս զի բախտաւոր ըլլայ:

Պսակը կը կատարուի երկուշաբթի, եկեղեցւոյ մէջ, պատարագով կամ առանց պատարագի. այդ միջոցին կիները վառած մոմ մը կ'ունենան իրենց ձեռքը, զոր կը ջանան առանց մարելու մինչեւ տուն տանիլ: Փեսան, որ շապիկ հագած կ'ըլլայ եկեղեցին, նոյն շապիկով ձի կը նստի, մինչ ներկաները «Ալլահ, Ալլահ» կը պոռան: Երբ տղուն տունը հասնին, խեցեղէն աման մը գետինը զարնելով կը կոտրեն: Փեսային հայրն է, որ իր նորեկ հիւրը հարսը ձիէն վար կ'առնէ, իսկ հարսը անոր ոտքն իյնալով կը համբուրէ քղանցքին ծայրը: Անմիջապէս փեսային մայրը կու գայ եւ երիցս դարձնելով խնկամանը խունկ կը ծխէ փեսային, կնքահօր եւ հարսին գլխուն շուրջը. երբեմն ալ խնկամանի տեղ բաղարջ հացով կ'ընէ նոյնը, զոր յետոյ կիները իրենց մէջ կը բաժնեն, որպէս զի գլխու ցաւ չունենան: Ներս կը մտնեն եւ երկու ամուսնեւոր կենաց բաժակ կը պարպեն. կիներուն մեղր ու կարագ կը բաժնուի, որպէս զի նոր հարսը միշտ քաղցր բարք ունենայ: Սեղանէն վերջով որ պարէ, հարսը պարտաւոր է անոր ձեռքը համբուրել, հեռուէն, քանի մը անգամ խոնարհութիւն ընելով: Կ'երգեն ու կը

պարեն» (Արեւելեան Մամուլ, Չմիւռնիա 1896, էջ 653-56, 686-8, 716-8):

ԳԱԼԵԾԻՔ ԳԻՒՂԱՔԱՂԱՔ

Գիւղաքաղաքս մօտ է Գաղատիա-Ան-կիւրիայի եւ Չանկըրըի (Տես այս մասին Բիւրակն, Կ. Պ. 1899, էջ 327-9, 344-5, 394-7), որ ծանօթ է Հայ եղեռնի տխուր յիշատակներով: Հարսանիքի մասին համառօտ գրած է Ա. Գըլըճեան:

«Նշանտուք. Գալեծիքի հայերը շատ պահպանողական են: Մեծ դեր կը կատարէ Հոս նամահրեմութիւնը (այր մարդու չերեւի): Երիտասարդները այլազան հնարքներով կը դիտեն, կը խուզարկեն եւ լրջօրէն կը կատարեն իրենց ընտրութիւնը: Խնդրին էական եւ կարեւորագոյն պայմանն է, որ նախ ծնողք տեսնեն, ընտրեն եւ առաջարկեն իրենց զաւակներուն այսինչ կամ այն ինչ օրիորդը:

Ծնողքի հաւանութեամբ ընտրութիւնը ըլլալէ ետք... որոշուած օրը քահանան կ'առնէ երկուստեք նշանները (մետաքսահիւս անձեռոց մը եւ քանի մը զարդոսկի կամ ժառանգական մատանի մը), որ նշանողները իրարու կը յանձնեն բարի մաղթանքներով: Այն իրիկուն մեծ ոգեւորութիւն կը տիրէ երիտասարդի տան մէջ: Խուճառ առ խուճառ աչք լուսի կու գան գիշերը մինչեւ լոյս... Եւ ինչեր կը կրեն խեղճ երիտասարդին ականջները, զորս կը քաշեն ի նշան շնորհաւորութեան:

Վերջերս բարեկամ մը կը գրէր ինծի Գալեծիքէն. «Երէկ գիշեր Արթինին գինին խմեցինք (պաշտօնական նշանտուքի հանդէսը կատարեցինք): Շատ բազմութիւն կար: Երգեր, պարեր, ծիծաղաշարժ կատակներ»: Ահա այս նշանտուքը Գալեծիքի մէջ: Բայց մեծ յանցանք է փեսացուի մը հարսնցուին տունը երթալ հարսանիքէն առաջ...

Հարսանիքի հանդէսը կիրակի օր կը կատարեն Գալեծիքիները, իսկ պսակաղ-

րութիւնը՝ երկուշաբթի: Գալեծիքի մէջ երաժիշտներ չկան: Ուստի միայն սազով մը եւ դափով մը կը գոհանան: Հակառակ իրենց գինեմոլութեան, հարսանիքի կիրակին գաւաթ մը անգամ չեն խմեր, այլ կը գուարճանան միայն յիշեալ նուագներով: Երկուշաբթի ժամը 2-3-ին փեսան կը զգեստաւորեն «Ուրախ լեր Ս. Եկեղեցի» շարականով: Փեսային քով կը կեցնեն սանը (կնքահօր տղան) մօմը ձեռքը: Հարսը թանկագին կերպասներով պճնազարդելէն ետքը, երեսն ի վար կարմիր շղարշ մը (գըվ-րագ) կը ձգեն փայլուն թեփերով զարդարուն: Աղջիկը հօր ոտքը եւ մօրն ու եղբօրը ձեռքերը կը համբուրէ: Մայրը եւ քոյրը վիզին փարելով կու լան: Հարսին ընտանիքի անդամներն ալ մէյմէկ նուէր կու տան ըստ կարգի: Եղբայրը աղջկան գօտին կը կապէ եւ ճամբու կը դնեն դէպի եկեղեցի, տղուն կողմէն եկած հրակիրակ կիներուն ընկերակցութեամբ:

Պսակաղրութիւնը կը կատարուի եկեղեցւոյ մէջ: Հարսը եւ փեսան կը վերադառնան խուռն բազմութեամբ երգեցիկ մանուկներու հետ: Փեսայի տան բակին մէջ մենամարտութիւններ տեղի կ'ունենան: Փեսան կը մենամարտի իր մօրը հետ եւ կամ իր ազգականերէ մէկը մօրը կամ քրոջը հետ: Քրքիջներ օղը կը թնդացնեն: Հանդիսականները սուրճով, գլանիկով եւ ոգելից ըմպելիներով կը պատուասիրուին» (Բիւրակն, Կ. Պ. 1899, էջ 344-5 եւ 648-9):

ԵՈՋՂԱՏԻ ԵՒ ԱՆՈՐ ԳԻՒՂԵՐՈՒ ՀԱՐՍԱՆԻՔԸ

ԵՈՋՂԱՏԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ. -

Թղթակից մը եոզղատէն կը գրէ.

Այս շաբաթ առաջին պսակին հետ սկսան հարսանիքները: Մեր ժողովուրդը կ'ուզէ, որ կեանքին մէջ մէկ անգամ ըլլալիք բանը շատ փառաւոր ըլլայ: Չնայելով դրամական ու տնտեսական տագնապին,

Հարսանիքներն աւելի փառաւոր ու գեղիս են եւ օժիտն աւելի շռայլօրէն կը տրուի քան ասկէ 4-5 տարի առաջ: Ամուսնանալու համար միջին հաշուով 50 լիրա պէտք է: Նշանտուքն համեմատելով տազնապալից տարիներուն հետ շատցած է...» (Բիւզանդիոն, Կ. Պ. 1897 թ. 203):

Գիղերուն մէջ. - Գիւղին տղան եւ աղջիկը միասին կը խաղային մինչեւ 9-10 տարեկան: Երբ աղջիկը 12-14 եւ պատանին 17-18 տարեկան ըլլար, ծնողքները կը սկսէին մտահոգուիլ զանոնք ամուսնացնելու համար: Կին մը, որպէս միջնորդ կը ղրկուէր աղջկան մօրը թէ իրենց դուստրը հաւնած են եւ մօտ ատենէն ձեռքը խնդրելու պիտի գան: Այսպէս խօսքկապը կը կատարուէր պաշլըխ մը տալով, 6 մեծիտիյէէն մինչեւ 2-3 ոսկի: Քահանան ազգականներու հետ կ'երթար նշանը կ'օրհնէր, օղը հարսնացուին ականջը կը կախուէր եւ մատանին մատը կ'անցուէր:

Տարի մը կամ աւելի նշանուած կը մնային: Խնամիական ջերմ յարաբերութիւններ կը շարունակուէին: Հարսանիքին օրը կ'որոշէին խնամիները միասին: Մասնաւոր մէկը ղրկելով հարսանիքի կը հրաւիրէին ազգականներն ու բարեկամները: Այս կը կոչուէր «տուն-ձենոզ»: Հարսանիքը կը տեւէր չորս օրէն շաբաթ մը: Ամբողջ գիւղը կը մասնակցէր խրախճանքին, կ'ուտէին, կը խմէին, կը պարէին, կ'երգէին: Փեսային քովն է փեսամանուկը՝ սուրը մէջքին: Տաւուլ-գուռնայով կ'երթային թաքորով աղջկան տունը (հարսնառ): Կնքամօր առաջնորդութեամբ խումբ մը կիներ հարսին հագուստները կը հագցնէին, ձեռքերը կը հինայէին, իսկ անգին հասնելօրները բակին մէջ խնճոյք, պար, երգ ու նուագի ձայներով ամբողջ գիւղը կը շէնցնէին: Յաջորդ առտու այգը չբացուած հարսը եկեղեցի կը տանէին, ուր հարս-փեսայ գլուխի գլխի կը պսակուէին:

Երբ փեսայի տունը հասնէին, կը մորթուէր գառնուկ մը կամ հաւ մը: Տանիքին վրայէն պատանիներ հողամաններ գետին զարնելով կը փշրէին, որպէս զի գալիք փորձանքները սափորին փշրանքներովը անհետանային: Տարեց մայրիկ մը բաշկին մը ջուր կը պարպէր հարս ու փեսային առջեւ, որպէս զի հարստութիւնը ջուրի պէս հոսէր անոնց ընտանեկան բոյնին մէջ: Երիտասարդ մը գոյնզգոյն մանեակներով զարդարուած խոյ մը գետին զարնելով «ղուրպան» կ'ընէր, եփելու համար: Խնջոյքին կերակուրները խոնքու վրայ շարուած կ'ըլլային, որոնց շուրջը բոլորուած կը սկսէին ճաշել այրերը գատ, կիները գատ: Ահա տեսակը հարսանեկան կերակուրներու. - Շիշ քեպապ, սարմա, պլղուր փիլաւ, պէօրէկ, դառներու խորոված, թերթանոյշ գինի: «Հող ճանկէք՝ ոսկի դառնայ», «օճախներդ վառ մնայ», «միշտ շէն մնաք», «Հայր Արահամու օրհնութիւնը ձեր վրայ»: Ասոնք էին բոլորին բերնէն լսուած «Աչքի լոյսի» օրհնութեան խօսքեր: (Տիկին Նուրիցա Մ. Փիլիպոսեան եւ Աւետիս Քեստեփեհեան (Կ. Կապենց), Յուշարձան Եողգատցիներու. Ֆրեզնօ 1955, էջ 85-87):

ՍԻՎՐԻՀԻՍԱՐԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ.

Կը գրէ բնիկ տեղացի Ն. Ս. Ներսէսեան.

Նշանտուքի եւ հարսանիքի սովորութիւնները շատ հետաքրքրական են: Առանց փեսացուին կամքին հայրը եւ ազգականները կ'որոշեն իրենց հարսնացուն: Ընդհանրապէս երեք տարեց կիներ, որոշուած օր մը մանչուն կողմէն աղջկան տունը երթալով իրենց դիտաւորութիւնը կը յայտնեն աղջկան մօրը: Աղջկան մայրը երկար վարանումներէ վերջ իր էրկան վրայ կը նետէ վերջին խօսքը:

Նոյն իրիկուն քանի մը անձեր, երբեմն քահանայի մը ընկերակցութեամբ կ'երթան աղջկան տունը, ուր հաւաքուած

կըլլան ազգականները: Սովորական բարեւեներէ ետքը խօսք կը բացուի վերջապէս նշանտուքի վրայ. «Մենք հոս եկած ենք ձեր աղջիկը կնութեան խնդրելու մեր տղուն, Աստուծոյ հրամանով»: Վերջապէս ամէն տեսակ կատակներ ընելէ եւ խնամ-խօսի գացողները բաւական յոգնեցնելէ վերջը, կը հաւանին եւ կ'որոշեն նշանին օրը: Այն ատեն ներկաներուն օղի կը հրամայուի, կը խմեն եւ կը մեկնին:

Նշանին որոշուած օրը մանչուն տունը հաւաքուած կիները կ'որոշեն, որ մանչուն քոյրը եւ կամ ազգականուհի մը տանի նշանը, որ է սովորաբար շաքար, չամիչ եւ եազմա, ընդամէնը 10-15 օխա, իսկ եթէ հարուստ է, միայն եազմա եւ ոսկի մը (մենտկեայ): Այդ որոշուած կիներ կը տանի նշանը աղջկան տունը եւ հոն գտնուողներուն կողմէ դիմաւորուելէ վերջ, հարսնցուին ձեռքէն սուրճ մը խմելով կը վերադառնայ: Այդ շաքարէն եւ չամիչէն կը բաժնեն ներկայ գտնուողներուն եւ դրացիներուն «տարուսը ախճիկնիդ եւ տղայիդ թողլա» ըսելով: Նոյն իրիկունը մանչուն տունը հաւաքուելով երիտասարդներ ու ազգականներ աղջկան տունը կ'երթան տիւյիւր տէօշէյի: Նոյնը կը փոխադարձեն յետոյ աղջկան կողմիները եւ ասով կը վերջանայ տոպիները (նշան):

Նշանտուքը կը տեւէ մի քանի տարի: Հարսանիքի պատրաստուելու համար մանչուն կողմէ կին մը աղջկան տունը երթալով հարսնցուին զգեստի չափը կ'առնէ: Հարսանիքի կը հրաւիրուին բոլոր ազգականները իրենց ընտանիքներով. պսակը կը կատարուի երկուշաբթի օր մը: Ատկէ շաբաթ մը առաջ թաղին ազգական աղջիկները հաւաքուելով կ'երգեն, կը պարեն տաֆ գարնելով: Շաբաթ ցերեկ փեսայ-բաղնիք կ'երթան նուազով: Իսկ աղջկան կողմը հինէ կը դնեն: Կիրակի փեսան եկեղեցի կ'երթայ հաղորդուելու. «Հարսնաղճին»-ը նախապէս հաղորդուած կ'ըլլայ:

Եկեղեցիէն վերջ բարեկամներ, ազգականներ եւ դրացիներ հերիսէ ճաշակելու կը հրաւիրուին, իսկ իրիկուան դէմ խումբ մը կիներ եւ այրեր, նուազածուներով աղջկան զգեստներու պօղը կը տանին հարսնցուին, որուն կըսուի պարձտէօշէկ: Իրիկունը կը կատարուի հալաւի հանդէսը: Փեսան հագուեցնող անձը նախ գլխարկը դնելով կը համբուրէ անոր ճակատը: Երկուշաբթի առտու փեսան եկեղեցի կ'երթայ, իսկ կիներ ու այրեր հարսը առնելու կ'երթան: Եկեղեցին պսակն ընելէ վերջ թարորով, դպիրներով փեսան առջեւէն, հարսը ետեւէն, փեսային տունը կ'երթան, ուր համեզ ու ընտիր մատաղը կը ճաշակեն: (Բիւրակն, Կ.Պ. 1899, էջ 807-10):

ԿՈՒՏԻՆԱՅԻ ԼԱՐՍԱՆԻԸՐ

Առնակ ստորագրութեամբ յօդուածագիր մը տուած է հարսանիքի համառօտ պատկեր մը.

Երբ փեսային ընտանիքը կ'որոշէ պսակին թուականը, կ'ուզէ հարսնցուին չափը, որ տեղական բարբառով էօլչիւ կը կոչուի: Սակայն աղջկան տունը կը մերժէ տալ չափը, եթէ չէ կըրցած օժիտը լրացնել, կամ ուրիշ էական արգելք մը ունի: Ասով ժամանակ մը կը յամենայ հարսանիքը, բայց դիմումը կրկնելով կ'առնուի չափը, որուն վրայ փեսատունը կը պատրաստէ մէկ կամ երկու զգեստ, որ ապագայ տիկինը պիտի հագնի հարսնութենէն ետք: Չափառութենէն 3-4 շաբաթ վերջ, կիրակի մը Առաջնորդարան կը բերուին զոյգ մը տուփեր կամ ծրարիկներ: Ասոնց մէկը աղջկան կողմէ, որ կը պարունակէ մետաքսէ թաշկինակ մը եւ միւսը փեսացուէն՝ նոյնպէս թաշկինակ մը՝ վրան ագուցիկ ոսկեզօծ արծաթէ խաչով մը: Եկեղեցականի մը կողմէ այդ առարկաները կ'օրհնուին եւ կը յանձնուին երկու կողմերուն: Այդ օրէն երկու հնամի ընտանիքներ հարսանիքի պատրաստութիւն կը տեսնեն եւ որմերուն կը փակցնեն հրաւիրագիրներ:

Կիրակի օրուան ժամերգութենէն ետք դարձեալ խնամինները մէկտեղ կը նստին ճաշի, որ կը բաղկանայ աւանդական հերիսայէ եւ խաշտորիկէ: Յետոյ օգուճուն (վարձկան սպասուհի) տուփի կամ ծրարի մը մէջ զետեղելով հարսանեկան քողը, անոր վրայ ծածանելի թելը եւ զոյգ մը կաշեղէն ձեռնոցը թեւատակ կը տանի հարսնեմօր: Այդ իրիկունը, թէեւ կիրակի է, բայց շաբաթ ազամը անունով ծանօթ է: Երկու հարսնետուններն ալ կ'ունենան հրաւիրեալներ, որոնց կը մատուակեն ճոխ սեղաններ: Գիշերը մինչեւ ուշ ատեն իրար կը յաջորդեն նուագ, խաղերգ, պար ու ծափ: Երկուշաբթի պսակադրութեան օր է: Հարսնցուն, որ ծնած, սնած ու աճած բոյնէն պիտի բաժնուի, կը հեծկտայ, մինչ փեսատունէն կը հասնին բազմաթիւ երիտասարդ ու պառաւ կիներ, որոնք առնելով ճերմակներու մէջ փաթաթուած հարսնցուն կը դիմեն Աստուծոյ տունը:

Պսակի արարողութենէն վերջ հարսնելորները կ'ուղղուին դէպի փեսատուն, որուն շեմին վրայ, նորապսակ զոյգին ոտներուն առջեւ կը մորթուի խոյ մը կամ աքաղաղ մը ու վերնայարկէն կը թափեն վարդաջուր ու մանր դրամներ: Աղքատ տղաքներ հրճուանքով կը հաւաքեն: Բազմութիւնը գլանիկով ու անուշեղէնով կը պատուասիրուի: Այն ազգականներն ու բարեկամները, որոնք մտադիր են հարսին զարդոսկիներ նուիրել, ինքնակամ ընթրիքի կը մնան իրենց կողմէն բերելով կարկանդակ եւ դաշխուրան (կէօվէճ) մը եփած միս»: (Հայրենիք Ամսագիր, Պոսթըն, 1937, էջ 104-5):

ԱՖԻՈՆ ԳԱՐԱՀԻՍԱՐԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Թղթակից մը Աֆիոն-Գարահիսարէն կը գրէ 1897 Փետր. 22-ին.

Գարահիսարցիին ամուսնութեան տարիքը մանչերու համար 18-էն վեր, իսկ աղջկանց համար 14-էն վեր է ընդհանրապէս, երբեմն աւելի փոքր ամուսնացողներ ալ կը

գտնուին, սակայն բացառութիւն կը կազմեն: Հարսանիքներն ալ շատ սուղ չեն, մանաւանդ ոչ պաշլըխ ոչ ալ թրախոմա ունինք: Միայն եկեղեցոյ եւ հարսանիքի ծախս եւ ըստ կարողութեան երկու կողմի շինուելիք հագուստները: Գարահիսարցին, երբ ձեռքը 300 դահեկան անցնի, ալ ամուսնացած է իր քանի մը տարի առաջ նշանուած աղջկան հետ: Կը գտնուին այնպիսի նշանածներ, որոնք զիրար ճանչնալու անկարող հասակի մէջ են: Քիչ երիտասարդներու կը հանդիպինք, որոնք ամուրի ըլլան: Կը զարմանաք, երբ տեսնէք 20-25 տարու երիտասարդներ, որոնք 2-3 զաւակի տէր են... Այս տարի 94 հարսանիք եղած է: Համեմատելով բնակիչներուն, որ 900 տունէ կը բաղկանան, գրեթէ 10 տան վրայ մէկ հարսանիք կու գայ: Հոս Ս. Պսակի արարողութիւնները եկեղեցին կը կատարուին: Անցեալ տարի կարծեմ մէկ օրուան մէջ 24 հարսանիք մէկէն տեղի ունեցաւ...» (Բիւզանդիոն, Կ. Պ. 1897 թ. 98):

**ՊՐՈՒՍԱՅԻ ԳԻՒՂԵՐՈՒՆ
ՀԱՐՍԱՆԻՔԸ**

ՊԵՆԼԻ ԳԻՒՂ- Պրուսայի Կեմլէյիկ գազային մէջ կը գտնուի Պենլի գիւղը, որուն հարսանիքի մասին հետեւեալը հաղորդած է Յովհաննէս Ա. Ս. Պասմաճեան.

Աւասիկ ինչ որ կ'երգեն հարսանիքի կիրակի գիշեր, երբ փեսան կը հագուեցնեն: Փեսան պատին կրթնած, քովը մանուկ մը (կնքահօր կողմէ, որ կ'ըսուի սարտուճ), մէկը փեսան կը հագուեցնէ, ուրիշ մըն ալ մանուկը եւ ուրիշներ երկու կողմը շարուած կ'երգեն.

- Հանեցիք, հագուցիք նորէն,
- Ըս թոգովա(էօ)րին, ըս մեր մանուկին:
- Հանեցին հինէն, հագուցին նորէն,
- Ասէք շնորով, տեսէք շնորով:
- Արտեր բուտր է բուտր,
- Վերուսաղեմ էաւ լուտր,

Հոուսիսիմա, Մարիամ կուսը,
Օրհնէ ըս մեր թոգովարը,

Օրհնէ թոգովարն ու թագուհին,
Օրհնէ անմէմն ու միասին...»

«Աստուած շնավար ընա», կ'ըսեն ու
կը համբուրեն կարգով փեսային ճակատը:
(«Բիւրակն», Կ. Պ. 1898, էջ 120):

ՄՈՒՐԱՏՁԱՅ ԳԻՒՂ

Պիլեճիկի մօտերը գտնուող գիւղը 700
տունէ կը բաղկանար 1902-ին: Հարսանիքի
մասին զաղափար մը կու տայ թղթակից մը.

Չհաս ամուսնութիւններն հոս սովորական են: Շատ անգամ դեռ կաթէն
չկտրած կը նշանեն, նոյն իսկ մօրն յղութեան
ատեն. «էր (եթէ) աղջիկ ըլլի, իմ տղուն», կամ «էր տղայ ըլլի, իմ աղջկան»
ըսելով խօսք կապ կ'ընեն: Աղջիկը 11-12
տարեկան, տղան 16-էն անդին կը կարգեն:
Նշանտուքէն վերջ մէկ շաբաթ ամէն
երեկոյ աղջկան ու տղուն տունը կ'երթան
բոլոր ծանօթները, «էշխղ լիս» ըսելով, տանելով
մրգեղէն եւ զգեստեղէն ընծաներ...
Երբ մթնոլորտը տաքնայ, հարսնցուն կամ
փեսացուն կը հանեն մէջտեղ ու պարել տալով
հետերին բերած ընծաներն անոնց կը
նուիրեն համբոյրներով:

Հարսանիքը յատուկ սեզոն ունի.
Գիւտ խաչի տօնէն ետքը կը սկսին եւ 2 ամիսէն
կը վերջանան: Իւրաքանչիւրը կրնայ տեւել
3-5 օր: Կիրակի փեսային երիտասարդ
բարեկամները հաւաքուելով անոր տունը,
լաւ մը արբենալէ յետոյ, նուագարանի
երգեցողութեամբ կը լուան փեսան եւ իրենք
կը պարեն փեսային շուրջը մերթ ընդ
մերթ գոռալով «մաշալլահ»: Այս երեկոյ
փեսային ծանօթները, նուագի ընկերակցութեամբ
կ'երթան աղջկան տունը, ուր խոնուած
կ'ըլլան անոր պարագաները: Տան դուռը,
որ կղպուած կ'ըլլայ, նուէրով կը բացուի:
Աղջիկը կը կանգեցնեն մէջտեղ եւ քանի
մը կիներ, որոնցմէ մէկուն գլխուն

վրայ պնակով հինայ դրուած կ'ըլլայ, եզերքները
մոմեր փակցուցած, երգելով, պարելով քանի
մը անգամ կը դառնան անոր շուրջը եւ
հինան կը քսեն աղջկան գլուխը, ձեռքերն
ու ոտքերը: Այս այցելութիւնը «ինկէ
երթայ» կ'ըսուի:

Կը վերադառնան փեսային տունը, ուր կու
գայ նաեւ քահանայ եւ տիրացու եւ «խորհուրդ
խորին» երգելով կը հագուեցնեն փեսան
ու կնքահայրը: Երկուշաբթի, պսակէն ետք,
երբ տուն կը հասնին, հարսին ոտքին
վրայ հաւ մը կը մորթեն եւ ծանօթ կիներու
կողմէ տպածոյ թաշկինակներու եւ լաջակներու
տեղատարափ մը կը թափի հարսին գլխուն:
Հարսնետրոնները կը մեծարուին հերիսայով,
շաքարեղէնով եւ օղիով». Ս. Սարգիսի
պահքին բոլոր նշանուած աղջիկները
ծոմ կը պահեն:

Շաբթուան վերջն աղջկան կեսուրը ընծաներ
կը բերէ իր հարսնցուին կարկանդակ,
գուլպայ, թաշկինակ: Աղջկան կողմէն ալ
փեսացուին կը տանին քսակ, լաջակ,
թաշկինակ» (Բիւզանդիոն, Կ. Պ. 1902-3):

ՆԻԿՈՄԻԴԻԱՅԻ ԵՒ ԱՆՈՐ ԳԻՒՂԵՐՈՒՆ ՀԱՐՍԱՆԻՔԸ

ՊԱՐՏԻԶԱԿ. – 1864 Նոյ. 12ին «Կանոնք
նշանադրութեան եւ հարսանեաց Պարտիզակի»
հրատարակած է Նիկոմիդիայի Առաջնորդ
Ստեփանոս արքեպիսկոպոսը: Այս «Կանոնք»էն
յստակ կը տեսնուի, թէ ինչպէս եղած է
1864-էն առաջ Պարտիզակի նշանտուքի
եւ հարսանիքի սովորութիւնը: Կու տանք
ամփոփոյք մը.

Նշանտուք. Նշանադրութիւնը կ'ըլլայ
աղջկան 12 տարեկանին եւ մանչուն՝ 18:

Օրինաւոր նշանադրութիւնը եկեղեցւոյ
դուռը կը կատարուի. Տունները եղած
նշանադրութիւնը ապօրէն է եւ անվաւեր.

Նշանադրութեան համար աղջկան եւ տղուն
քահանաները վկայութիւն պիտի տան:
Մանչուն կողմէ մէկ թաշկինակով, մէկ
տասնոց կամ քսանոց ոսկի պիտի

տրուի աղջկան եւ աղջկան կողմէ՝ միայն մէկ թաշկինակ մանչուն.

Իրարու պօղ տանիլ, փեսայ եւ աղջիկ հինայել կամ ոսկի տալ արգելուած է.

Հարսանիք 1. Հարսանիքէն շաբաթ մը առաջ երկու խնամիններ թաղական խորհուրդին կը ներկայանան իրենց հարսնախօսութիւնը (քեսմէթ) կը լմնցնեն միայն խօսքով. 2. Հարսնցու աղջիկը շարն ի գլուխ տունէ տուն պտտցնելը արգելեալ է. ազգական տունէն փեսային զգեստները տանի. 5. Կիրակի ցերեկին կամ իրիկունը հալաւը կ'օրհնուի. արգելուած է երգել-պարելը. 6. Կիրակի մինչեւ լոյս չափազանց ուտել խմելը, խառն պարելը արգելուած է. 7. Երկուշաբթի հարս առնել պիտի երթան փեսային ծնողքն ու ազգականները քահանային հետ... եկեղեցի պիտի բերեն. 9. Այս պսակը երկուշաբթի առտուն կանուխ եկեղեցին պիտի աւարտի եւ տան քահանան հարսն ու փեսան առնելով՝ հոգեւոր երգով պիտի տանին տուն եւ անմիջապէս թագվերացի արարողութիւնը կատարելով՝ հարսանիքը պիտի վերջանայ: (Յոյս, Արմաշ 1864, էջ 107-109):

Վերոյիշեալ Կանոնները գործնականին մէջ նոյնութեամբ պահուած չեն գտնէ նշանտուքի մէջ, որովհետեւ 1873-ին թղթակից մը կը շեշտէ, որ «Պաղչեծիկի մէջ աղջիկները երբ 10-12 տարեկան կ'ըլլան, դպրոցէն կը հանուին, ամօթ համարելով այնուհետեւ դպրոց երթալը, միմիայն անոր համար արգէն 7-8 տարեկան հասակին մէջ նշանուած են»: (Մասիս, Կ. Պ. 1873 թ. 1356):

Յակորճեան ստորագրող մը Պարտիզակի հարսանիքի մասին կը գրէ. «Պարտիզակի սովորութիւններէն ամէնէն հետաքրքրաշարժը հարսանիքն է, որուն իբրեւ հրակէր կը զրկուին լեմոններ: Իսկ անկոչ հիւրերը պատճառ մը կը գտնեն եւ տանտիկնոջ կ'ըսեն. «Մեր շունը ձեզի կացին բերա՞ւ»: Հարսանիքին փայլը աղջկան կողմն է: Հանդէսը պարզ է, բայց զգլխիչ: Բաւական երկար պար մը, զոր կուսական

ճկուն իրաններ բոլորածեւ կը կազմեն: Ոչ սրինգ կայ, ոչ տղկար (տկճոր) եւ ոչ ալ ուրիշ նուագարան: Ամէն մէկը իր նուագարանը ունի ու թրթուուն շրթունքներ: Յանկարծ պարը կը փլչի եւ աճապարանքով տեղ մը կը փնտռեն... Քանի մը կիններ, որոնք փեսային թագն ու պսակը պագնել են եկեր, կը հրաւիրեն քանի մը փոքրիկ աղջիկներ, որոնք անձկութեամբ կը սպասէին այս հրակէրին՝ ցուցնելու համար իրենց անմեղ պերճանքը: Կիները պար մը կ'երգէին եւ այդ պարուհիներուն կորով կու տային: Ահաւասիկ այդպիսի երգերէն մի քանի սող.

Մենք Զարդարին աղբիւրն իջանք, դարակէօզ, ձանիկ ու կէս չրիկ առանք, դարակէօզ,
Մ ըներ, աղբէս, մ ըներ, տեստիս մի՛ կոյրե, երբու ձեր տիւնը գամ, շանախ մի կոյրե:
Ես, ուր կ'երթաս, ամոյշ հոտըդ իս կու գայ,
Սեւ աշուիդ, սեւ ըփուիդ հոգոս դեմ կու գայ...

Ասոնց գլխաւորներն են՝ «Աղբէարս Ըստամպոլ գացաք», «Հայրիկ մայրիկ զիս կարգէ»: Բայց ես աւելի կը սիրեմ անոնց եղանակները: Գեղեցիկ եղանակ, հրեշտակային եղանակ... Լապտերնիս վառեցինք ճամբայ ելանք դէպի փեսային տունը: Հեռուէն կը լսուէին հարսանիքին աղաղակները: «Հարսն առնել, հարսն առնել»: Ընկերացանք ակումբին եւ դարձանք հոն, ուրկէ բաժնուած էինք: Ամէնքը տեղաւորուած էին իրենց տեղը, ուր պատրաստ կը գտնուէին շատ տեսակ կերակուրներ, որոնք շարուած էին երկու մղոն երկայնութեամբ սեղանի մը վրայ:

Ճաշէն ետքը քանի մը պառաւներ եկան եւ փեսան իրենց մէջտեղը առին... Զոքանչը թաշկինակներ, քիսաներ, գուլպաներ կը դնէր փեսային ծունգին վրայ ըսելով «Օղուլ աս ա Դոչքողոյնց հարսը տուաւ ի տը (եւ թէ) շատ բարեւ ըրաւ: Հան (ահա) սա մարման (թաշկինակ), Աշխարք բերանենց տուտուն տուաւ, թէգ (գէթ) ըսաւ, տեղս թող փեսային թագն ու պսակը

պագնէ»։ Վերջապէս կու գայ ատենը հարսը վերցնելու։ Գառաւնները կը ժողովուրին, հարսը մէջտեղ կը սկսին ողբերգ մը երգել, գոր կը կոչեն «Աղլամ»։

Էկան տարին հարսին մարը լացուցին,
Ի՞շ մոմերով, ի՞շ խնկերով ժամ տարին։

Այս ողբերգէն կը զգածուի հարսին մայրը եւ կու լայ եւ խեղճ հարսը իր մօր արցունքներէն կը թրջուի։ Հարսը կը տանին ջահերով, մոմերով, լապտերներով. բազուկներէն կ'իյնան իր ընկերուհիները եւ իր փեշերը կը վերցնեն աղջնակները։ Հարսին առջեւէն կ'ընթանայ երիտասարդներու խումբ բազմութիւն մը, գոռայով, սուլելով, երերալով։ Անոնցմէ երկու ճարպիկներ կը պարեն, լաթեռնային շեշտերուն համաձայն։ Իրենց ձեռքը կը բռնեն աքլոր մը, բոլորովին մերկ ու գայն օդին մէջ կը ճօճեն ի տես հանդիսականներուն։ Քահանան կը կանչուի եւ անոնք կը պսակուին։ Դարձեալ կ'երգեն, կը պոռան, մինչեւ որ Մորփէոս գայ ու անոնց աչքերէն կախուի... Պարտիզակցիներու առաջին յատկանիշն է երգել։ Գաւառային դիւցազներգութիւններ յաճախ կ'երգուին հարսանիքներու մէջ։ Նշանաւոր է «Արեգակը մօրմէն ելաւ», որ 125 տունէ կը կազմուի.

Արեգակը մօրմէն ելաւ,
Ցաթեց աշխարհի վրայ,
Քուկին անուշիկ խօսերո՞ղ՝
Վիտաւո՛ւ սրտիս վրայ։

Մարի՛, սիրտըդ մարեցուցիր,
Խեղճ հոգիիս տնակը,
Գոնէ՛ գիս ձեռովդ մեղցուր,
Խոթէ՛ սրտիս դանակը։

(Մասիս, Կ. Պ. 1897 թ. 208)։

ԱՐՄԱՆ ՊԵԿ ԳԻՒՂ.- Կը պատմէ Արսլանպեկցի Մուշեղ Սերոբեան. Կը յիշեմ թէ հարսանիքի օրերուն մեր գիւղացիները, հրէ հրաւէր պիտի ընէին բարեկամներու եւ

ազգականներու, մասնաւոր հրաւիրակներու կը յանձնէին գեղահիւս թաշկինակներու մէջ լեցուած կարմիր խնձորներ, նոյն իսկ ձմրան եղանակին, եւ հրաւիրակները թաղերը շրջելով այդ խնձորներէն հատ մը կը յանձնէին հրաւիրուած ընտանիքին։ Այդ խնձորը, որուն վրայ միտուած կ'ըլլային անուշահոտ մեխակի ակռաներ, օրուան պաշտօնական հրաւիրագիրն էր։ Նշանատուքները տեղի կ'ունենային ծնողքին ընտրութեամբ։

Ոստքկապէն քիչ ժամանակ յետոյ նշանտուքի պաշտօնական արարողութիւնը կը կատարուէր խնջոյքով եւ նուագով։ Այդ օրէն սկսեալ երկու նշանածները իրաւունք չունէին իրար տեսնելու։ Գողունի տեսակցութիւն շաբաթէ շաբաթ։ Նշանտուքի շրջանը կը տեւէր ամիսներ, նոյն իսկ տարիներ։ Հարսանիքի օրէն շաբաթ մը առաջ աղջիկը հիւր կը տանէին կնքահօր կամ փեսային ազգականներուն տունները։ Չորեքշաբթի կամ հինգշաբթի կը կատարուէր հիննան, իսկ ուրբաթ օրը փեսացուի բաղնիքը։ Այդ միջոցին դարձեալ «խնձոր» հրաւիրագիրը կը ղրկուէր։ Շաբաթ իրիկուընէ կը սկսէին հարսանեկան ուրախութիւնները։

Պսակը տեղի կ'ունենար երկուշաբթի առաւօտ, եկեղեցին; Հարսնեւորները փեսան առած նուագով կը դիմէին հարսնցուին տունը գայն առնելու եւ եկեղեցի տանելու համար։ Հարսնեղբայրերը դուռը չէին բանար, մինչեւ նուէրի մը խոստումը։ Նորապսակ ամուրը անցեալին եկեղեցական եւ ազգային երգերով տուն կ'առաջնորդէին, իսկ վերջերը նուագերգութեամբ։

Նորապսակ ամուրին նուէր կը բերուէին խոհանոցի կահեր։ Հին ատեն հարսին պարել կու տային, այդ միջոցին ոսկի եւ զարդեղէններ նուէր տալով։ Հարսանիքի ուրախութիւնները կը տեւէին շաբաթէն մինչեւ հինգշաբթի առաւօտ։ Մինչեւ չորեքշաբթի գիշեր առագաստ չկար. Հինգշաբթի հարսնեւորներուն կը հրամցուէր աւանդական

«փառաշունչ»։ Արսլանյանի թե՛ այր մարդու եւ թե՛ կնոջ բարոյականը բարձր եղած է։ (Հայրենիք Ամսագիր, Բոսթոն, 1958 թիւ 8, էջ 95, թիւ 10, էջ 91-92)։

ՄԵՄ ՆՈՐ ԳԻՒՂ.- Ներսէս Պ. Շարապխանեան կը գրէ։

Գիւղերու մէջ ընդհանրապէս հարսանիքը կը սկսի Կիրակի օրէն ու կը տեսէ չորս օր։ Կիրակի փեսացուին ազգականներն ու բարեկամները կը հաւաքուին ու միատեղ կ'երթան հարսին տունը «հալաօրհնէք»ի մէկ երկու կիներ հարսնցուն հագուեցնելու հոգը կը ստանձնեն իրենց հետ բերած հարսանեկան շորերով, որոնք փեսային կողմէ շինել արուած են, իսկ շուրջիները կ'երգեն գեղջկական «էնեպու»ն (թրքերէն)։

Քահանան իրիկունը կ'օրհնէ փեսային շորերը, որոնք աղջկան ծնողքին կողմէ կարուած կ'ըլլան, եւ կը սկսին հագուեցնել «Նորհուրդ խորին»ով։ Էրբ վերջանայ, «Թագաւոր երկնաւոր» կ'երգեն։ Քահանան փողկապը առնելով մասնաւոր աղօթքով մը փեսային վիզը կը կապէ։ Փեսային գլխարկը աճուրդի կը հանուի. կնքահայրը եւ բոլոր ներկաները իրենց ձեռքին մէջ ունենալով վառած մոմ մը՝ մէկը գին մը կ'որոշէ եւ միւսները կ'աւելցնեն. վերջինը կը վճարէ իր գումարը քահանային եւ գլխարկը փեսային գլուխը կը դնէ։

Պատը եկեղեցին կը կատարուի, որմէ ետք փեսային տունը կը դառնան՝ հրգեցիկ խումբը առջեւէն։ Երբ կը հասնին, նախ հաւ մը կը մորթուի եւ արիւնը հարսին ու փեսային կօշիկներուն կը քսուի խաչածառ։ Կուգայ «հալաթ խաղցնելու» կարգը. հարսն ու փեսան քով քովի կեցած են. կին մը երկու ձեռքերուն մէջ մէկմէկ վառուած մոմ բռնած՝ կը սկսի պարել նորապսակ ամուլին առջեւ, յետոյ իր նուէրը հարսին ու փեսային վիզը փաթթելով, երկուքին ալ ճակատը կը համբուրէ եւ կը քաշուի, կարգը տալով յաջորդին։ Ահա այդ պարին երգը.

Սայվարնը վար եմնի, հարս կերտ խընամի, երբ որ աղջիկդ չի տաս, օյն պիմեմ խընամի։

Այսպէս շարունակաբար մինչեւ որ բոլոր կիները մէկ-երկու անգամ դառնան եւ իրենց նուէրը յանձնեն։ Յետոյ սեղաններ կը շտկուին եւ ամէն մարդ կը նստի ճաշի։ Հարսանեկան ճաշն է «քեշկէկը», որուն կափարիչը չի բանար խոհարարը, մինչեւ որ փեսան 5-10 դուրուշի նուէր չտայ։ (Արեւելք, Կ. Պ. 1907 թ. 6614)։

ԳԸՆԾԸԼԱՐ ԳԻՒՂ

Հարսանիքը կը սկսէր շաբաթ իրիկուն։ Փեսային ընտանիքը խնձոր մը դրիկելով տունները հարսանիքի կը հրաւիրէին. փեսացուն ալ նուագով իր սէյմէն (փեսաղար, փեարնկեր) կը ժողվէր։ Փեսան կ'ածիւրէր «Նորհուրդ խորին»ով, յետոյ կը լողցնէին եւ աջ ձեռքը հինայ կը դնէին. «սէյմէն»ներու ճկոյթները կը հինայէին։ Աղջկան եւ մանչուն ազգական բոլոր կիներն ու աղջիկները կը հինայէին իրենց մագերը եւ մետաղեայ բարակ երիզներով կը զարդարէին։ Հալաւի օրհնութիւնը հանդիսական կ'ըլլար, որուն կը հրաւիրուէին գիւղին երեւելիները։

Փեսային նոր զգեստն էր – 1890-1900-ին – Փոթուր (վարտիք), շապիկ, բուրդէ մուրթ կարմիր գօտի, վրայէն ժաքէթ, ոտքին կիսակօշիկ, գլուխը Փէս, զոր կը դնէր հայրը համբուրելով տղուն ճակատը։ Փեսային ուսին վրայ եռանկիւնածաւ կը ձգէին մետաքսեայ թաշկինակի մը ձեւով լաթ մը՝ Երուսաղէմէն բերուած։ Նշան էր սա, որ փեսան այսուհետեւ իր վրայ պիտի կրէր ընտանեկան բեռը։ Ճկոյթին ալ կ'անցնէին գեղեցիկ թաշկինակ մը։

Կիրակի օրուան հարսանիքը աղջկան կողմէն էր, իսկ երկուշաբթիներ՝ փեսային։ Հարսին զգեստն էր. – հին շրջանին – շալվար. մինիթան, գօտի-աճեմշաղը (ճանֆէս չլաթի, լահոտի, ծաղկեմկար եւ գոյնզգոյն), դլխուն վրայ կը կապէին հաստ եազմայով բոլորակ տախտակ մը, որուն վրայէն կը

ձգէին 4 «արշըն պասմա» (տպածոյ լաթ), հարսին երեսը ծածկելու նպատակով: Այս տպածոյ լաթը շուրջանակի կը կապէին տախտակին վրայ եւ վերջապէս անոր վրայէն ալ կը ձգէին բուն քողը՝ չափասն, խիստ բարակ ու թափանցիկ, կարմիր փուկերով:

Երկուշաբթի չլուսնցած փեսան իրեն-ներով հարսն առնելու կ'երթայ նուագով եւ հայկական երգերով: Մեկնումի առիթով փեսան կաթնիրաւունք կու տայ իր զոքանչին 1 ոսկի: Հարսը իր ծնողական շեմէն դուրս ելած պահուն աքաղաղ մը կը մորթէին հարսին ոտքին վրայ: Թարբրին կարգն էր. — Պարող «սէյմէններ», նուագածուներ, փեսան, կնքահայրը ձեռքը խոշոր մոմով, հարսը՝ քովէն կնքամայրը եւ հարսքոյրը, հարսնեւորները: Ստէպ կը լսուէին «եէ՛՛՛հէ՛՛հէ՛՛» բազմականչութիւններ:

Եկեղեցիի աւարտին թարբոր աւելի ուռճացած կը վերակազմուէր, բայց այս անգամ սէյմէններու եւ նուագածուներու տեղ անցած էին շապիկաւոր տիրացուներ, որոնք թարբրին առջեւէն կ'երթային զուարթօրէն երգելով «Ուրախ լեր Սուրբ եկեղեցի» շարականը: Փեսային շեմին երկրորդ աքաղաղ մը կը մորթուէր, այս անգամ փեսային ոտքին վրայ, որ բաժին կ'իյնար փեսային կնքամօր: Հոն դրան առջեւ սէյմէններ փեսային գլխուն վրայ ձուազեղ եփելով կ'ուտէին իբրեւ տառոս իրենց: Մեծ բազմութիւն, չափ ու սահման չունեցող ուրախութիւն:

Յետոյ կու գար տաներէցը եւ վար կ'առնէր հարսին անթափանցելի քողը, տպածոյ լաթը կլոր տախտակով, որմէ վերջ հարսը կը մնար թափանցիկ շղարշով մը: Այս առիթն ներկաները կը համբուրէին հարսին թաղը, կ'օրհնէին ու կը շնորհաւորէին: Ահա հարսին ուղղուած մաղթանքները փեսային կողմէ. «Մեր տունը բարի եկար... Աստուած շնորհք տայ... գալուստդ բախտաւոր ըլլայ. չար օր չտեսնէք... Աստուած շատ մը գաւազներ պարգեւէ... Մէկ բարձի վրայ ծիրանաք... Քար բունէք՝ ոսկի

ըլլայ... Հող բունէք՝ արծաթ դառնայ... Հայր Աբրահամին օրհնութիւնը տուներ-նիդ պակաս ըլլայ...» (Տօթթ. Նաւասարդ Տէյիրմէնճեան, Գրեմըլուր Գիւղի պատմութիւնը. Պէյրուս 1960, էջ 50-56):

ԵԱՆՈՎԱՆ ՕՐԹԱԳԻՒՂ

Կը նկարագրէ Եղիսարեթ նախիտեան «Աղջիկ մը ինչպես հարս կ'ըլլայ» վերնագրով:

Աստուածածնի երկրող օրը խնամու-քի կ'երթանք զարդոսկիին տալու հարսնցուին. հետեւեալ օրը հարսնցու աղջիկը տունէ տուն կը պտտի վրան ճերմակ քող մը առած եւ նուէր կը հաւաքէ: Այս տունէ տուն երթալով մէկ երկու շաբաթ կը տեւէ: Վերջին շաբաթ օրը հարսին եւ փեսային կողմէ կերակուրի պատրաստութիւն կը տեսնեն իրիկուան ուտելու: Կերակուրէն վերջ աղջկան կողմէ հարսնեւորները հարսնցուին վրայ ճերմակ քող մը ձգած կը բերեն աղջկանց առջեւ կը նստեցնեն, մինչ հարսը կը սկսի լալ բարձրաձայն: Կնքամայրը երկու ձեռքերը կը հինայէ հարսին ու կը պարեցնէ: Իսկ փեսան կրթակի առաւօտ իր ազգականներուն ու բարեկամներուն հետ բաղնիք կ'երթայ: Յետոյ կնքահօրը տունը կ'երթան ճաշելու, վերջն ա՛լ սափրիչին խանութը, ուր նախ փեսան եւ յետոյ իր բարեկամները կ'ածիլուին:

Երեկոյեան ծամը երկուքին այրեր ու կիներ կը հաւաքուին փեսային տունը, ուրկէ դուրս կ'իլին նուագներով եւ կ'երթան հարսնցուին տունը: Փեսային կողմէ մէկը հարսը մէջտեղ կը հանէ պարեցնելու, որպէս զի այդ միջոցին ոսկի փակցուի անոր ճակատը: Յետոյ փեսային կողմէ մէկը մէկ ձեռքը մոմ, միւսը հինայ, վիզն ալ չորս կամ հինգ կանգուն կերպաս կը պարէ, մինչ փեսային կողմի աղջիկները կ'երգեն.

Ասմային տալը գետինը կ'ալէ,
Ձեր աղոտը աղջիկը մեզի կը վայել:

Յետոյ կերպասը հարսին վրայ կը ձգեն եւ կրկին փեսային տունը կը դառնան պատրաստուած կերակուրը ուտելու: Վերջը փեսան սենակ մը կը տանին եւ ճերմակները կը հագուեցնեն երգեցողութեամբ ու հարսեւորներուն քով կը բերեն անդրապարտիքով ու շապիկով: Փեսան հոն կը սկսի բոլոր հանդիսականներուն ձեռքը համբուրել: Կնքահայրը ոտքի կ'ելլ, խրատական կը խօսի փեսային եւ ճակատը կը համբուրէ:

Երկուշաբթի առաւօտուն քահանան կու գայ, պսակը կը կատարէ, յետոյ եկեղեցի կ'երթան՝ փեսան առջեւէն ու հարսը ետեւէն նուագներով: Եկեղեցիէն դարձին հարսն ու փեսան բակը կը կանգնեցնեն, անոնց թաշկինակ կամ կերպաս նուէր կու տան. հարսին մօրը տունէն հաւ մը կը բերեն, փեսան կը մորթէ ու արիւնը հարսին ոտքը կը քսէ, որպէս զի ան բախտաւոր ըլլայ: Հարսին եղբայրը կ'ըսէ փեսային հօրը. «Այս հարսին ի՞նչ նուէր ունիք տալու». անոնք ալ կ'ըսեն. «Այգի կամ պարտէզ ունինք տալու», որմէ վերջ կուշտ ու կուռ կ'ուտեն, կը խմեն: Իսկ հարսն ու փեսան շատ նուէրներ կ'ընդունին» (Մաղիկ կիներուն, Կ. Պ. 1906, էջ 84-5):

ՈՎԱՃԸԳ ԳԻՒՂ.- Տուած է Յ. Էսկիեան.

Աղջիկ, մանչ նշանելը միմիայն ծնողքին իրաւունքն է. քիչեր կան, որ իրենց տղուն ուզած աղջիկը հարսնութեան առնեն: Երբ իրենց զաւակը նշանել ուզեն, քանի մը աղջիկներ օրականով աշխատիլ կը տանին արտը, պատրէզը կամ տունը: Անոնցմէ մէկը ընտրելէն վերջ խօսքկապ կ'ընեն, որպէսզի աղջիկը կապուած մնայ եւ ուրիշ ուզողի «տահա իմ աղջիկս, պզտիկ է» կ'ըսեն: Վերջապէս երկու կողմէն հրաւիրեալներու ներկայութեան նշան կու տան (բուսիք ոսկի, իփեքլի մէնտիլ, շոր) եւ բաժակներ կը պարպուին . . .

Նշանտուը կրնայ մինչեւ 2-3 ամիս տեւել: Հարսանիքէն շաբաթ մը առաջ «քեսեմեթ» կ'ընեն, այսինքն ազգականներուն իմաց կու տան, որ առաջիկայ շաբթուն հարսանիք ունին: Երկու կողմէն հարսանեկան պատրաստութեամբ կը դբադին: Չորեքշաբթի կամ հինգշաբթի օրէն աղջիկը կը հագուեցնեն: Նոյն օրը դրացիներ ու ազգականներ կը համախմբուին տունը, նաեւ հարսնցուին ընկերուհիները եւ պար բոլորելով հարսնցուն մէջտեղը կ'առնեն, կը հագուեցնեն, մինչ կիներ ու աղջիկներ կը պարեն երգելով.

Աղջիկը

Քակեցին արդար մազերս,
Հիւսեցին մեղաւոր մազերս:
Տարին դրին վարի դուռը,
Թափեցին վրաս վարդին ջուրը:
Ես չեմ ուզեր վարդին ջուրը,
Ես կ'ուզեմ իմ տատին տունը:
Մի բնար (բնամար) մարիկ, մի բնար,
Վաղն ելլես որդիդ չես գտնար:

Մայրը

Մի՛ լար, աղջիկս, մի՛ հեկեկար,
Ես եւ խեղճուդ չեմ դիմանար:

Աղջիկն այժմ հագուած է: Առաջին իրիկունը կնքամօր տունը կը մնայ, որ դուռ դրացին, մեծ ու պզտիկ ժողովելով մինչեւ կէսգիշեր պարեն: Հետեւեալ առտուն ազգական եւ դրացի մի առ մի իրենց տունը կը տանին հարսնցուն եւ կը պատուեն: Պէտք է, որ հարսնցուն մէկ երկու պատառ գոնէ ճաշակէ: Միշտ մեծ կիներ հարսնցուն առնելով իրենց տունը կը տանին եւ անկէ ուրիշ մը առնելով իր տունը կը տանի եւ այսպէս շարունակաբար:

Շաբաթ ու կիրակի իրիկուն հարսնցուն հօրը տունը կ'ըլլայ ու հարսանեկան խաղերով կը պարեն: Միւս կողմը, այսինքն փեսացուին հարսանիքը շաբաթ իրիկուրէն կը

սկսի. նախ ընկերները սրճարան կամ փեսային տունը կը հաւաքուին, հոն կ'ածիլուին նուագածուներու ներկայութեան եւ յետոյ սեղան կը տրուի... զուարճանալով: Ապա կը բոլորին սեղանին շուրջը: Ճաշէն վերջ փեսային ու կնքահօր հանդերձները զարդարուած ափսէներով փողոցէ փողոց շրջագայելով փեսային տունը կը բերեն... Հալաւի օրնութիւնը եկեղեցին կը կատարեն: Չոքանչը պարտաւոր է փեսային կուճուտ (ճկոյթ) մատը հինայել, նաեւ կնքահօր մատը: Այս արարողութիւնը կը կոչուի «հինայմոն»:

Փեսան կը հագուեցնեն «կորհուրդ խորին»ով... Տելիխանլըները մոմերով ու լապտերներով, տավուլին ու տղկարին առաջնորդութեամբ, խաղալով, խնդալով հարս առնել կ'երթան, եկեղեցի տանելու համար... Փեսան դեռ ոտքը տունին սեմէն ներս չկոխած աջ ոտքին վրայ աքլոր մը կը մորթեն: Բոլորակի պարը կը սկսի.

Սովորութիւն է որ փեսան ու կնքահայրը լուացուին: Լուացումը կը կատարուի կնքահօր տունը, կնքամօր ձեռքով, տելիխանլըները տավուլին, տղկարին եւ զոնաթային երգեցողութեամբ զուարճանալով: Ապա կը բոլորին սեղանին շուրջը: Ճաշէն վերջ փեսային ու կնքահօր հանդերձները զարդարուած ափսէներով փողոցէ փողոց շրջագայելով փեսային տունը կը բերեն... Հալաւի օրնութիւնը եկեղեցին կը կատարեն: Չոքանչը պարտաւոր է փեսային կուճուտ (ճկոյթ) մատը հինայել, նաեւ կնքահօր մատը: Այս արարողութիւնը կը կոչուի «հինայմոն»:

Փեսան կը հագուեցնեն «կորհուրդ խորին»ով... Տելիխանլըները մոմերով ու լապտերներով, տավուլին ու տղկարին առաջնորդութեամբ, խաղալով, խնդալով հարս առնել կ'երթան եկեղեցի տանելու համար ...

Էլանք Էլանք հարսին մարը լացուցին,
Ի՛նչ խնկերով, ի՛նչ մոմերով ժամ տարինք
(կրկ):

Մի՛ լար, մարիկ, դուն մի՛ լար,
Աղօղկդ քեզի մենք չենք տար (կրկ):
Հայտէ, տղաք, հարսին մարը լացնենք,
Աոք փառք տունէն շուտ դուրս հանենք
(կրկ):

Վերջապէս քահանան փեսային, փեսան ալ հարսին ձեռքէն բռնելով դուրս կ'առաջնորդեն: Ամէնուն ձեռքը լոյսեր վառուած «Առաւօտ լուսոյ» երգով եկեղեցի կը բերեն: Պսակուած են. եկեղեցիէն դուրս կը հանեն, քահանաներ, դպիրներ «Ուրախ լեր» շարականով տուն կ'առաջնորդեն. տան պատուհաններէն հարսին վրայ ցորեն, գարի, ընկոյզ եւ այլ պտուղներ կը թափեն: Հինգշաբթի կեսուրը բոլոր ազգականներն ու դրացիները հրաւիրելով սեղան կու տայ. կերակուրը կը կոչուի «փաշա» - ոչխարի գլուխով եւ տոտիկներով համեղ կերակուր մը: (Բիւրակն, Կ. Պ. 1898, էջ 473-5, 540-2):

ԱՏԱՓԱԶԱՐԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Հարսանիքը Ատափագարի մէջ կը տեւէր 9 օր, ուրբաթէն մինչեւ յաջորդ շաբաթ գիշեր. Ուրբաթ առաւօտ թաղի խորհրդարանին մէջ կը կատարուէր տանուչուիքը, պսակադրամին սակարկութիւնը, զոր կը վճարէր կնքահայրը:

Այդ օր թէ մաշուն, թէ աղջկան տունէն մէյմէկ մոմ կը ղրկուէր տունները, որպէս հարսանիքի հրաւէր: Նոյն օրը իրիկուան դէմ փեսայի տունէն հինայ կը ղրկուէր հարսնցուի տունը. պատանի մը կը տանէր գլխուն վրայ բռնած զարդարուն ափսէով: Շաբաթ օր հարսը բաղնիք կը տարուէր ու տելիքներով: Գիշերը փեսացուին տունէն ալ ձեռուածներու բազմութիւն մը հաւաքուելով միասնաբար խրախճանութիւն կը կատարէին մինչեւ արշալոյս: Այդ գիշեր հարսը պիտի պարէր բոլոր երիտասարդ կիներուն եւ աղջիկներուն հետ: Իր պարը կը կոչուէր փըթըր, ամենէն պարզը, ամէնէն զուսպը: Իր պարընկերուհիին պարագաները պարէն վերջ կ'երթային իրենց ձեռքերը

Համբուրել տալու հարսին եւ անոր գօտիին մէջ դրամ դնելու: Ներելի էին միայն շուրջ-պարերը երկսեռ պարելու համար:

Կիներու յատուկ պար մըն էր դգալով պարը, որ հաճելի էր դիտել: Պարողները իրենց ամբերուն մէջ կ'առնէին երկու դգալ կոթերը սեղմուած մատներուն միջեւ, այնպէս որ մատներու բացթողումով դգալները իրարու կը զարնուէին: Եւ այսպէս գոյգեքը դէմ դիմաց չըժժը - չըժժը կը պարէին նուագին հետ ներդաշնակ:

Կիրակի կը կատարուէր հալաւօրհնէքը փեսային տունը: Հարսին հալաւը, որ կը կոչուէր կապա, կը շինուէր փեսայի կողմէ: Փեսան հագուեցնելը աճուրդով էր, կը հագուեցնէր շատ վճարողը: Երկուշաբթի առտու փեսային տունէն կ'երթային հարսնառի: Հարսի կողմէ դուռը կը բանային միայն նուէր ստանալէն վերջ: Եկեղեցի մեկնելէն առաջ կ'երգէին «Ասին-դրին»ը, կէսը հայերէն, կէսը թրքերէն:

Ահա հարսի «կապան»։ Մետաքսեայ միթան շալվար, լահորի գօտի, պոյովքերը կամ մէջը քերքով կանացի լիպատէ:

Նոյն շաբթուան մէջ 60-70 հարսանիք տեղի կ'ունենար, Զատիկի Յինսեակին եւ Ս. Յակոբին:

Պսակէն վերջ նուագախումբը կը սկսէր պարի եղանակներ նուագել եւ երիտասարդները հարսուփեսային առջեւէն կը պարէին մինչեւ տուն: Հարսանեկան ճաշկերոյթը շատ ճոխ կ'ըլլար, ուր անալալման կը գտնուէին կաթնապուր, հաւեղէն եւ քէօշէփախլալա: Առագաստը չորեքշաբթի ըլլալուն՝ Հարսը կը մնար կեսրոջ, տալոջ եւ ներոջ հետ: (Պատմագիրք Ատափաղար «Աստուածարեալ» քաղաքին, Փարիզ, 1960, էջ 373-80):

ՊԻՂԱՅԻ ՀԱՐՄԱՆԻՔԸ.- Պիղայէն (Մարմարայի եզրերը) կը գրէ «Ք»։

Երբ Պիղացի օրիորդը նշանուի, մանչուն կողմէ իբր նշան կը տրուի խաչ մը, մարգարտաշար գարդոսկիներ՝ ոսկեփրփուր

կաղի մը վրայ կարուած, նաեւ հանդերձցու, ոտքի աման ու շաքարեղէն, իսկ աղջկան կողմէ ոսկեթել ու մետաքսահիւս «չեվրէ»ներ՝ մեծ սաւանի մը վրայ տողուած, մէջընդմէջ դրուած են դրամի, ծխախոտի քսակներ, թաշկինակներ: Հարսանիքը կը սկսի շաբաթ օր եւ հրաւերները կ'ըլլան տալոց կիներու կողմէ շաքարեղէն ու «չէօրէք» բաժնելով: Նոյն իրիկուն երէցկիներ հինայ կը դնէ հարսին ձեռքերուն: 30-40 տարի առաջ հարսին ոտքերն ալ կը հինայուէին:

Շաբաթ իրիկուն, մինչեւ կէս գիշեր խնջոյք կ'ըլլայ: Նոյն գիշեր, արշալոյսին մօտ, աղջիկները թմուկներով հարուսաներու տուներէ դրամ կը հաւաքեն եւ այդ դրամով յետոյ նուագի ընկերակցութեամբ կ'ուտեն, կը խմեն: Կիրակի կը պարեն, իրիկունը կը կատարուի փեսային անթրումը, իսկ գիշերը հալաւի օրհնութիւնը: Մանչուն տունէն կինք պալով հարսը կը հագուեցնեն, հասակն ի վար ոսկեփայլ թելեր կ'երկարեն, մանեակներով կը զարդարեն վիզը, եւն: Ամէնուն ձեռքը մոմեր կ'երթան հարսը առնելու. երբ հասնին եկեղեցի, կը հնչեն ծնծղաները «Ուրախ լեր Ս. Եկեղեցի» երգով:

Պսակէն վերջ ամէն մարդ հարսին ու փեսային ճակատը կը համբուրէ: Նոյն հանդէսով հարսը փեսատուն կ'առաջնորդուի, ճամբան ընդունելով ցորենի սրսկում պատուհաններէն: Դրան առջեւ աքաղաղ մը երեք անգամ հարսուփեսայի վրայէն անցնելով՝ «Աստուած շնորհաւոր ընէ» ըսելով կը մորթեն եւ արեւը դրան վրայ կը քսեն: Հարսը վեր ելլելու ատեն թեւին տակ հաց մը կը դնեն, իր գալուստը օհնաբեր ընելու համար: Այդ առթիւ մամիկները ողջկիր-ի պար մը կը խաղան ծափերով: Կը տրուի ընդհանուր ճաշ մը, որ կը տեւէ մինչեւ առաւօտ, խաղով, պարով, երգով» (Սուրհանդակ, Կ. Պ. 1900 թ. 424):

ԻՉՄԻՐԻ ՀԱՐՄԱՆԻՔԸ.- Իգմիրի «Արշալոյս Արարատեան» կը գրէ 1847-ին.

Նշանուորք. - Առաջին կարգի երիտասարդը 150 զուրուշի արժողութեամբ մատանի դրկելու է աղջկան, երկրորդ կարգինը՝ 100 զուրուշի եւ երրորդ կարգինը՝ 50 զրչի: Շատ անգամ խօսքկապ անունով ադամանդեայ մատանի մը կը զրկուի քահանայի մը կամ աշխարհականի ձեռքով, որ մետաքսեայ թաշկինակ մը կը բերէ աղջկան կողմէ: Յետոյ քանի մը օրէն Հարսնտեսի եւ փեսատեսի կ'երթան:

Օծիտ. - Առաջին կարգի աղջիկը 6 ձեռք Հազուստ կ'ունենայ. երկրորդ կարգը 4 ձեռք եւ երրորդ կարգը՝ 2 ձեռք. Հիմակ 8-10 ձեռք Հազուստ ալ կ'ընեն առաջին կարգի աղջկան. ասոցմէ զատ 10-12 մսխալ մարդարիտ կ'ունենայ, մէկ զոյգ ոսկի ապարանջան, մէկ զոյգ ադամանդեայ օղ, մէկ քանի մատանի:

Հարսանիք. - Կիրակի գիշեր կը Հաւաքուին երիտասարդին եւ աղջկան տունը. երիտասարդը կնքաօր, ծնողքին եւ ազգականներու ընկերակցութեամբ աղջկան տունը կ'երթայ, ուր կը դտնեն Հարսը սրահին անկիւնը կանգնած, գլուխը ոսկեթել եւ ծիրանի շղարչ մը ձգած: Մէկ երկու ժամէն Հարսը կ'առնեն եկեղեցի կ'երթան, ուր պսակին Ս. Խորհուրդը կատարելով փեսային տունը կը դառնան եւ անմիջապէս Հարսին գլխէն պսակը վար կ'առնուի: Հարսանիքին նուազածուներ բերել տալը արգելուած է...» (Արշալոյս Արարատեան, Զմիւռնիս 1847 թ. 298):

Թիւրքը 1867-ին ալ կը ներկայացնէ իր ժամանակի եկեղեցական օրէնքները, որոնց նիստակն էր աւելորդ ծախքերը արգելել կամ չափաւորել. - «Օրհնած նշանը 50 զուրուշիոցէն մինչեւ 150 զուրուշիոց վերթիմ մատանիով եւ մէկ ալ փողիով պիտի ըլլայ եւ խօսքկապէն մինչեւ Հարսանիքի օրը ո՛չ տղուն կողմէն եւ ո՛չ ալ աղջկան կողմէն չըրկեն ո՛չ գոհարեղէն, ո՛չ ոսկեղէն, ո՛չ անուշեղէն եւ ո՛չ ուրիշ բան: Աղջկան օծիտներուն մէջ կլապտանը կամ թելիք խավլու

կամ պողչալըն ծանր բանուած բան մը պիտի չըլլայ եւ ներքէն Հազուստներուն վրայ ձեռքով բանուած բան պիտի չըլլայ...» (Արշ. Արարատեան, 1867 թ. 819):

ՊՈՒՍՈՑ ՀԱՅՈՑ ՀԱՐՍԱՆԻՔԸ

«Կանոնական Կոնդակ Հարսանեաց»ը Յովհաննես Պատրիարքէն, 1811ին, կը գրէ.

«Քահանայք քննեցեն զՀասն ու չՀասն... անկաշառ Հաստտեսցցեն զՀարսնախօսութիւնն եւ ապա փեսայի քահանան տացէ զնշանն ի ձեռս քահանայի Հարսին... Պսակելի փեսային պարտ է լինել 15 տարեկան եւ Հարսն 12 տարեկան: Նշանն կարէ լինել մատանի, բայց ծաղիկ, թէլ եւ շեքէր մի գտանիցի: Նշանօրհնէքն ի Հարսանեաց կիւրակէն եղիցի ի Հանդեսի: Հրաւիրակ ձայնող-օխուճի-միայն երեք կիներ լիցին. ի Հանդերձս փեսային եւ ի ճեհէզս Հարսին մի լիցի սամոյր կամ վարշախ, քիւրք, ֆերմայիշ շալ, ոսկի կամ արծաթ թաս, նալըն, ջերկէֆ, մարգարիտ, աստէ թելիք եւ սոմ սրմալը փուլլու բանած մի լիցի. ի փեսայէն առ Հարսն իւստ խաֆթանի եւ ի Հարսէն առ փեսայն պոյուն եաղլըր մի չիենացին. ի գլուխ փեսային թէլ կամ էլմաս մի զատանիցի եւ ի ձեռս թուր մի առնուցու. Առանց խոստովանութեան եւ Հաղորդութեան կոյսն մի պսակեսցի...» (Կանոնական Կոնդակ Հարսանեաց. Կ. Պ. 1811, էջ 6-9):

ՄԱԼԿԱՐԱՅԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Տիկ. Ա. իր մանկութեան յիշողութենէն կու տայ քանի մը գծեր Մալկարայի Հարսանիքէն. -

Աղջիկները 14-15 եւ մանչերը 18-20 տարեկանին կ'ամուսնանային: Նշանտուքը աղջկան տունը կը կատարուէր, ուր Հաւաքուած կ'ըլլային երկու կողմի ազգականները: Մնողք իրենք կ'անցնէին մատանիները իրենց զաւակին մատը: 4 տարիի չափ նշանուած կը մնային եւ իրար չէին տեսներ այդ միջոցին: Նշանտուքին կը Հրամցուէր

սուրճ, անուշեղէն եւ պտուղ. հարուստները կ'ուենենային նաեւ գինի, օղի եւ մեզէ:

Պսակը կը սկսի աղջկան տունը, ուր փեսային կողմինները վառուած մոմերով կ'երթային քալելով: Երկու կողմերը աղջկան տունը միանալէն վերջ՝ քահանան պսակի ազօթքները կ'ընէր, յետոյ քալելով եւ նուագով փեսային տունը կը վերադառնային: Նուագողները քրիստոնեայ գնչուներ էին, որոնք կը նուագէին ջութակ, ուտ, կլարինէտ, տամպուրկա:

Փեսայի տան դրան առջեւ ոչխար մը կը մորթուէր, որուն միսը յետոյ հարսանիքի կերակուր կ'ըլլար: Հարսին եւ փեսային գլխուն վրայ մանր դրամ կը ցրուէին: Հարսանիքի վերջաւորութեան փեսային տունը կը սարքուէր սեղան. ուտելիքները՝ ապուր, կլորիկ շաքարով, կարագով, բրինձով փլլաւ: Սեղանին վրայ գինի եւ օղի առատօրէն: Ծաշէն վերջ կը սկսէին պարերը: Մալկարայի հարսանիքին մէջ «թագաւոր»ը թուր չէր կրեր, որ արգելուած էր Թուրքիա: Շաքաթ մը վերջ երկու կողմի ազգականները կը հաւաքուէին «փաշա» ուտելու համար եւ այդ առթիւ հարսին նուէրներ կը տրուէին:

ՄՈՒՍԱ ԼԵՌԱՆ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Մուսա Լեռան սերունդ է Լիբանանի մէջ Այնճար հայ գիւղի բնակչութիւնը, որոնց հարսանեկան սովորոյթը գրի առաւ մեր խնդրանքին վրայ գիւղի ուսուցիչ Պր. Սերոբէ 1966-ին:

«Ուրախութիւնը համատարած բոյն դրած է փեսացուի եւ հարսնցուի ընտանեկան պարագաներուն սրտերուն մէջ: Շաքաթ իրիկուընէ պատրաստութիւններ կը տեսնուին կիրակի օրուան խրախճանքին համար: Հերիսան, որ առաջին կարգի հարսանեկան կերակուր է, մասնաւոր խոհարարի մը միջոցաւ կը պատրաստուի:

Շաքաթ իրիկուն ժամը ութի ատենները կը սկսին հինայի վերաբերեալ աւանդական

ուրախութիւնները: Գիւղի երիտասարդներն ու երիտասարդուհիները կը հաւաքուին եւ տավուլ գուռնայի ձայներուն հետ կը սկսին պարել տեպքիի շուրջպարը: Առատ է գինին եւ օղին, գլուխները կը տաքնան, ուրախութիւնը կը հասնի իր գագաթնակէտին եւ ապա մէջտեղ կը բերեն փեսան շրջանակի մը մէջ եւ զարդարուն բարձի մը վրայ կը նստեցնեն: Կ'երգեն, կը պարեն եւ բարեմաղթութիւններ կ'ընեն փեսայի կեանքին համար: Հինան ափսէի մը մէջ կը դրուի եւ օղիով կը շաղուի: Փեսային ձեռքը խաչածեւ կը հինային եւ ապա կարգը կու գայ կնքահօր եւ ազգականներուն, որոնք մասնաւոր նուէրով մը միայն կրնան հինայ ունենալ իրենց ձեռքերուն: Մօտիկ պարագաներ բոլորն ալ անխտիր հինայ կը դնեն իրենց ձեռքերուն:

Օրիորդներու խումբ մը, հինայի ափսէն առնելով կ'երթան հարսնցուին տունը եւ հինայ կը դնեն հարսնցուի ձեռքերուն: Հարսնցուին քով կը հաւաքուին իր ընկերուհիները եւ մինչեւ լոյս կ'ուրախանան երգելով եւ պարելով: Հարսնցուին մօտիկ ազգականները նուէրներ կը տանին: Նուէրները կ'ըլլան ընդհանրապէս տան կահկարասիներ, ամաններ, դգալներ, պատառաքաղներ, սուրճի եւ օղիի գաւաթներ, մէկ խօսքով կը մտածեն, որ հարսնցուն նոր կազմելիք տան համար ունենայ ամէն պէտք եղածը:

Կիրակի է, կը պատրաստուին սեղաններն ու աթոռները հրաւիրեալներուն համար: Սեղաններուն վրայ կը շարուին մեզէներն ու օղիի եւ գինիի շիշերը: Խրախճանքը կը սկսի ժամը 10-ին: Ծիշդ ժամուն հրաւիրեալները կը հասնին եւ կը գրաւեն իրենց տեղերը: Տավուլ գուռնայի ձայներուն հետ կը սկսին շուրջպարն ու առանձնապարը: Բոլոր հարսնեւորներն ալ ուրախ են, կ'երգեն եւ բաժակներն իրար բախելով բարեմաղթութիւններ կ'ընեն: Գլուխները երթալով կը տաքնան: Ծաշի ժամն է. սեղաններուն վրայ կը շարուին հերիսան, տղման

եւ խոլխազի (գետնախնձորի նման բանջարեղէն մը) ջրոտ կերակուրը մտով պատրաստուած: Խումք մը օրիորդներ հարսնցուին համար կերակուր կը տանին փեսային տունէն խորոված միս, տապկած հաւ, քէօֆթէ, ձմերուկ, խաղող եւ ուրիշ պտուղներ խոշոր ափսէներով: Տարուած կերակուրները հարսնցուն իր ընկերուհիներուն հետ միասին կը ճաշակէ:

Փեսան եւ կնքահայրը հագուեցնելու ժամն է: Սեղան մը կը զետեղուի մէջտեղը եւ վրան կը դրուին հարսանեկան հագուստները: Քահանան կը սկսի հալաօրհնէքը: Երբ սարկաւազը երգէ «Խորհուրդ խորին», նշանուած երիտասարդներ հագուստները մէկիկ մէկիկ փեսայի եւ կնքահօր գլխուն վրայ երերցնելով կը հագուեցնեն: Տավուլ գուռնան կը վերսկսի երթի յատուկ եղանակով եւ հարսնեւորները կը սկսին յառաջանալ խմբովին դէպի հարսին տունը երգելով եւ պարելով: Մինչ այդ արդէն հարսը հագուած սքռած կը սպասէ հօրը տունը: Հարսնեւորները կը հասնին հարսին տունը. շուրջպարը կը սկսի, այս անգամ սակայն աղջկան ազգականներն են պարողները: Շուրջպարէն յետոյ թաբօրը կ'ուղղուի դէպի եկեղեցի, պարով եւ երգով:

Ժամանակին հարսը զարդարուած ձիու մը վրայ կը նստեցնէին, այսօր հետիոտն եւ կամ ինքնաշարժով թաբօրին կ'ընկերանայ: Պսակէն յետոյ կ'ըլլան շնորհաւորութիւններ եւ հարսը կ'առաջնորդեն տղունը տունը: Ուրախութիւնը այս անգամ կ'ըլլայ խառնուած, կ'ուտեն, կը խմեն, կը զուարճանան տղուն ու հարսին պարագաները միասին մինչեւ ուշ ատեն:

Ծանօթ.- Եթէ հարսանիքը շաբաթ օր տեղի ունենայ, հարսն ու փեսան չեն կրնար միասին ըլլալ:

ՔԵՍԱՊԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Մեր դիմումին վրայ գիւղին քահանան՝ Հայր Կոմիտաս Պէօճեքեան հաճեցաւ ղրկել այս նկարագրութիւնը:

Փեսացուին ազգականներէն քանի մը ծերեր կ'երթան երիտասարդին ցոյց տուած տունը: Սովորական երեկոյթէ մը վերջ ասոնց գլխաւորը կը հարցնէ աղջկան հօր կամ անոր տեղը բռնողին. - «Ձէ՞ք հարցներ, թէ ինչու եկած ենք»: Տանտէրը կը պատասխանէ. «եկած էք դրացիութեան»: - Եկած ենք Աստուծոյ եւ Մարգարէներուն հրամանով խնդրելու ձեր աղջկան ձեռքը մեր մանչուն համար»: «Հօրեղբայրը գիտէ, Քեռին գիտէ» ըսելով կը ձգձգեն: Ամէնէն վերջը ազգականներէն մէկը կեղծելով դուրս կ'ելլէ եւ բացականերուն պատասխանը կը բերէ, անշուշտ հաստատական: Ապա երկու հոգի կը մտնեն ներսի սենեակը, ուր պահուած կ'ըլլայ աղջիկը եւ կ'առնեն անոր հաւանութիւնը: Եթէ աղջիկ ուզողը «Ծնողքս գիտէ» ըսէ, կու գան եւ այս հաստատական պատասխանը կը փոխանձեն ծնողքին, որոնք կ'ըսեն. - «Շնորհաւոր ըլլայ»: Տղուն կողմիններէն մին դուրսը կը կրակէ երկու անգամ եւ լուր կու տան տղուն:

Նշանուութ. - Ուրբաթ իրիկուն տղուն տունը խոյ մը կը մորթուի, իսկ տղուն քրոջ ամուսինը խոյ մը կը տանի աղջկան տունը, որպէս զի կերակուր պատրաստեն: Յաջորդօրը, շաբաթ, կը հրաւիրուին տղուն բոլոր ազգականները տղուն տունը եւ կ'ըլլայ խրախճանք: Աւանդական կերակուրներն են. Գազան գարմասկ (սոխով եախնի), փլլաւ կորկոտով, հերիսայ, եւ այլն: Թմբուկ, գուռնայ, սրինգ կ'ընկերանան խրախճանքին:

Կէսօրէն վերջ քահանան տղուն տան մէջ կ'օրհնէ մատանիները եւ յետոյ երկուերեք հոգի քահանային հետ աղջկան մատանին կը տանին ասոր տունը. աղջիկը պահուրտած կ'ըլլայ վարագոյրի մը ետեւ:

Քահանան կը հարցնէ անոր. - Աղջիկս, Պր. ախինջին տղան ձեռքդ կը խնդրէ. յօժա՞ր ես: Աղջիկը գլխով հաւանութիւն կը յայտնէ: Քահանան խաչով կ'օրհնէ զայն եւ մատանին մատը կ'անցնէ:

Նշանտուքին յաջորդ օրը տղու կողմէն տիկիները մեծ ափսէներով բերդանուշ կը տանին աղջկան տունը (10, 20 եւ աւելի ափսէներով): Նոյն իրիկունը տղան իր ընկերներով կ'երթայ աղջկան տունը «բերդանուշ» ուտելու համար: Առաջին կտրողը կ'ըլլայ փեսացուն, որ տակը կը կապէ իր նուէրը: Ընկերները իրենց կարգին կը համտեսեն եւ իրենց նուէրը կու տան: Փեսացուն երեք իրաւունք չունի խօսք առնելու. փեսեղբայրն է իր փաստաբանը եւ պաշտպանը: - Ընկերները կը մեկնին, իսկ փեսայ եւ փեսեղբայր կը մնան աղջկան տունը ընթրելու:

ՀարսաԱնիք. - Գլխաւոր կերակուրն է հերիսան: Տիկիները կը մաքրեն ցորենը. երիտասարդները կը ծեծեն զայն: Երիտասարդ, երիտասարդուհիներ լականներով ցորենը իրենց գլխուն վրայ բռնած պարելով, երգելով գիւղին հրապարակը (խոթը) կը տանին եւ հոն հանդիսաւոր կերպով կը լուան: Շուրջպարը անպակաս է «խոթին» մէջ չորեքշաբթիէն մինչեւ շաբաթ:

Ուրբաթ երեկոյ կը մորթուին խոյերը պատրաստելու համար եախնի, ֆասուլիա, հերիսա, սուքմիք, քէշք եւն: Գիշերը հինէի արարողութիւնը տեղի կ'ունենայ. տղուն կողմի տղաք եւ աղջիկներ «հինէ»ն առած ջահերով, երգով ու պարով աղջկան տունը կ'երթան:

Շաբաթ կէսօրէ վերջ ժամը 2-ին կը սկսի պսակի արարողութիւնը: Երիտասարդները թմբուկով, սրինգով կ'երթան աղջիկը բերելու: Հարսը կը նստեցնեն ձիու վրայ եւ տղուն ընտանիքի մէջ եղող փեսայ մը սանձէն կը բռնէ եւ երգով, պարով աղջիկը իր պարագաներով կ'առաջնորդեն եկեղեցի, ուր կը սպասէ արդէն տղան:

Պսակի արարողութեան ժամանակ թագը - տեղական բառով «հարսնեօյր» - կը դրուի հարսին եւ փեսային գլուխը եւ այդ ձեւով կը տանին հարսը տղուն տունը. հարսին երեսը միշտ գոց է լաչակով մը, մետաքսէ «քէօլկա»ով մը: Տուն հասած ժողովուրդը կը ցրուի. Հարսը ամբարի ետեւի սենեակի մէջ կը մնայ մինչեւ յաջորդ օր:

Յաջորդ օր, կիրակի, արեւը մար մտնելէն վերջ, քահանան կու գայ շարունակելու պսակի արարողութիւնը, որ կ'ըսուի «հարսնեօյր» հանելու արարողութիւն, որուն վերջաւորութեան քահանան կը վերցնէ պսակները (թագերը), փեսեղբօր տիկինը կը վերցնէ հարսին երեսի քողը: Պսակը աւարտած է: Տան մուտքին աման մը կը դնեն փեսային առջեւ, զոր աջ ոտքով կտորելու է: Ներսը կը սկսի հացկերոյթը: (Կռունկ, Թիֆլիս, 1863, էջ 385-98: Տես նաեւ Ագգազը. Հանդէս, 1907, էջ 2-9):

ԼՈՌԻԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ. - Գրիգորիս քհնյ. Երզնեանց կը պատմէ.

Լոռում նշանագրութիւնը երկու տեսակ է լինում. «Օրորոցախագ»... եւ խալաթ տալ աղջկան ծնողներին... Նշանագրութեան համար հայրը բելգահ է տալիս, այսինքն նշան կամ մատանի կամ մի-երկու ոսկի, հետը մի շիշ օղի, գաթաներ, եփած հաւեր, կարմիր ձու, գառան մսի խաչամայ, չոր մրգեր...

Երբ պսակուելու ժամանակը մօտենում է, որոշում են թէ ինչ բաժինք պիտի բերէ աղջիկը, տղայի հայրը ինչ մասցու պէտք է տայ, նոյնպէս խմիչքներ: Մի քանի դէպքերում պահանջւում է բաշլըղ-գլխագին: Հարսանիքի մեծ պատրաստութիւնը աւելի տղայի տանն է տեսնւում: Ուրբաթ կանչում են փողհարին - զուռնաչուն: Հենց առաջին անգամ փողը հարելուն տղայի մայրը պար է գալիս եւ մի աղլուխ-խալաթ տալիս զուռնաչուն: Խալաթ է տալիս եւ մասցու մորթողին: Փեսայի մայրը դարձեալ

պարելով մէկ թաշկինակ-ուսպանդ է կապում փեսայի վզից:

Հարսանիքից մի օր առաջ աղջկան տուն են ուղարկում մսացուն, խմիչքներ, հարսնացուի մօր կաթի իբրեւ վարձ՝ թանկագին խալաթ: Թագաւորը հագնելով հարսանեկան շորերը գուռնա-դհուլով, ճրագնեքը վառած գնում է խաչ-եղբօր (կնքահայր) տունը, ուր սկսում են խմել, պար գալ եւ ապա խաչ-եղբայրը թուրը կապելով գալիս են թագաւորի տունը: Այդ գիշեր ընթրիքի են հրաւիրում գիւղի բոլոր մեծամեծները. հուսաբուսւմ են հարսանքատուն օտրերից եւ ձորերից տաւարածները՝ պարում են:

Առաւօտուն «հարսնառ» գնալու են պատրաստում: Բոլորը ձիաւորում են: Մականները (ազապ-պաշի) թիկնապահներ են հանդիսանում թագաւորի եւ թագուհու: Հոտնեղով հարսնատուն՝ որհետում է հարսի հալաւը: Հարսին գօտին կապում է խաչ-եղբայրը. Պսակը լինում է եկեղեցում... Երբ հարսանիքը փեսատունն է հասնում, թագաւորի մայրը գալով համբուրում է հարսին ու որդուն եւ արծաթի թասով շարքաթ խմացնելով ապագայ կեանքի քաղցրութիւն մաղթում ու ընծայ տալիս: Ընծայ է տալիս եւ հայրը, համբուրելով հարսի ձեռքը՝ Երբ հարսը կոխում է տան շէմքը, բերում են լոշ հացեր, որոնց նա տան չորս կողմի վրայ շարտում է, առատութիւն մաղթելով...» (Ազգագրական Հանդէս, Թիֆլիս 1898, էջ 329-36):

ԳՈՂԹՆԻ (ՎԵՐԻՆ ԱԳՈՒԼԻՍ) ՀԱՐՍԱՆԻՔԸ

Երուանդ Լալայեան տուած է մանրամասն նկարագիր մը, կ'ամփոփեմ:

Երիտասարդը 20 տարեկանից, ազնիվը 15ից յետոյ միայն երթարկուել են ամուսնական լծին...

Բալզառ. - Աղջկան ու ծնողներից համաձայնութեան խօսքն առնելուց յետոյ ծնողները խնձորի մէջ խրած մի մատանի

տանում են աղջկան տունը եւ մատանին դնում աղջկան մատը...

Տոշտողրիք. - Թէ՛ տղայի եւ թէ՛ աղջկան տանը հաւաքում են մօտիկ ազգականուհիները հարսանեկան հացի ալիւրը մաղելու: Երեկոյան դէմ հացթուխը վերցնում է շամփուրն ու հացառը, ալիւր մաղողը մաղը, խոհարարուհին՝ շերեփը եւ երածչտութեան ներդաշնակութեամբ պարում, իւրաքանչիւրը ձեւացնելով իւր անելիքը - ալիւր մաղել, հաց թխել, կերակուր եփել ենն»: Կը նկարագրուին եզը մորթելը, Խընդտըրիքը (հինայ), սափրելու ծէսը, խնամականչ, Ուրսը, եւն (Տես Ազգ. Հանդէս, 1905, էջ 117-34):

ՋԱՆԳԵԶՈՒՐԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ.

Կը նկարագրէ Ե. Լալայեան.

Նշանադրութիւն. - Զանգեզուրի գաւառամասում շատ փոքր հասակում, ութըինը տարեկան աղջկան նշանում եւ 11-12 տարեկան ամուսնացնում են, իսկ տղաները՝ 14-15 տարեկան հասակում: Թոյլատրւում է արեւակցութեան եւ խնամութեան 5 աստիճաններում...

Աղջիկ ուզել. - Աղջկան ընտրութիւնը կախուած է տղայի մօրից... Աղջիկներն ու երիտասարդները միմեանցից բոլորովին առանձնացած են: Սրանք մօտենում են միմեանց երբ մարդկային աչքերից հեռու են մնում... Նշանադրութիւնից մինչեւ պսակը տեւում է երեք ամսից մինչեւ մի տարի: Այս միջոցում խնամութիւն են անում միմեանց հետ, գնում գալիս, նուէրներ ուղարկում: Այս նուէրները սովորաբար տղայի տնից են ուղարկում եւ կոչւում Խոնչա...

Ծընապայ կտրել. - Երբ գալիս է ձմեռը, նշանածների տէրերը սկսում են հարսանիքի մասին մտածել: Փեսայի հայրը մի շիշ օղի վերցրած գնում է հարսնացուի տունը եւ նրա հօր հետ որոշում, թէ որ օրը գայ «Ճընապայ կտրելու»... Սովորաբար տղայի հայրը տալիս է աղջկան հօրը 15-120

ուրբի, որ կոչուում է «ծծագին» կամ «ճընապայ» (ճանապարհ): Կը յիշուին Տըշտըմաղ (տաշտաղէք), Գինթափէք, Ակուակոչի, Սափրելու ծէսը, Հարսնառ, Քըթեթորհնանք, Կանչ, եւն (Տես, Ազգ. Հանդէս, 1898 թ. 2, էջ 66-83):

ՍԻՍԻԱՆԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Դարձեալ Ե. Լալայեանի գրչէն սիրուն եւ մանրամասն նկարագրական մը կայ մեր առջեւ, որմէ ստիպուած կը համառօտենք.

Սրահանում աղջիկ երիտասարդութիւն չկայ, որովհետեւ շատ մատաղ հասակումն են ամուսնացնում: Ութ կամ ինն տարեկան նրան արդէն նշանում են... Պատահում է նաեւ «օրօրոց խաչել» - նշանելիս օրօրոցի վրայ դանակով մի մի խաչ (գիծ) են անում:

Հարսի հարսանեկան զգեստը «քթեթ» է կոչուում եւ փեսացուի տէրն է պատրաստել տալիս: Բաղկանում է հետեւեալ կտորներից. մի քիւրք, մի շապիկ, մի դօտի, մի չարզաթ, մի գոյգ կօշիկ»: Երբ աւարտում է պսակի խորհուրդը, գնացքը ծանր քայլերով դալիս հասնում է դարձեալ նորահարսի տունը. սեղան են դուրս բերում, գինի, օղի խմեցնում հարսնեւորներին. մատուցում են բուլղամա (թոնիրի մէջ եփուած մսով կերակուր) եւ բողբաշ... Կիրակի առաւօտ պատրաստուում են հարսին տանելու թագաւորի տունը... Հարսը խոնարհում, համբուրում է իր հօր եւ մօր ձեռքը եւ ապա իրենց թոնրի շուրթը: Ղաւազներն ու մակարները ձայները ձգում են եւ պարով, երգով, հրացանի թնդիւնով տանում հարսին ու թագաւորին՝ վերջինիս տունը... » (Տես, Ազգ. Հանդէս 1898 թ. 1, էջ 208-24):

ԴԱԼԱՐԱԳԵԱՋԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ.-

Կը պատմէ Քաջբերունի.

Հարսանիք է... Օրը Ուրբաթ է եւ եկեկոյին մօտ. կէս ժամից յետոյ մսացուն պէտք է մորթեն, մի կալի մէջ, բացօթեայ տեղ. գիւղական ամէն հասակի եւ սեռի

բազմութիւն. զուռնան չարաչար ածում էր եւ թմբուկը դղրդեցնում. մի քանի երիտասարդ հարսներ երեսները կարմիր թաշկինակներով ծածկած՝ փոփոխաբար կաքաւում էին... Հարսների հետ երիտասարդ տղաներ ձեռք ձեռքի տուին եւ մի մեծ շրջան կազմեցին գեօնդ պար գալու. մսացուն եւ զուռնան մնացին շրջանի ներսը: Այս հանդիսաւոր րոպէին փեսացուն մօտեցաւ մսացուին, իր ծալովի փոքրիկ դանակով խաչածեւ նշան արեց մսացուի բզին... մի քանի կաթիլ արիւն դուրս գալով՝ ներկեց դանակը: Ազգայներից մինը մի քանի մազ պոկեց մսացուի պոչի ծայրից, որ թագաւորը դնելով իր արիւնաթաթախ դանակի բերանին՝ խփեց եւ պահեց... այդ դանակը քակում է ամէն մի շար դէպքի եւ շար լեզուի ներգործութիւն...»:

Հետաքրքրական է Քաջբերունիի նկարագրականը հարսանեկան պարաշղթայի մը, որ կազմուած է տասներկու պարատեսակէ. 1. ծանր գեօնդ, 2. ծունկ կտորուկ, 3. Մայմօ, 4. երեք ետ, 5. Մաշկէ, 6. Գէօգչու, 7. Եարգէօզալ, 8. Սեթայի, 9. Թալափի, 10. Սիւղմայ, 11. Եալլի, 12. Թուուկ (Փորձ, Տփլիս, 1881 թ. 3, էջ 77-88):

ԲՈՐՁԱԼՈՒ ԳԱՒԱՌԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ.-

Կը գրէ Ե. Լալայեան.

Աղջիկները 13-15 տարեկան հասակում ամուսնանում են, իսկ երիտասարդները՝ 16-18 տարեկանին:

Աղջիկ ուզել. – Մի օր տղայի հայրը գնում է աղջկան տունը եւ գերգաստանի մեծից խնդրում աղջկան ձեռքը. «էկել եմ քո օջախից մի բուռ հող տանելու»: Եթէ կամենում են մերժել, հէնց առաջին անգամին ասում են. «Ձեր կորուստը մեր տունը չի»: ... Երբ աղջկան տէրը տալիս է իր համաձայնութիւնը, խնամախօսները հանում են օղին եւ նոր բարեկամութեան մասին բարեմաղթութիւններ անելով խմում, հարսնացուին տալիս մի բախդաղի կամ

չալովի եւ մատանի: Այս առաջին նշանը կոչւում է Բելգեհա:

Բելգեհա տալուց յետոյ որոշուած է նշանադրութեան օրը: Նշանն է մի մետաքսեայ թաշկինակ, մատանի, խաչ, ապարանջան, գինդեր: Բացի սրանից ուղարկուն են մի ամբողջ գառան կամ ոչխարի խաչլամա, 6-12 բոխչայ թխուածք, այսինքն՝ գաթա, նազուք, հալուա, կարմիր ձուեր, չոր միրգ, օղի, գինի եւ ոտնամաններ հարսնցուի տան աւագ անդամների համար... Քահանան վերցնում մետաքսեայ թաշկինակը, իր ձեռքով ձգում է հարսնացուի գլխին ու սկսում իր օրհնանքն ու պահպանիչը:

Բորչալուի մէջ նշանադրութիւնը տեւում է մինչեւ 3 տարի: Յետոյ կատարուեն

են «Բարգիտհարէք» («Բոխչա»ներ), «Շարածեէք» (հագուստը ձեւել), «Տաշտադրէք» (հաց եփել), «Սափրելու ծէսը», «Հարսնառ», «Հալաւօրհնէք» եւ այլն: «Կենաց ծառը» կոչւում է «Փոփրխ» կամ «Փոփոխ»: Աղջիկը ծնողներից բաժանուելիս իր կողմից երգում են ընկերուհիները.

Թողույ մի՛, մերայ, թողույ մի՛ տանեն,
Դեռ չեմ կշտացել իմ հօրանց տանէն.
Ինձի կը տանեն, դու, եսիր կ'անեն,
Թողույ մի՛ մերայ, թողույ մի՛ տանեն:

Միտդ բի, մերայ, բու մերութիւնը,
Մի՛ թողայ քաշեմ էդ գերութիւնը,
Շատ դժար բան ա օտարութիւնը:

(Ազգ. Հանդ. 1902, էջ 212-45):